

Karagözyan Eytamhanesinin

TARİHÇESİ

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ

ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

ՈՐԲԱՆՈՑԻ

(1913 - 1948)

Պատրաստեց՝ Թ. ԱԶԱՏԵԱՆ



1949

ԻՍԹԱՆԳՈՒԼ

362.5

A $\frac{\pi}{533}$

և

Կլամտան, Թ.

Հողամասայան Գարա-
կոպյան որբանոցի 18ր.

362.5

Կ

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ

ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՈՐԲԱՆՈՅԻ (ՇԻՇԼԻ)

1913-1948

Պատրաստեց՝

Թ. Ա. ԶԱՏԵԱՆ



ԻՍԹԱՆԳՈՒԼ 1949

A II
533



HERMON DIZGİEVİ
BECİD BASIMEVİ
1913-1914

HERMON DIZGİEVİ

BECİD BASIMEVİ



Ն Ա Խ Ա Ք Ա Ն



Ազնիւ աշխատանք մը կամ աղուոր ստեղծագործութիւն մը — հինէն ի վեր, կ'ըսուի, բանիմաց մարդոց կողմէ — իր արդիւնաբերութենէն եւ ծառ մը իր պտղաբերութեան աստիճանէն կը զնահառուին եւ իրենց գոյութեան իրաւունքը կ'արդարացնեն:

Արդ, բարեյիշատակ ՏԻԳԲԱՆ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆԻ եւ Գարակէօզեան գերդաստանի հիւթեղ արմատներէն եւ ճիւղաորումներէն ծընունդ առած, շատերէն մէկը եղող, այս համով հոտով պտուղը, Շիշլիի Ազգային մանչերու Որբանոցը, յաջողած է իր նպատակին ծառայել եւ կամ ուրիշ խօսքով, Բարերարին ու կտակակատարներուն փափաքն ու կամքը իրականացած են գոհացուցիչ կերպով:

Այս համեստ Յիշատակարանին էջերը, մասամբ եւ մօտաւորապէս ցոյց պիտի տան, քայլ առ քայլ, մեր որբասնամ հաստատութեան ուղղութիւնը, պիտի պատկերացնեն անոր արդիւնաւոր գործունէութիւնը սկզբնական շրջանէն սկսեալ եւ միւսնոյն ժամանակ պիտի պատասխանեն բնականաբար վերոյիշեալ հարցումներուն:

Շիշլիի պատմական Ազատութեան հովասուն եւ կազմուրիչ բարձունքը առաջնորդող ճամբուն կողքին հիմնուած Գարակէօզեան Որբանոցը 35 տարիներու գոյութեան շրջանին, հազարաւոր մանչուկներ պատուարած, խնամած ու կրթած է: Մեծամասնութեամբ, ամայի ճամբաներէ, անապատներէ, քաղաքի ու գիւղերու փողոցներէն հաւարուած եւ ներկայացուած տղաք, մասամբ կիսաւարտ, մասամբ ընթացաւարտ, մեկնած են: Գրեթէ բոլորն ալ, ըլլայ մեր հրկրին մէջ, ըլլայ օտար հորիզոններու տակ կը զբաւեն պատուաբեր դիրքեր:

Ներկայիս 45—50 տարիքի մէջ նախկին սաներ, անդրանիկ շրջանաւարտներ եւ իրենց յաջորդները, բարեկեցիկ վիճակով ամուսնացած, օրինակելի հայրեր, ամէն առիթով, իրենց կապն ու կապակցութիւնը, սէրն ու աղապատանքը կը յայտնեն երախտօք: Եւ աստիցմէ, մեծագոյն մասը, մօտէն ու հեռուէն, բերանացի կամ

զբաւոր կը յիշէ խանդաղատանքով գիշերօթիկ կրթական յարկին տակ անցուցած մանկութեան եւ պատանակութեան երանելի օրերը: Այսպէս, տուն՝ քաղցրիկ տուն մը, դպրոց՝ անուշիկ դպրոց մը եղած է մեր Հաստատութիւնը, ծնողազուրկ եւ չքաւոր մանչուկներու համար:

Խնամակալութեան անդամները, ի մի մարմին, աւանդապահի եւ մատակարարի կրկնակ պատեաններէն պահ մը ձերբազատուած, փափաք յայտնած են հրատարակութեան յանձնել Գարակէօզեան Որբանոցի հակիրճ եւ ամփոփ պատմութիւնը, օգտուելով վաւերագիրներէ եւ ատենագրութիւններէն:

Այս աշխատութեան խմբագրութիւնը յանձնուած է ծանօթ գրագէտ Պ. Թորոս Ազառնանի, որուն կը յայտնէ ինամակալութիւնը շնորհակալութիւններ:

Մխիթարական անկեղծ զգացումներով պէտք է յիշատակել իրերայաջորդ ինամակալութիւններու ընդգրկած բժականդիր, շրջանայեաց, փափկավարական յաջող մատակարարութիւնը:

Ուղղամիտ եւ մեթոտիկ յանձանձումներու շնորհիւ, Գարակէօզեան Որբանոցը, ցարդ վայելած է Պետական իշխանութեանց, Էվգաֆի, Կրթական Տնօրէնութեան եւ բոլոր կարգապահական սպասարկութեանց բարեսցակամ աջակցութիւնն ու վստահութիւնը:

Բարեյիշատակ Գարակէօզեան Տիգրան Աղայի հիմնած Շիշլիի Ազգային մանչերու Որբանոցը, երկու համաշխարհային պատերազմներու ստեղծած աննախընթաց խոչընդոտներու դիմադրելէ յետոյ, այսօր կը թեւակոխէ հիմնարկութեան 36 ամեակի հանգրուանը, առողջ վիճակի մէջ:

Միշտ օրհնենք յիշատակը մեծ բարերարին եւ իր ընտանեկան հանգուցեալ գործակիցներուն: Մաղթենք, որպէսզի Գարակէօզեան կրթարանը, խաղաղ մթնոլորտէ մը շրջապատուած, անփոսնգ շարունակէ եւ տեւականացնէ իր փրկարար եւ դաստիարակիչ որբախնամ առաքելութիւնը:

Մաղթենք նաև, որպէսզի մեր ՈՐԲԵՐՈՒՆ ՏՈՒՆԸ, հովանաւորուած Պետական օրէնքներով, արժանանայ անընդհատ մեր բարեսիրտ համայնքին գուրգուրոտ, կենսատու եւ անհրաժեշտ լայն օժանդակութեան:

ՏՕԲԹ. Ա. Ն. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

Համար 1267

Ազնուաշուք Տխարֆ

Առեւն սպէս եւ Անդամֆ Պոս. Խնամակաշուքեան

Գարակիօզեան Ազգ. Որբանոցի

Շիշի (Պէյոզլու)

Հաստատութեանդ հիմնարկութեան 35 ամեակին նուիրուած Յուշամատենի մը հրատարակութեան ձեռնարկուած ըլլալը ուրախութեամբ իմացանք:

Իսթանպուլահայ կրթական կեանքին փայլուն շրջանն եղող ժ. Դարու երկրորդ կիսուն վերջերը՝ դաստիարակութեան ամէն պահանջներուն համապատասխան որբանոցի մը գոյութիւնը այլեւս խիստ զգալի եղած էր:

Ճիշդ այդ միջոցին էր որ ազգասէր եւ բարեսէր պատուական անձնաւորութեան մը՝ բարեաց յիշատակի արժանի Տիգրան Գարակէօզեանի կտակով լիուլի իրականացաւ այդ որբանուէր հաստատութիւնը: Վեհոգի բարերարին յաւէտ ողբալի կորուստը, եղեռնական մահը երբ մէկ կողմէն՝ ամէնուս սիրտը կը մորմոքէ միշտ, միւս կողմէն՝ իր անունով կառուցուած հոյակապ կոթողը սփոփանք մը կ'առթէ իր ազնիւ գերդաստանի անդամոց եւ երախտապարտ հայ ժողովուրդին:

Անշուշտ է որ՝ անմահ բարերարին հոգին հրճուանքի մէջ է միշտ, երբ իր շնորհիւ 35 տարիներէ ի վեր հազարաւոր բախ-

տազուրկ որբեր անցան իր հաստատութեան հոգածու եւ խնամոտ հովանաւորութենէն, եւ անոնք կազմեցին խոստումնալից եւ օգտակար ընտանիքներ, ամրապնդող եւ զօրացնող մեր ընկերական եւ տոհմային կառուցուածքը:

Երախտապարտ ենք ա՛յն պատուական եւ ազնիւ ազգայնոց, որոնք ՅՃ տարիէ ի վեր, իբր խնամակալ մեծ անձնուիրութեամբ եւ զուբզուրոտ ջանքերով վարեցին Գարակէօզեան որբանոցը, որուն բարգաւաճման համար այնքան հոգեւին նուիրուած է նաեւ ներկայ Պատ. Խնամակալութիւնդ եւս:

Պարտք մըն է սեպուհ եւ նուիրական՝ այս առթիւ հաշակել թէ, բարեյիշատակ Բարերարին թէ՛ հանգուցեալ եւ թէ՛ ի կեանս եղող հարազատներն ու զարմիկները, միշտ զուբզուրանքով վերաբերուեցան իրենց ազնիւ Ազգատոհմին անունը կրող Հաստատութեանդ հանդէպ:

Կը մաղթենք որ՝ Տէրը անշարժ եւ հաստատուն պահէ մեր ամէնուս սիրելի հաստատութիւնդ եւ տայ ուժ եւ կարողութիւն Պատ. Խնամակալութեանդ եւ պարգեւէ շնորհք՝ եւ ոգի ջանասիրութեան մեր սիրեցեալ տղայոց:

Ողջունիւ հայր սկսն սիրոյ եւ օրհնութեանք

Մեանք Աղօթարար

Պատ. Տեղապահ Հայոց Թուրքիոյ

ԳԻՈՐԴ ԱՐՔ. ԱՐՍԼԱՆԵԱՆ



ՏԻԳՐԱՆ ԳՈՐԱԿԷՕՋԵԱՆ

ԿՏԱԿԱՐԱՐ ՏԻԳՐԱՆ ԱՂԱ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ

Ե Ի

ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Իսթանպուլահայ կրթական ու բարեսիրական հաստատութիւններուն մէջ բաղդատաբար շատ քիչ բան խօսուած ու գրուած է Գարակէօզեան Ազգ. Որբանոցին եւ երկար տարիներէ ի վեր անոր կատարած նախախնամական դերի մասին:

Արդի իննամակալութիւնը, նախածնունարկ ըլլալով Յուշա-



Սուրբան Տուսու

մաստանին այն միւս ակահաւոր դէմքերը, որոնց բոլորին բարեգործութեան կենդանի կոթողն է Շիշլիի օգասուն ու դալարագեղ բարձունքին կանգնող Գարակէօզեան Որբանոցը:

մատեանի մը հրատարակութեան, պատեհութիւնը կ'ընծայէ վերջապէս հանրային լուրջ ուշադրութեան ու հետաքրքրութեան առարկայ դարձնելու այս կարեւոր հիմնարկութիւնը, ուր 35 տարիներէ ի վեր պատասխարուած են հարիւրաւոր ծնողագուրկ եւ անպաշտպան պատանիներ, տոհմային դաստիարակութիւն եւ ուսում ստանալով իր հիւրընկալ յարկին տակ:

Այս հոյակապ հաստատութեան կրթական անցեալ կեանքը պատկերացնելէ առաջ, անհրաժեշտ կը համարինք ծանօթացնել անոր հիմնադիր բարերարը՝ Տիգրան Ազգ Գարակէօզեանն ու իր բարեհամբաւ գեր-



ՀԻՄՆԱԴԻՐ - ԲԱՐԵՐԱՐ ՏԻԳՐԱՆ ԱՂԱ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ


(Ընդօրինակում՝ հաստատության ժողովարանին մեջ զեկեղումս
մեծադիր իշխանկարէն. գործ՝ ծակօր ցկարիչ Փանոս Թերչեմեզեանի)

Մերձաւոր Արեւելքէն դէպի Արեւմուտք ծաւալող հայ գաղթականական շարժումի ընթացքին Թուրքիոյ մայրաքաղաքը եկած հաստատուած են նաեւ Գարակէօզեան գերդաստանին նախահայրերը, որոնցմէ ծանօթ հնագոյն դէմքն է Յովհաննէս Աղա Գարակէօզեան: Իր կողակիցը եղած է Սուլթան Տուտու, բարեպաշտ ու միանգամայն պատկառազու կին մը:

Այս ընտանիքին զաւակներն են հանրածանօթ Գարակէօզեան հարազատները:

Յովհաննէս Աղա արհեստով վարպետ արեւաֆէշ էր: Եւ որովհետեւ արծաթեայ ու ոսկեթել բանուածքներու ձեռարուեստը ընդհանրապէս Վանեցիներուն յատուկ է, կ'ենթադրուի թէ այդ շրջանէն եկած են Գարակէօզեանները: Թէեւ ուրիշներ աւելի հաւանական կը նրկատեն որ այնոնք Ակնայ երեւելի գերդաստաններէն են եւ այդ կողմի գաղթականութեան մաս կը կազմեն:

Ըստ Յ. Գ. Մրմրբեանի Յովհաննէս Աղա Գարակէօզեան նախ պաշտօնեայ եղած է նշանաւոր Պասմանի Անէմօղլու Պետրոսի բով եւ իր



Գրիգոր Գարակէօզեան (Երիսասարդութիւնը)

ծնունդը և թե՛ ան շնորհիւ նիւթական փայլուն դիրքի մը տիրացած: Անէ՛մօղլու երբ իր պատկանելի հարստութեան հետ եւրոպա կը հաստատուի, Գարակէօզեանները անոր վաճառատունը գնելով կը հիմնեն իրենց Առեւտրական Տունը:

Բարերար Տիգրան Աղա Գարակէօզեան ծնած է 1834ին Իսթանպուլի Մուսալլահ թաղը: Տօքթ. Ա. Մեղպուրեանի պատրաստած հիւղագրութեան համաձայն, Յովհաննէս Աղայի չորրորդ զաւակն էր ան: Իր մեծ եղբայրներն էին՝ Նազարէթ, Բիւզանդ եւ Գրիգոր: Իսկ իրմէ աւելի փոքր եղած են՝ Կարապետ եւ Յովսէփ: Ունեցած է նաեւ երեք քոյրեր՝ Նեկտար, Էլմօնիկ եւ Էֆթիկ:

Գարակէօզեան եղբայրները իրենց ուսումը ստացած են Գումգափուլի Մայր վարժարանին մէջ, որ այդ միջոցին Իսթանպուլի հայ համայնքին բարձրագոյն ուսումնարանը կը համարուէր:

Տիգրան Գարակէօզեան, բնաթուր ձիրքերով ու բացառիկ ընդունակութիւններով օժտուած երիտասարդ մըն էր: Ինքնաշխատութեամբ եւ մասնաւոր դասերու հետեւելով կը յաջողի տիրանալ եւրոպական մէլէ աւելի լեզուներու: Այսպէս, հայերէնի եւ թուրքերէնի չափ հմուտ էր ան ֆրանսերէն եւ անգլիերէն լեզուներուն: Իսկ 50 տարեկանին գերմաներէն եւս կը սորվի: Միեւնոյն ատեն քաջ տոմարակալ էր եւ տպածոներու առաջնակարգ նկարիչ: Ունէր վեհանձն հոգի մը, աննկուն նկարագիր եւ զօրեղ կամք:

Եղբօրը Կարապետի հետ հիմնած առեւտրական ու սեղանաւորական Տունը՝ իր կանոնաւոր աշխատութեամբ շուտով պատուաբեր դիրք մը զբաւեց միջազգային առեւտրական հրապարակին վրայ: Մանչէսթըր, Գալթէթ եւ այլ կեդրոններ մասնահիւղեր հիմնելով, մասնաւորաբար մանիֆակտուրայի գործով, անոնք ընդլայնեցին իրենց գործառնութիւնները:

Տիգրան Գարակէօզեան գրականութեան հակում ու սէր ունեցած է: Հայ եւ օտար մշակութային կեանքին հետեւած է միշտ: Գրելով քաջուած կ'ապրէր ու չէր ուզեր երեւիլ հանրային հաւարավայրերու մէջ: Բացի Ասնասարեան Խնամակալութեան անդամակցութենէն, որ 3 տարի տեւեց (1893—96), ունէ հանրային գործունէութիւն չէ ունեցած:

Մինչդեռ աւելի գործօն ծառայութիւններ ունեցած են իր երկու եղբայրները, որոնցմէ Գրիգոր Գարակէօզեան 1870ական թուականներէն սկսեալ, զանազան շրջաններու (1872—1879 եւ 1903) անդամակցած է Բաղար. Ժողովին եւ զանձապետութիւնը

վարած է տարիներ Պէյօղլուի Ա. Երրորդութիւնն եկեղեցւոյ Կալուածոց Հոգաբարձութեան: Գտնուած է նաև Ազգ. Կեդր. Պարտուց Բարձման Ժողովին մէջ: Գրիգոր Գարակէօզեան սեղանաւորութեամբ զբաղելով հանդերձ, տարիներ հայթայթիչը եղած է Սպարապետութեան ու Ծովային Նախարարութեան եւ Օսմ. կառավարութենէն պատուուած է Միւթէմայիզի աստիճանով, Ա. Մէհիտիյէ եւ Պ. Օսմանիյէ պատուանշաններով: Իսկ Կարապետ Գարակէօզեան 1871—2ին Պէյօղլուի Կալուածոց եկամտից եւ Պարտուց Բարձման յանձնաժողովներուն անդամակցելէ զատ, նոյն թուականներուն վարած է Ազգ. Ընդհ. Ժողովի Գ. ատենապետութիւնը եւ մասնակցած՝ Գաւառական Յանձնաժողովի աշխատակցութեանց: Եղած է նաև անդամ Բաղ. Ժողովին:



Եղուարդ Գարակէօզեան

Գարակէօզեան հարազատներէն Բիւզանդ, Գրիգոր եւ Տիգրան ամուրի մեռած են: Իրենց երիցագոյն եղբոր Նազարէթի (1818—1887) զաւակներն են Թազուր, Եղուարդ եւ Արամ Գարակէօզեանները:

Թազուր Գարակէօզեան (1867—1918) Պէրպլերեան վարժարանէն 1883ին վկայուելէ ետք իր եղբոր Եղուարդի հետ կը հիմնէ սեղանաւորական դրամատուն մը: 1894ին կ'անդամակցի Էսսեան վարժարանի Կրթական Հոգաբարձութեան, իսկ 1895ին զանձապետութիւնը կը վարէ Պէյօղլուի Թաղ. Խորհուրդին: Ճամբորդած է Եւրոպա եւ իր ուղեւորական տպաւորութիւնները լոյս ընծայած է «Մասիս»ի եւ «Երկրագունտ»ի մէջ:

Եղուարդ Գարակէօզեան (1870—1945) Ռօսպէթ Գօլէճի ընթացքը աւարտելէ յետոյ կ'ընդգրկէ սեղանաւորական ասպարէզը:

Նոյն ատեն կ'ունենայ հանրային զորքունէութիւն: 1906ին կ'անդամակցի Նախօտից Յանձնաժողովին, իսկ 1907ին՝ Կեդրոնականի Խճամակալութեան: Կազմակերպիչներէն կ'ըլլայ Ղալաթիոյ Գարաց Դասին: Որպէս Ընդհ, ժողովի անդամ մէկէ աւելի շքաններու, իր մասնակցութիւնը կը բերէ Վարչական ժողովին եւ Տեսուչ Խորհուրդներու: Վարած է նաեւ ատենապետութիւնը Հ. Բ. Ը. Միութեան տեղական մասնահիւղին: Իսկ Գարակէօզեան կտակի իրազորման եւ որբանոցի հիմնարկութեան թուականներէն սկսեալ Գարակէօզեան որբանոցէն անբաժան եղած են իր անունն ու զորքունէութիւնը՝ որպէս անդամ Կտակային Յանձնաժողովին, Խճամակալութեան (անդամ - գանձապետ) եւ հիմնադիր (Մէարիփէն) նոյն հաստատութեան:

Իսկ Արամ Գարակէօզեան, որ այժմ Եւրոպա կը գտնուի եւ ծանօթ է նաեւ բանասիրական ու լեզուական նիւթերու շուրջ իր շահեկան գլուխներով եւ տեսութիւններով, բաց ի առեւտրական կեանքէն, ունեցած է հանրանուէր զործօն ծառայութիւններ, տարիներ վարելով մանուաւնդ խնամակալի



Վահայիկ Հաւնը

պաշտօնը Գալփեան արջկանց որբանոցին: Այս հաստատութեան նուիրուած պատմական յուշամատեններէն մէկուն մէջ (1866—1934) կը հանդիպինք յետագոյ տողերուն. «Հաստատութեան պատմութեան եւ անոր վերածնունդի զործին հետ կապուած է նաեւ անունը Տիար Արամ Գարակէօզեանի, որդի Տիկին Վասիլուհի Գարակէօզեանի, որուն նուանդուն աջակիցը եղաւ առաջին օրէն իսկ, անկեղծ նուիրումով: Արդարեւ, Արամ Գարակէօզեան ոչ միայն աջակից՝ այլև հեղինակ ու առաջնորդ եղաւ այս հաստատութեան մէջ կատարուած բոլոր բարեկարգական ու վերաշինութեան ձեռնարկներուն:»

Կարապետ Գարակէօզեան, զործակից եւ հղբայր Տիգրան Գարակէօզեանի, ամուսնացած էր Ակնցի Մկրտիչ Փափազեանի արջկան Սրբուհիի հետ, որուն եղբայրն է Լեւոն Պէյ

Փափազեան, ծանօթ իր հանրանուէր ծառայութիւններով: Կարապետի զաւակներն են Արշակ եւ Միհրան Գարակէօզեան եղբայրները, որոնք այժմ Ամերիկա հաստատած են իրենց առեւտր. տունը. ծանօթ են հայ իրականութեան մէջ իրենց բարեգործութիւններով եւ հանրային ծառայութիւններով: Երկուքն ալ վկայուած են Ռօպէրթ Գօլէնէն եւ կանուխէն նուիրուած առեւտրական ասպարէզին՝ իրենց հօշուդքով: Տիգրան Գարակէօզեանի շունչին տակ: Արշակ Գարակէօզեան Օրմանեան Ա.ի Պատրիարքութեան շրջանին անդամակցած է Անասարեան խնամակալութեան (1905) զանձապետի պաշտօնով, Բաղ. ժողովին (1906—7) եւ Ս. Փ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան (ատենադպիր). իսկ այժմ ատենապետն է Հ. Բ. Լ. Միութեան Վարչ. կորհուրդին: Միհրան Գարակէօզեան դժբախտութիւնը ունեցաւ կորանցնելու 14 տարեկան իր զաւակը՝ Հաուրրտ, որուն ի յիշատակ Իոթմանպուլի մէջ հիմնեց «Հաուրրտ Գարակէօզեան Հօմ»ը (1922), որ յետոյ փոխադրուեցաւ Ֆրանսա: Իր եղբօրը պէս գտնուած է բարենպաստակ ձեռնարկներու եւ հիմնարկութիւններու մէջ եւ վարած՝ զանձապետութիւնը Հ. Բ. Լ. Միութեան: Արշակ եւ Միհրան Գարակէօզեան եղբայրները իրենց գուրգուրանքին առարկայ ըրած են միշտ Շիշլիի Գարակէօզեան որբանոցը:



Կարապետ Գարակէօզեան

Գարակէօզեան եղբայրներու կրտսերագոյնն է Յովսէփ աղա, որուն զաւակն է Տիար Սարգիս Գարակէօզեան, որ ներկայիս կ'անդամակցի Գալֆանեան որբանոցի մատակարար մարմնին եւ պատուակալ անդամ է Շիշլիի Գարակէօզեան Ազգ. որբանոցի խնամակալութեան:

ԿՏԱԿԻՆ ԾՆՈՒՆԴ ՏՈՒՈՂ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Ե՞րբ, ի՞նչ պարագաներու տակ ծնունդ առած եւ իրագործուած է Գարակէօզեան կտակը:

Որբանոցին հիմնարկութենէն շատ առաջ, վաղամեռիկ Բիւզանդ Գարակէօզեան, իր կենդանութեանը, Բարեգործական հաստատութիւն մը հիմնելու ու զայն ազգին նուիրելու գաղափարը կ'ունենայ առաջին անգամ եւ իր մտադրութիւնը կը յայտնէ եղբայրներուն: Անոր մահէն յետոյ, 1874ին, իր միւս եղբայրները յանձնառու կ'ըլլան հանգուցեալին ժառանգական րաժինը (շուրջ 20,000 ոսկի) յատկացնել առևտրական վարժարանի մը հաստատութեան:

Ներսէս Պատրիարք Վարժապետեան անոնց այս ազգասիրական բաղձանքին ընդառաջ կը փութայ թէեւ, սակայն Կարապետ սւ նազարէթ Գարակէօզեաններու յաջորդական մահերը առևտրական հրապարակը ցնցող արժեթուղթերու անկումը

եւ այլ անակնկալներ² արգելք կը հանդիսանան նպատակին փութով իրագործման:

Տարիներ ետքն է որ Տիգրան Գարակէօզեան իր եղբայրներուն հետ համախորհուրդ, ընտանիքի բոլոր անդամներուն ջերմ բաղձանքը օրինական կրտակագրով մը իրականացնելու գաղափարը կ'ունենայ:

Օրմանեան Ս. որ իր «Ազգապատում»ին մէջ (Գ. Հատոր էջ 5185 — 6) պատմականը կ'ընէ Գարակէօզեան կտակին, այս մասին կը գրէ. «Տիգրան իր սեփական հարստութեան մէկ երրորդը կը թողուր վաճառականական վարժարանի մը կառուցման եւ պահպանութեան,



Վրչակ Գարակէօզեան

վերանորոգելով Բիւզանդի թողածին մասին յղացուած գաղափարը:»

Իսկ բարերարին մահուան պարագան սա տողերով արձա-

նագրած է Օրմանեան Ս. («Ազգապատում» Գ. հատոր էջ 5047) արտագրելով օրուան մամուլէն. «Տիգրան Գարակէօզեան բարեսէր եւ բարեգործ անձնաւորութիւն եւ նշանաւոր կտակով մը բարերարի փառքին արժանաւոր, դաւաճան գնդակին զոհ զնաց 1896 Յնվր. 11ին : (*)

Տիգրան Աղա Գարակէօզեանի եղբրական մահուան կը յաջորդէ երկրորդ կսկծալի պատահար մը, գերդաստանին կրտսեր անդամ Յովսէփ աղա Գարակէօզեանի աղիտալի վախճանը: Գրիգոր Գարակէօզեան կտակակատար կը կարգուի եւ տարիներ կը տեւեն իր բանակցութիւնները ազգ. իշխանութեանց հետ: Վերջապէս համաձայնութիւն կը գոյանայ եւ կ'որոշուի 20 հազար ոսկի կտակադրամով թէ՛ հասութեան կալուածներ զնել եւ թէ՛ կառուցանել Գարակէօզեան որբանոցը:

Գրիգոր Գարակէօզեան կը մեռնի 1905ին եւ կը թաղուի Շիշլիի գերեզմանատունը րնտանեկան դամբարանին մէջ: Մամուլը դրուատիքով կ'արձանագրէ անոր հանրանուէր ծառայութիւնները:

Գարակէօզեան կտակը մարմին կ'առնէ Օսմ. Սահմանադրութենէն յետոյ: Հասութեան կալուածները (Խըտիվիալ Բալաս, եւլն.) զընուած էին: Նոյնպէս որբանոց - արհեստանոցի մը հիմնադրութեան արտօնութիւնը առնուած էր արդէն: Շէնքը պիտի կառուցուէր Եէտիգուլէի Ս. Փ. Հիւանդանոցին մերձ թափուր գետնի մը վրայ եւ հոն պիտի փոխադրուէին Ս. Փրկչեան որբանոցին սաները:

Ազգ. Կեդր. Վարչութեան կողմէ ընտրուած կտակային Յանձնաժողովը, որ յետոյ գրեթէ նոյն տարրերով առաջին Խը-




Միւրան Գարակէօզեան

(1) Արեւելք, 1896 թ. 3573:

Handwritten notes: $\frac{H}{S33}$





Գարախեղեղեան Գերդասանին դամբարանը (Շիրազի Հայոց գերեզմանասան մեջ)

նամակալութիւնը եղաւ որբանոցին, կարգ մը անպատեհութիւններ նկատի առնելով հրաժարեցաւ այդ նախնական գաղափարէն. հետամուտ եղաւ Իսթանպուլի ուրիշ արուարձաններէն մէկուն մէջ գտնելու նպատակայարմար շէնք մը եւ օր առաջ իրականացնելու հնգգ. բարերարին կամբը: Վերջապէս Պէպէքի մէջ գտնուեցաւ ընդարձակ շէնք մը, նոյնիսկ գոլեւեցաւ. սակայն օրինական գործողութիւնները չբացնելէ առաջ անոր տեղ արդէ հոյակապ շէնքը գնելու պատեհութիւնը ներկայացաւ: Պատրիարքարանի կողմէ իսկոյն ձեռնարկներ եղան պատկան իշխանութեան մօտ, ջնջել տալու համար նախապէս առնուած



Օրմանեան Սրբազան

արտօնութիւնը եւ ըստ այնմ կատարելու նոր հողամասին ու որբանոցի վերածուելիք շէնքին փերաղի գործողութիւնը:

Իսկ Կայսերական Ֆէրմանին մէջ ինչպէս կը տեսնուի, Գարակէօզեաններու կողմէ բարերար Տիգրան Գարակէօզեանի եղբոր հնգգ. նազարէթի այրիին՝ Տիկին Վասիլուհիի(*) անուան կատարուած է այդ փոխանցման գործողութիւնը: Ֆէրմանին մէջ որոշակի ու մի առ մի նշանակուած են հայ համայնքին համար հաստատուած որբանոցի շէնքին ու մուտքի հողամասին տարածութիւնն ու արժեզինքը եւ կտակին գործադրութեան նախընթաց պարագաները:

Որբանոցին բացումէն տարի մը յետոյ կարելի եղած է ստանալ այդ Ֆէրմանը, ինչպէս կ'երեւի ներքեւի թուականէն (1914):

(*) Մայր՝ Թագուոր, Եղուարդ եւ Արամ Գարակէօզեան Լեքայրներու եւ առեւտրական ու գրագեօս Գառնիկ Ֆենքզեանի կողակից Տիկ. Ազնիւի:



Handwritten text in Armenian script, consisting of approximately 12 lines of dense, cursive writing. The text is contained within a rectangular border. At the bottom left of this section, there is a small circular stamp or seal.


Գարուկեօղևան Ռոբանոցի նորակերտ շէնքին
Կաշերական հրովարտակը

ՈՐԲԱՆՈՑԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԻՆ ԹՈՒՐՔԵՐԷՆ ՀԱՐԱԶԱՏ ՊԱՏՃԷՆԸ

«Ծախար իւր խմերս իւր փրսւմ, մոռփեմե՛ս իւր փռայերս իւր փխաւմ: Զեւթիւր զաւր վեղ ինքերսւմ, սանխայ իւր իզգ վեղ ինքիշաւմ եւ մոխարսս պի մեզգիսի իննայեք իւր Մեղիփիւր աշեա, միտի մերսանը փրսւմըն՝ սան:

«Եհեհիւր Էմիճի վե Խարանկուր ղիւայեքի վաշի վեփիւրի ձեւնիւր փաշս սանե իզպարունու վե իփքիխար իւր եաշի վեղ եազիւմ, մխարեհմայի մեւնի իւր մեաշի վեղ մեփախար, եւ մոխարսս պի մեզգիսի իննայեքիւր մեղիփիւր աշեա Պեյօղլու մխարեաւրրըրփը Թանխին պեյ սանե ուրուվիւնու վե զաւիւր զուսարիւր մխարիւնին եվլեա վիւրաքիւր մխարիւնինին մասե՛ն իւր փազը վեղ եազիւնրափի իւր աշեան իշշերիսք վե՛սին, վարիսի ուրում իւր ենպիյս վեղ մխարեւիլին եւ մոխարսս պի մեզգիսի իննայեքի մեղիփիւր մույն, Ղաւարսս զաւրսը մեվլանու Պեհաե՛սին եփե՛նսի զիյեք փեզայիւնու, քեվզըրի րեփիսի Հիւմայունում վասըլ օլընազ, մարում օլափի:

«Եե՛սի զուրե խարի՛նիսե փեաին, Էրեհե՛նի հասրահանեաի զուրպիսե պիւր արսայս մուզսսեւս իննասընս ռուխսսք վերիւնիւր օլարազ, եյբանհանեհին օրսսս իննասընս սարփը եազարսս, սնըն մազանընս զաիւմ օլնազ իւզրե Պեյօղլունսս, Եիւլիսե, Բեաղրսհանե հասսեաիսե փեային մա պահե՛ն արարքընսն եյբանհանե իքքիխասընս ռուխսսք իքպար հազընսս Էրեհե՛նի Բարիփիլիիսեհե վուզու պուլան իսքիսս իւզերիսե իհրս զունան քահգիզարը հալի օլարազ, մեաշերիսե եազարե՛ն 1325 սեհեաի շեհրի րեպի՝ իւր եվլիւրիսին օնունում կիւնիւ քարիսիւրի եւրը աշի մուհիպիսեհե, մահաշի մեզգիւրսե իննասընս ռուխսսք իքս զըլընըրը օլան եյբանհանե մազանընս զաիւմ օլնազ իւզրե, Եիւլիսե Բեաղրսհանե հասսեաիսե, մխարեվեփա Գարսիկօղեան Տիգրան եփեհիսինին հաշի հայարընսս քերփ վե քեպերրու եյլեմիւր օզուղու եազըս իլե՝ սանխայիսեհե պիւր իշքիւրս քեպս՝ աշի Օսմանիյեհե մխարեվեփա Գարսիկօղեան Եազարեք եփեհե՛ն զեվհեաի Վասիլունի հանըն եաւընս մխարեարե՛ն փերաղը իհրս իսիլե՛ն մխարերրե իփի եօնեօղու մա պահե՛ն արարքընսն եպիսիյեաի մխար վե զեմիսին մեհեքընեփեան Սուրբան Պայագիս Խան հազրեքըրի վազընսան մուզարսայս մեքուրք օղուպ, պեղ պին աշըր եիւզ զըրզ աշըր զըրս վիւսարիսե պուլունան արսասը, հաշի հազրսս, իւր եիւզ օրուզ օզուզ պին դուրուր զըլեքիսե պուլունսնուղու վե պիւնասընըն քուլե՛ն եիւզ մեքրօ սեփսե՛ն սանքիւնքրօ վե արգե՛ն իփի նիւայեքըրիսեհե պեղըր վե վասարընս զարիպ ազասընը օզուզ, վե քանան վասարսան եիլիւրմի մեքրօ եյլի սանքի-



Կարսի կողման նրբանցի մուսի պարսեգին պերսը

մեքո վե իրբիստեն օն պիր մեքո նեամեքիենե իւչ սարն իւ-
գերիենե ֆեարկիր օյարագ ինչս իսիլնիչ օյսուդու, վե պուևուն էյ-
քանկանե իրբիսագրեսս մանգուր օյնսրդր անչաչրնրչ օյսուդուն-
սան, Խագանք մի շարունիլիլի վագգրեսան օյն արուսյս գրչմեքի
հագրուսրնրն պիենե օնու նիսպիթիենե վագգր կանրնա մուգասայի
գեւիեն քանկիս օյնենագ վե պերիենի մուհարրեր մուգասենա
եքեի գու յե խարիենե ինչսար հագրեսս քասիր գրննրչ, ֆագսր
օրսսս ինչասարնեսան ֆերուդարյե, անա մուգասիլ Շիլլիենեի մանալլի
մեգգիւրն էյքանկանե իրբիսագր իրբիսարնեսան նուչի պիքասայի
նիսֆիս գայնանրչ, օյն մեգգիւր կերր ոչի նեչպ վե իրբ:այ էսիլմեք
իւգրե մանալլի մեգպուրուն էրենեի նեւասրը իչիւն էյքանկանե

ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ԱԶԳ. ՈՐԲԱՆՈՑ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Շ Ր Ջ Ա Ն

(1913 - 1919)

1. ՈՐԲԱՆՈՑԻՆ ՇԷՆՔԸ ԵՒ ԱՆԴՐՄԱՆԻԿ ՍՍՆԵՐԸ

Շիշլիի Գարակէօզեան որբանոցը մասամբ շարունակու-
թիւնը կարելի է համարել Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի շրջափա-
կին մէջ գոյութիւն ունեցող Ս. Յակոբայ ազգ. երկսեռ որբանո-
ցին, որ զանազան անուներով փայլուն շրջաններ բոլորած է
անցեալին մէջ, ինչպէս ցոյց կուտան սոյն բարեսիրական հաս-
տատութեան պաշտօնական տեղեկագիրները(*):

Հնգց. Տիգրան Գարակէօզեանի կտակը իրականանալէ ան-
միջապէս յետոյ, կտակային Յանձնաժողովը կը լուծուի եւ
Պատրիարքարանի Խառն Ժողովը 1912ին կը կազմէ ուրոյն Խը-
նամակալութիւն մը հետեւեալ կերպով.—

Մկրտիչ Մանուկեան
Յարութիւն Արսլանեան
Եղուարդ Դարակէօզեան
Տօք. Գրիգոր Դաւիթեան
Յակոբ Համամեան
Ներսէս Օհանեան
Յակոբ Յակոբեան

Նորակազմ Խնամակալութիւնը եռանդով կը ծնունարկէ գոր-
ծի եւ Հիւանդանոցի Հոգաբարձութեան հետ համախորհուրդ

(*) Ըստ Բիւզանդ Բեյեանի (Պատմութիւն Ս. Փ. Հիւանդանոցի
Հայոց ի Կ. Պոլիս, 1888), 1851 Ապրիլին Գերագոյն Ժողովի որո-
շումով Եփեսոսէ կը հաստատուի նախ վարդապետանոց մը, որ 1858ին
«Ժ.սո.սեգաւորաց Ծեւարան» անունը կ'ստանայ, յետոյ «Պեղնեան
վարժարան» կը կոչուի (1870), իսկ 1878էն ի վեր ծանօթ է Ս. Յա-
կոբայ ազգ. որբանոց անունով:

անհրաժեշտ կարգադրութիւնները կ'ընէ Եւտիգուլէէն նորաբաց Որբանոցը փոխադրելու 100է աւելի որբեր:

Ասկայն Որբանոցին շէնքը, որ նախորդ սեփականատիրոջ Տօթթ. Բլէսքօթի կողմէ բուժարանի համար կառուցանել տրբուած էր, թերաւարտ էր դեռ: Զայն ձեւափոխելու եւ գիշերօթիկ կրթական հաստատութեան մը վերածելու գործը խնամակալութեան կողմէ կը յանձնուի ճարտարապետ Աւետիս Բէքմէջեանի, որ իր զաւկին Սարգիս Բէքմէջեանի հետ կը պատրաստէ ճարտարապետական յատակագիծ մը: Եւրոպայէն բերել տրուած յախճապակիներով արդիական ձեւի մը մէջ կը դրուի ներքին յարգարանքը: Լոյսի, ջեռուցումի, ջուրի ու բալնիքի սարքաւորումները կը լրանան եւ ամբողջ շինութիւնները կ'աւարտին 1913ի վերջերը:

Խնամակալութիւնը յաջորդական նիստերու մէջ կուտայ հետեւեալ որոշումները.—

Ա. Որբանոցին տնօրէնութեան պաշտօնին կոչել աշխարհագրութեան ու պատմութեան ծանօթ ուսուցչի եւ Էսասեան վարժարանաց նախորդ տեսուչ Գրիգոր Մարգարեանը:

Բ. Որբանոցին բացման հանդէսը յառաջիկային վերապահելով, Շիշլի փոխադրել Հիւանդանոց գտնուող որբերը եւ Սեպտեմբերի մէջ սկսիլ դասախօսութիւնները:

Գ. Պաշտօն յանձնել Տօթթ. Գ. Դաւիթեանի տեղւոյն վրայ քննելու որբերուն առողջական վիճակը:

Դ. Մինչեւ որբերուն տեղափոխութիւնը, տնօրէնութեան հետ համախորհուրդ, կազմել ուսուցչական մարմինը եւ ներքին պաշտօնէութիւնը:

Տօթթ. Գ. Դաւիթեան, յետ քննութեան, որբերու մտաւոր ու ֆիզիքական առողջութեան մասին տեղեկագիր մը կը պատրաստէ ու 1 Սեպտ. 1913ին զայն կը ներկայացնէ Խնամակալութեան: Իր տեղեկագրին մէջ նշանակուած են իւրաքանչիւր դասարանի աշակերտներուն ծննդավայրը, տարիքը, ծնողք կամ պաշտպան ունենալը, անոնց ամէն մէկին կշիռը, հասակը, լանջերու չափը եւ լն. իրենց ու շիմութեան, մտային կարողութեան ու ֆիզիքական վիճակի մասին ծանօթագրութիւններով: Իր եզրակացութեան մէջ ան կ'ըսէ.

«Ա. Յակոբայ ազգ. որբանոցին աշակերտները, ընդամէնը 101 հոգի, միառմի քննելով՝ տեսայ թէ մեծագոյն մասամբ առողջ եւ սրամիտ որբեր են, եւ եթէ շատեր տկար երեւոյթ մը ունին ատոր գլխաւոր պատճառներն են սնունդի անբաւարարութիւնը»:



Շիշլիի Գարակիզյան Ազգ. Որբանոցին անդրանիկ Սաները (1913)

կանութիւնը եւ խնամքի պակասը. այնպէս որ զիրենք փոխադրելով Շիշլիի Որբանոցը, լաւագոյն պայմաններու մէջ, ապահովաբար մտքով ու մարմնով շատ աւելի պիտի զարգանան:»

Ու կ'առաջարկէ արգելիչ պատճառներով որբերէն 16ը հեռացնել եւ 85ը միայն փոխադրել Շիշլիի նորաբաց ազգ. որբանոցը:

Խնամակալութեան կողմէ յարմար կը դատուի 7—8 տարեկան անչափահասները տարի մը եւս պահել աղջկանց որբանոցէն մէջ, եւ յառաջիկայ տարեշրջանին ընդունիլ զանոնք որբանոց: Խսկ ընդունուելիք որբերուն համար կը հայթայթուին մէկ մէկ ձեռք զգեստ, կօշիկ, գոգնոց, ֆէս, գուլպայ եւ այլ անհրաժեշտ կարիքներ:

Որբանոցին հանդիսաւոր բացումէն առաջ, անպաշտօն կերպով, 85 անդրանիկ սաներուն Շիշլի փոխադրութիւնը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 7ին:

Անոնք կը ժամանեն Շաբաթ երեկոյեան ժամը 4ին եւ կ'առաջնորդուին հաւաքաբար լսարանի սրահը, ուր խաչհանգիստ կը կատարուի ի ներկայութեան տնօրէն Գ. Մարգարեանի եւ կրթական պաշտօնէութեան. Խնամակալութեան կողմէ ներկայ կը գտնուին եղ. Գարակէօզեան, Ն. Օհանեան եւ Յ. Արսլանեան:

Տնօրէնը բարի գալուստ կը մաղթէ որբերուն «շնորհաւորելով անոնց այս նախանձելի բախտաւորութիւնը եւ յորդորելով զանոնք, որպէսզի իրենց համար կատարուած նիւթական ու բարոյական այս ամէն զոհողութիւններուն արժանաւոր հանդիսանան եւ արդարացին իրենց բարերարներուն եւ Ազգին ակնկալութիւնները» (Օրագր. Սեպտ. 7ի):

Յաջորդ օր բոլոր սաները կ'առաջնորդուին Պէյօղլուի Ս. Երրորդութիւնի եկեղեցին ու ներկայ կը գտնուին Պատարագի արարողութեան:

Քանի մը օր ետք, հիմնադիր-բարերար Տիգրան Գարակէօզեանի մեծադիր իւղաներկ կենդանագիրը (գործ՝ նկարիչ Փ. Թէրէմէզեանի) կը զետեղուի Որբանոցի Բ. յարկի սանդուխին զուլսը:

Որբերու թիւին վրայ կ'աւելնան հետզհետէ նոր արծանագրուող 28 սաներ եւս: Այնպէս որ առաջին տարեշրջանին դատարանական բաժանումով, որբանոցին աշակերտութիւնը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.—

Ա.	կարգ	34	հոգի	7—11	տարեկան
Բ.	»	31	»	8—13	»
Գ.	»	22	»	10—15	»
Դ.	»	10	»	12—15	»
Ե.	»	9	»	13—16	»
Զ.	»	7	»	14—17	»
		113		Գուժար	

2. ՈՒՍՈՒՑՉ. ՄԱՐՄԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԷՆՈՒԹԻՒՆ

1913—14 դպրոցական տարեշրջանին սկիզբը, Սեպտ. 15ին, նախակրթարաններու կրթական ծրագիր-կանոնադրին համաձայն, դասաւանդութիւնները կ'սկսին կանոնաւոր կերպով, Գր. Մարգարեանի տնօրէնութեան ներքեւ:

Ուսուցչական մարմինը կ'ունենայ հետեւեալ կազմը(*).—

1. Գրիգոր Մարգարեան (Պատմութիւն, Աշխարհագրութիւն եւ Քաղաքային Տնտեսութիւն),
2. Ֆուատ Նախիմ պէյ (Օսմաներէն լեզու),
3. Կարապետ Պօտիկեան (Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն եւ Պատմութիւն),
4. Յովհաննէս Թէլեան (Թուաբանութիւն, Իրագիտութիւն եւ աշխարհագրութիւն),
5. Յարութիւն Եայլրեան (Օսմաներէն, Ազգ. Պատմութիւն, Իրագիտութիւն եւ Թուաբանութիւն),
6. Թորգոմ Աբրահամեան (Հայերէն, Ֆրանսերէն եւ Աշխարհագրութիւն),
7. Մարտիրոս Չարխուկեան (Հայերէն, Իրագիտութիւն եւ Ազգ. Պատմութիւն),
8. Մարկոս Նաթանեան (Հայերէն՝ գրաբ., աշխարհ., եւ Պատմութիւն),
9. Արտաշէս Ապահեան (Երգ եւ Չայնագրութիւն),


(*) Թիւ 3, 4, 5, 6 եւ 7 մնայուն դասչնարակ եւ (երկուքը— 5 եւ 7— Ս. Յակոբայ Ռոբանայեան եկած), իսկ մնայեալները այցելու ուսուցիչ:

10. Շաւարշ Քրիսեան (Մարմնակրթութիւն),
 11. Գրիգոր Մխիթարեան (Գծագրութիւն),
 12. Միհրան Տէօբմէնեան (Գեղագրութիւն),
 13. Յարութիւն Սիրունեան (Ջեռական աշխատութիւն),
 14. Գառնիկ Գաննեան (Կրօնք եւ Չափագիտութիւն),
 15. Սարգիս Բէքմէզեան (Գծագրութիւն),
 16. Արշաւիր Սօլաքեան (Գիրք, Գեղագրութիւն),
- Իսկ ներքին պաշտօնէութիւնը կը բաղկանայ հետեւեւալներէն.
1. Սահակ Աէրկիճեան (Մատակարար),
 2. Յովհաննէս Կլամեան (Խոհարարպետ),
 3. Սեդրակ Կամպարեան (օգնական խոհարար),
 4. Վարդան Յովհաննէսեան (սպասաւոր),
 5. Պօղոս Իւրայէլեան (սպասաւոր),
 6. Ալիբսան Թէյխումաշեան (պարտիզպան),
 7. Կարապետ Միքայէլեան (գիշերապահ),
 8. Արտաշէս Առաքելեան (սեղանապետ),
 9. Ղազարոս Տիւմանեան ,,
 10. Ղեւոնդ Պօզարճեան (խոհարար-լուացարար),
 11. Օր. Մէնթուհի Ասլանեան (հանդերձապահուհի),
 12. Տիկին Սրբուհի Բաբէլեան (օգն. հանդերձապահուհի),
 13. Սիմոն Ռուբէնեան (հնոցպան),



Տնօրէն Գ. Մարգարեան մեթոտիկ աշխատութեամբ Որբանոցին Օրագրութենէն զատ, առանձին առանձին տոմարներու մէջ կ'արձանագրէ սաներու ամբողջական անուանացանկը՝ յարակից ծանօթագրութիւններով, հիւանդ կամ հրաժարած որբերու ցանկը, ընդունելութեան համար անհատական կամ պաշտօնական դիմումներու բնոյթը, կրթական ու ներքին պաշտօնէութեան փոփոխութեան կամ հրաժարման թուականներն ու պարագաները, նուիրատուներու անունն ու օժանդակութեանց քանակը, եւյլն.:

Հետզհետէ կը կազմակերպուի նաեւ հաստատութեան արհեստանոցի բաժինը, որ քիչ ատենէն առեւտրական ծանօթ տուններու համար խաւաքարտէ տուփեր, կանացի ձեռագործի պահպանակներ եւ այլ ապսպրանքներ կ'ընդունի ու կը պատրաստէ եւ ատկէ հասոյթ մը կ'ապահովուի Որբանոցին:



Իստանբուլի Պալատը (հեռուից դիտելով)



Որբանոցիև Ա. Տիտեկեր
ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Չնուական աշխատութեանց
ճիւղին վարիչը (Բատուայի Ար-
հեստից Համալսարանի շրջա-
նաւարտներէն) Յարութիւն Մի-
րունեան 5 տարուան ծրագրի
մը համաձայն (Տարրական Ա.
դասարանէն մինչև Բարձր. Ա.)
շարաթական 4 ժամ, արդիւ-
նաւոր պաշտօնավարութիւն մը
կ'ունենայ:

Տնօրէնութեան նախաձեռ-
նութեամբ կը կազմակերպուին
կիսամսեայ հրատարակային
դասախօսութիւններ եւ տղոց
պարտականութիւն կը տրուի
գրական, նկարագրական, պատ-
մական ընտիր հատուածն'րու
ընթերցում, կարդացածը բա-
ցատրել, արտասանել, նախա-
պէս տրուած ունէ նիւթ մը-

շակելէ յետոյ՝ զայն կարդալ, բացատրել եւ յայտնուած գա-
ղափարներուն հակառակը փաստել, եւայլն:

Տարեշրջանին սկիզբները կը հրաւիրուի նաեւ Տօրթ. Պօ-
ղոսեանը, որպէսզի պարբերաբար Որբանոց այցելելով ալքօլին
պատճառած սւերններուն մասին դասախօսէ աշակերտութեան:

Այս օրերուն կը զուգահէտի Գրերու գիւտին մեծ յոբելեանը
(Հոկտ. 7) որ տ'ղի կ'ունենայ Թաքսիմի թաղապետական պար-
տէզին մէջ եւ որուն Գառակէօզեան Որբանոցի սաներն ալ կը
բերեն իրենց մասնակցութիւնը՝ երգելով Թարգմանչաց Շարա-
կանը, Կոմրասս Վրդ.ի գ'իջուկ ել գերէն մէկը եւ ներսէս Մէզ-
պուրեանի «Ով Մեծասրանչ դու Լեզու»ն: Իսկ որբերէն մին
կ'արտասանէ Հ. Ղ. Ալիշանի «Այ իմ Լուսնակ» բանաստեղ-
ծութիւնը:

3. ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ԲՍՑՈՒՄ ԳԱՐՍԿԵՉՁԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ

Խնամակալութիւնը 29 նոյ. 1913ին բացառիկ նիստ մը կը գումարէ եւ անհրաժեշտ բոլոր կաշգադրութիւնները կ'ամբողջացնէ, հանդիսաւորապէս կատարելու համար Որբանոցին պաշտօնական բացումը:

Կ'որոշուի անձամբ Պատրիարքարան երթալ ու հրաւիրել նորրնտիր Պատրիարք Տ. Զաւէն Արք.ը՝ նախագահելու հանդիսութեան: Մասնաւոր հրաւերներ կը դրկուին պետական, օտար ու համայնքային պաշտօնական մարմիններու, մամուլին, կրթական ու բարեսիրական հասաստութիւններու եւ ծանօթ ազգայիններու:

Բացման հանդէսը տեղի կ'ունենայ 20 Դեկտ.ին Կիրակի օր ազգին հպարտութիւնը գգուող շքեղութեամբ:

Իր շահեկանութեան պատճառաւ հոս կուտանք մանրամասն նկարագրութիւնը այդ պատմական հանդիսութեան: (*)

«Գարակէօզեան Ա.զգ. Որբանոցի պաշտօնական բացման հանդէսը կատարուեցաւ երէկ, նախագահութեամբ Ա. Պատրիարքին: Վարչութեան կողմէ ներկայ էին Տեարք Վահան Փափազեան եւ Հ. Պոյաճեան: Հրաւիրեալներու մէջ կընշմարուէին Գարակէօզեան գերդաստանին պատկանող բոլոր Տիկիները, Կրթական նախարարութեան կողմէ հայագէտ Սիւրէյյա պէյ, Կրթական Տեսուչ Գ. Քալանթարեանց, Պարսիկ դեսպանատան Ա. Թարգման Յովհաննէս Խան Մասեհեան, Ֆրանս. դեսպանատան Թարգման Նշան Գալըպեան, Ամերիկ. դեսպանատան Ա. Թարգման Արշակ Շմաւոնեան, Բողոքականաց Ազգապետ Յակոբ Պոյաճեան, Կաթողիկէ Հայերու Վարչական Ժողովէն Գրիգոր Ոսկեան, Որբանոցին նախորդ սեփականատէր ուսուցիչ Տօթ. Բլէսթօֆ, հանրաժանօթ դէմքեր՝ Տօթ. Պ. Մատթէոսեան, Տօթ. Պազիլ Խան, Տօթ. Տաղաւարեան, Տօթ. Գ. Դաւիթեան, Տօթ. Յնտզլեան, Տօթ. Մ. Վահէ, Արշակ Գարակէօզեան, Արամ Գարակէօզեան, Սարգիս Գարակէօզեան, Օսնիկ Գարակէօզեան, Էդ. Գարակէօզեան, Աստուածատուր Հարեմց, Նշան Դուկասեան, Մկրտիչ Էսաեան, Պենոն Տէյրմէնեան, Սարգիս Դնաճեան, Հրանդ Պապեան, Յովհաննէս Պառաւեան, Միհրան Տէր Ներսէսեան, Ջարեհ Խօրասանեան, Թազուր Սուքրիասեան, Յարութիւն Ասլանեան, Մկրտիչ Մանուկեան, Գրիգոր Կիւմիւշկէր-

(*) Արշագրուած 22/12/1913 «Ժամանակ» օրաթերթին:

տան, Յակոբ Էսահան, Յակոբ Յակոբեան, Միհրան Մուրատեան, Յակոբ Համամեան, Արտաշէս Հիւրմիւզ, Խաչիկ Խորասանեան, Արսէն Արսէնեան, Արտաշէս եւ Արամ Ֆնտզեան, շատ մը կրթական հաստատութեանց տնօրէններ, ուսուցիչներ, եւ այլն:

Հանդիսութեան առթիւ Որբանոցը արտաքին դուռնէն սկըսեալ դրօշազարդուած էր: Շէնքէն ներս առաջին յարկի սանդուխին ճակատը դափնիներու մէջ զետեղուած էր բարեյիշատակ Տիգրան Գարակէօզեանի մեծադիր կենդանագիրը:

Լսարանը, ուր տեղի ունեցաւ հանդէսը, յատկապէս զարդարուած էր: Ճակատը զետեղուած էր Սուլթանին պատկերը՝ դրօշներու միջեւ. իսկ անոր ճիշդ դէմը՝ Վեհ. Կաթողիկոսին լուսանկարը:

Բեմին վրայ տեղ գրաւեց Ս. Պատրիարքը, իր աջ ու ձախ կողմերը ունենալով Օրմանեան եւ Դիմաքսեան Սրբազանները:

Հանդէսը բացուեցաւ ժամը 2.30ին, Սուլթանին ձօնուած թուրքերէն երգով մը, զոր երգեցին Հաստատութեան սաները՝ հագած իրենց համազգեստը:

Այս երգէն ետք, Խնամակալութեան կողմէ Մկրտիչ Մանուկեան կարդաց հետեւեալ տեղեկագիրը.—

Աւեւեւ. Ա. Պատրիարք Հայր,

Դեր. Հարք եւ Ազնիւ Հանդիսակա՛նք,

Գարակէօզեան Ազգ. Որբանոցիս պաշտօնական բացումը, որուն Ձեր Բարձր Սրբազնութիւնը բարեհաճած է նախագահել եւ որուն համար կը փութանք մատուցանել մեր խորին շնորհակալութիւնները, առիթը կու տայ Հաստատութեանս Խնամակալութեան, քանի մը բառով իրեն յանձնուած պաշտօնին ի գլուխ հանելուն մասին տեղեկատուութիւն մը ընել:

Ազգ. Կեդր. Վարչութիւնը պաշտօն յանձնած էր մեզ՝ որ «Խնամակալութեան յատուկ դրամով» յարմարագոյն կարգադրութիւնը ընէինք, կամ հող մը գտնելով կառուցանել նոր որբանոցը եւ կամ առ այս ծառայելու յարմար շէնք մը գնելով յատկացնէինք այդ նպատակին: Պահանջուած պայմանները լրացնող յարմար շէնք գտնելու հետամուտ եղաւ Խնամակալու-



Որբանոցի շենքին մտնող դուռը

թիւնս, եւ սակայն իրականութեան մէջ կարելի չէր ըլլար մեր փափաքածը գտնել եւ ներկայացուած հաշիւը կամ շէնքերը զանազան անյարմարութեանց պատճառաւ մերժելու հարկին տակ կը գտնուէինք: Պահ մը Խնամակալութիւնս, այլեւս այս-բան յապաղումներէն ետքն ալ վրդովուած, սկամայ որոշման մը յա՛գելով գիտած էր Պէպէթի մէջ ծովեզերեայ շէնք մը, զոր սակայն քիչ ատենն յետոյ վաճառել պարտաւորուեցաւ շահով մը՝ երբ գտաւ արդի շէնքը, այն ատենն կիսաւարտ վիճակի մէջ:

Այս շէնքը, ուր կը գտնուինք, կառուցուած էր Տօք. Բլէս-քօֆի կողմէ իբր բուժարան (*sanatorium*): Խնամակալութիւնս բարերախտութիւնը ունեցաւ գնելու զայն շատ նպաստաւոր պայմաններով.—այն է ծախքերով միասին 4300 ոսկիի:

Այս շէնքին անհրաժեշտ էր նաեւ կցել մինչև պարտէզի դուռին սահմանը եղող գետինն ալ, որ արժեց մօտ 1500 ոսկի. որով կիսաւարտ վիճակի մէջ շէնքը մեզի ապրանք եղաւ գրեթէ 7800 ոսկիի: Ենթին աւարտումը եւ երկու կարեւոր թեւերու (խոհանոց, լուացարան, բաղնիք, ննջարան, հանդերձատուն եւ թէնաս) զատէն ծախսեցինք 5200 լիրայի չափ, որով ամէնքը միասին, առանց կահաւորման Որբանոցը արժած է 13000 օսմ. լիրա: Իսկ կահաւորման համար ծախսուած է մօտաւորապէս 1500 ոսկի:

Աւելորդ չըլլայ թերեւս հոս յիշատակել թէ արուեստին հմուտ անձերու եւ ճարտարագիտներու կարծիքով, այս շէնքը եթէ ի նորոյ կառուցանել հարկ ըլլայ, 16000 ոսկիի կը կարօտի:

Խնամակալութիւնս իր միջոցներուն եւ կարելիութեան սահմանին մէջ աշխատած է դնել Որբանոցս առողջապահական եւ կրթական նորագոյն պահանջմանց համապատասխան պայմաններու մէջ:

Սրբազան Հա՛յր,

Ահա պատիւ ունինք, սա վայրկենին, Հաստատութեանս բանալին յանձնելու Ձերդ Ամենապատուութեան (այս միջոցին Յարութիւն Աստանեան Ս. Պատրիարքին յանձնեց արիսէի մը մէջ դրուած բանալին), իբր զերագոյն ներկայացուցիչը Ազգին, որուն անուան իբր բացարձակ սեփականութիւն արձանագրուած է ներկայ շէնքը յատուկ հեռահեռով, ըստ կալուածական

նոր օրէնքին եւ կայսերական մասնաւոր Պէրաթով մըն ալ հաստատուած է անոր որպէս որբանոց ծառայելը եւ ըստ այնմ ալ կալուածական տուրքէ զերծ մնալը:

Յայտնենք նաեւ որ Որբանոցին սեփականութիւնը եղող եւ իբր հասութարքեր կալուած գնուած Խտիվիալ Բալասի շէնքն ալ որ վազֆի եղած է Ազգ. Հիւանդանոցի անուան, իր յարակից մասերով արժած է մօտ 22000 լիրա եւ այժմ կը բերէ 2000 ոսկի զուտ հասոյթ, կը ներկայացնէ 40000 ոսկիի դրամազուլու մը:

Գալով Հաստատութեանս մատակարարութեան, Ազգ. Կեդր. Վարչութեան, Ս. Փ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան եւ Խնամակալութեանս համախորհուրդ կարգադրութեամբ ճշդուած է տարեկան պիւտճէն, որ է 2600 ոսկի. իսկ եթէ հարկ ըլլայ ծախսել 2900 օսմ. ոսկի, մնացեալ 2000 լիրա: Խտիվիալ Բալասի հասոյթէն եւ 900 լիրան ալ Արհեստանոցի հասոյթներէն պիտի հայթայթուի:

Այս հասոյթներով Որբանոցին սաները պիտի պատսպարուին. նախնական կանոնաւոր կրթութիւն պիտի ստանան 6 դասարանի ծրագրով եւ ձեռական աշխատութեանց մասնաւոր դասընթացքով, պիտի վայելեն ամէն հոգածութիւն, ըլլալու համար ապագային պարկեշտ եւ հաւատարիմ քաղաքացիներ, տոհմային դաստիարակութեամբ: Յարմար դատուած է նաեւ որ որբերէն մաս մը զետեղուին զանազան գործարաններու եւ արհեստանոցներու մէջ, ցերեկները այլեւայլ ճիւղերու մէջ գործնական վարժութիւն ընելու համար:

Որբերու ընդունելութեան պայմաններն ալ ճշդուած են: Ասոնց վերջնական թիւը պիտի ըլլայ 110, իսկ տարիքնին առնուազն 9 եւ առ առաւելն 15: Անցողակի ըսենք սակայն որ այս օրուան որբերուն թիւը 113ի հասած է: Որբերուն եւտիգուլէն նոր շէնքին մէջ փոխադրութիւնը տարեշրջանին սկիզբը տեղի ունեցաւ եւ նոյն միջոցին սկսան դասախօսութիւնները:

Խնամակալութիւնս այս տեղեկութիւնները տալէ յետոյ պարտականութիւն ունի իր շնորհակալութիւնը յայտնելու Ն. կայսերական Վեհափառութեան եւ Օսմ. բարեխնամ կառավարութեան, որոնք Հաստատութեանս համար չզլացան իրենց պաշտպանութիւնն ու հոգածութիւնը:

Շնորհակալութիւն պարտինք նաեւ Ազգ. Կեդր. Վարչութեան, որ ամէն առնն յօժարակամ նուիրած է իր աջակցութիւնը:

Վերջացնելէ առաջ, Խնամակալութիւնս իրեն համար նուիրական պարտականութիւն կը համարի, յանուն պատուարեալներուն, իր երախտագիտական զգացումներն յայտնել, ոգեկոչելով յիշատակը հիմնադիր-բարերար հնգց. Տիգրան Գարակէօզեանի, որուն հոգին կը հրճուի այսօր ի տես այս հոյակապ շէնքին եւ հոն տիրող առողջ ու մաքուր մթնոլորտին: Կարծես նախախնամական կարգադրութեամբ մը, այնպէս զուգադիպեցաւ որ Որբանոցին շէնքը բարձրանայ շատ մօտը իր վերջին հանգստավայրին, ինչպէս որ իր սիրտին ալ շատ մօտ էր յօգուտ հայ որբին մնայուն ծառայութիւն մը մատուցանելու գաղափարը, որ ահա իրականութիւն դարձած է:»

Տեղեկագրին ընթերցումէն ետք, Խնամակալութեան անդամներէն Եղուարդ Գարակէօզեան կարգ մը յաւելուածական տեղեկութիւններ տալէ ետք Խնամակալութեան գործունէութեան մասին, յայտնեց բուն ծափերու մէջ, թէ Որբանոցին բացման հանդէսին առթիւ Գարակէօզեան հօրեղբորսրդիները (Արշակ, Միհրան, Թազեոր, Եղուարդ, Արամ եւ Սարգիս) հասար բաժնով 2000 ոսկիի նուիրատուութիւն մը կ'ընեն, հաստատութեան կահաւորման եւ այլ պէտքերու յատկացուելու համար, եւ 2000 ոսկիի չէք մը յանձնեց Ս. Պատրիարքին:»

Որբերուն կողմէ երգուած «Լնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն» երգէն ետք, Հիւանդանոցի Հոգաբարձութեան կողմէ Ներսէս Օհանեան յայտնեց թէ իրենց մեծագոյն իղծերէն մէկն է որ կ'իրականանայ այսօր: «Հոգաբարձութիւնը ուրախ է մանաւանդ որ իրեն կը վիճակի սղջունել պաշտօնական բացումը Գարակէօզեան Ազգ. Որբանոցին, մշտակայ յուշարձան յաւէտ ողբ. Տիգրան Գարակէօզեանի յիշատակին:»

Որբանոցին սաներէն Յարութիւն Ղարիպեան, Գարակէօզեան գերդաստանին ծօնուած երգէ մը յետոյ, կարդաց ուղերձ մը, իրենց այսօրուան երանելի կացութեան հետ բաղդատելով քանի մը ամիս առաջուան արգահատելի վիճակնին եւ այս առթիւ յանուն ամբողջ ուսանողութեան երախտագիտութիւն յայտնեց Գարակէօզեան գերդաստանին:

Աշակերտներէն մէկը թուրքերէն ուղերձ մը կարդաց. իսկ ուրիշ մը՝ Արամ Դաւնիկ մենախօսութեամբ մը պատկերացուց որբի մը տեսած երազը:

Այս մանախօսութենէն վերջ խօսք առաւ Օրմանեան Ս. եւ Որբանոցի մը հիմնարկութեան համար եղած կտակին պատմա-



Որբանոցին շենքը պարտեզին դիմում

կանը ընելով, յոյս յայտնեց որ Գարակէօզեան հօրեղբորորդիները այս շէնքը պիտի նկատեն իրենց զաւակը եւ ըստ այնմ պիտի վերաբերին:

Եւ Սրբազնութիւնը թելադրեց որ Որբանոցին զլսաւոր նպատակը ըլլայ արհեստ սովբեցնել, արհեստաւոր հասցնել որպէսզի սաները ինքնարաւ դառնան եւ օգտակար հանդիսանան ուրիշներու:

Վարչութեան կողմէ Հ. Պոյանեան շնորհաւորեց հայ համայնքը, Գարակէօզեան զնորդաստանին շնորհիւ այսպիսի պատուարեր հաստատութեան մը տէր ըլլալուն համար:

Ամէնէն վերջ խօսեցաւ Ս. Պատրիարքը: Նախ շնորհակալութիւն յայտնեց որ իրեն հրճուանք պատճառով հանդէսի մը նախագահելու հրաւիրուած է. յետոյ դրուատիքը հիւսելով Գարակէօզեան բարեհամբաւ գերդաստանին, շեշտեց թէ սխալ է «Որբանոց» բառը, վասնզի երբ հօրմէ, մօրմէ զուրկ տղաք ազգին խնամքներուն կը յանձնուին, անոնց մեծցած տեղը ոչ թէ «Որբանոց» պէտք է կոչել, այլ ազգ. զաւակներու տուններ կամ հաստատութիւններ:

«Ինչպէս այս Հաստատութեան շինութեանը, որ կարեւոր նուէր մըն է ազգին, նոյնպէս եւ քիչ առաջ յայտարարուած 2000 ոսկիի նոր նուիրատութեան համար, յանուն ազգին պարտական ենք երախտագիտութիւն յայտնել Գարակէօզեան հարազատներուն: Դիտողութիւն մը ունիմ միայն. կարդացուած տեղեկագրին մէջ որքերու ընդունելութեան առթիւ տարիք սահմանուած էր: Պիտի խնդրէի որ տարիք չսահմանուէր: Իմ եւ կը կարծեմ որ ազգին ալ փափաքն է, որ իր ազգ. զաւակները այնչափ մը խնամարկութեան առարկայ ըլլան, որ կարենան անկէ անդին ինքնապահ դառնալ: Հայր մը իր զաւակին չի կրնար ըսել թէ, մինչեւ սա տարիքը պիտի նայիմ բեզի: Իմ մաղթանքս է բազմացած տեսնել մեր ազգին մէջ այն երակը, որմէ բխած է Տիգրան Գարակէօզեանը:»

Այս խօսքերէն վերջ Ս. Պատրիարքը «Պահպանիչ»ով եւ «Հայր մեր»ով փակեց հանդէսը, ուրկէ ետք թափօր կազմուելով հանդիսականները առաջնորդուեցան Շիշլիի Ազգ. գերեզմանատունը, ուր Գարակէօզեան հարազատներու ընտանեկան դամբարանին վրայ հոգեհանգստեան պաշտամունք կատարուեցաւ նախագահութեամբ Ս. Պատրիարքին:

Ներկայ հանդիսականները կրկին Որբանոց եկան, ուր հոխ
թէյասեղան մը տրամադրուած էր իրենց:

Որբանոցին հանդիսաւոր բացման փառաշուք այս արարո-
ղութիւնը իր անմիջական անդրադարձը կ'ունենայ հայ հա-
մայնքին բոլոր խաւերուն մէջ: Մամուլը լայն կը բանայ իր
սիւնակները ու կը մատնանշէ կարեւոր դէպքը բարեգործական
այս հիմնարկութեան:

«Կարակէօզեան Որբանոցի բացման առթիւ» խորագիրը կրող
խմբագրականով ընդ անս քե ի՞նչ կը գրէր «Ժամանակ».—

«Կիրակի օր տեղի ունեցած Շիշլիի Գարակէօզեան Որբա-
նոցի հանդիսաւոր բացումը կրկնապէս ուրախալի երեւոյթ
մըն էր: Նախ վերջակէտ մը կը դնէր կտակի մը գործադրման,
որուն համար տարիներէ ի վեր խնդիրներ յարուցուած, ան-
համաձայնութիւններ եւ վիճաբանութիւններ եղած էին թէ՛
ազգային շրջանակներու եւ թէ՛ մամուլին մէջ, եւ երկրորդ՝
միանգամընդմիջտ կը մաքրագործէր Գարակէօզեան ընտանիքին
անունն ու համբաւը ու զայն կը փրկէր յաճախ անարդար ու
բծախնդիր քննադատութեան մը ճիրաններէն:

Հանգուցեալ բարերար Տիգրան Գարակէօզեանի եղբորորդի-
ները ցոյց տուին թէ արժանաւոր յաջորդներն են իրենց հօ-
րեղբօրը եւ ինքնայոժար նոր առատածեղնութեամբ մը ապա-
ցուցին թէ ազգը տակաւին շատ բաներ կրնայ յուսալ իրենցմէ:

Գարակէօզեան ընտանիքի անդամները արդէն երբեք անտար-
բեր չեն մնացած իրենց ազգին կարօտութիւններուն հանդէպ եւ
իրենց նիւթական ու բարոյական աջակցութիւնը նուիրած են
միշտ երբ օգտակար ու բարի գործ մը ներկայացուած է կա-
տարելիք: Շատ անգամ տուած կամ գործած են անշուղկ, առանց
թմբկահարութեան եւ ասոր համար է թերեւս որ ազգը ըստ
արժանւոյն չէ գնահատած զիրենք:

Բանի մը օր առաջ Յարութիւն էֆ. Մոստիչեան մեզ կը
պատմէր հանգուցեալ Գրիգոր Գարակէօզեանի մէկ արարքը որ
բոլորովին անձանօթ մնացած էր մեզի:

Հին րէժիմին Գումգաբուի աղջկանց Լուսաւորչական
խարխլիկ վարժարանը կը սպառնայ իլլիլ: Հիմնական նորո-
գութիւն մը անհրաժեշտ էր, բայց դրամը կը պակսէր բոլորո-
վին: Մոստիչեան էֆ., Լեւոն էֆ. Բանիկեանի հետ, կը դիմէ

Գարակէօզեանի, կը ըացատրէ կացութիւնը եւ կ'ըսէ թէ որոշած են հանգանակութիւն մը կատարել վարժարանը նորոգելու համար:

— Կ'ուզենք որ, կ'ըսէ, նախ ձեր անունը գտնուի ցանկին գլուխը եւ ուրիշներն ալ ակնածին եւ ձեր օրինակին հետեւին:

Գրիգոր Գարակէօզեան յիսուէն ոսկի կ'արձանագրուի: Մաստիչեան եւ Բանիկեան էֆէնտիները կը դիմեն ուրիշ հարուստներու, սակայն անկարելի կ'ըլլայ դրամ հաւաքել եւ յուսահատ կը դառնան իրեն մօտ:

— Հաճի աղա, կ'ըսեն, առանկ ատեն մը մենք չենք կրնար դրամ հաւաքել, պէտք է որ այս գործը դուն վրադ առնես, որպէս զի յաջողի:

— Որքա՞ն դրամի պէտք կայ, կը հարցնէ, վարժարանը նորոգելու համար:

— 150—200 ոսկիի:

— Լաւ, ես վաղը կու գամ, եւ անգամ մը շէնքը աչքէ կ'անցնեմ, կը պատասխանէ Գրիգոր Գարակէօզեան:

Արդարեւ հետեւեալ օրը կու գայ, շէնքը կը քննէ ու կը յայտարարէ.

— Բայց այս վարժարանը 400 ոսկիով ալ չի նորոգուիր:

— Դուք գիտէք, հաճի աղա կը պատասխանեն, ամէն պարագայի անկարելի է աշակերտուհիները աւելի երկար ատեն այս շէնքին մէջ պահել:

— Իրաւունք ունիք, կ'ըսէ Գրիգոր Գարակէօզեան, ես անմիջապէս ճարտարապետ մը բերել կու տամ եւ բան մը կ'ընենք: Եւ քանի մը օր ետքը ճարտարապետը կը բերէ, պէտք եղած հրահանգները կու տայ եւ նորոգութիւնը կը սկսի: Բայց քանի գործը առաջ կ'երթար՝ նորոգելի մասերը կը շատնային, մանաւանդ որ Գրիգոր Գարակէօզեան ինքն ալ քիթիդ մարդ, կ'ուզէր կատարեալ ընել ամէն բան եւ միշտ կը հսկէր աշխատութիւններուն վրայ: Վերջապէս նորոգութիւնը կ'աւարտի 1350 ոսկի ծախսուելէ ետքը, որուն գրեթէ ամբողջութիւնը իր գրպանէն կու տայ հանգուցեալ բարերարը:

Եթէ հաճի աղան, անձամբ նորոգութեան եւ շինուածանիւթերու գնման չհսկէր, ըսաւ Մաստիչեան էֆէնտի, ապահովարար 2000 ոսկի ծախս պիտի երթար:

Ահա Գարակէօզեան բարերարութիւն մըն ալ որ, ինչպէս մեզի, թերեւս շատերուն ալ անձանօթ մնացած է:

Ներկայիս կարելի է ըսել որ Իսթանպուլի ամբողջ հայ որբերուն եւ որբուհիներուն հոգը մեծ մասամբ Գարակէօզեան ընտանիքը ստանձնած է: Այսպէս, բացի Շիշլիի մանչերու որբանոցէն, Գալֆեանն Որբանոցը եւ Օրթաքէօյի Աղջկանց Որբանոցը կը մատակարարուին ու կը նպաստաւորուին խնամակալութիւններով որոնց գլուխը կը գտնուին Տիկին Վասիլիկ, Տիկին Սրբուհի եւ Տիկին Աղաւնի Գարակէօզեան: Եւ պէտք է խոստովանիլ որ Գալֆեանն Որբանոցը երբեք նիւթական այնքան լաւագոյն պայմաններու մէջ չէ գտնուած, որքան այն օրէն ուր Գարակէօզեան տիկիները իրենց պաշտպանութեան ներքեւ առած են զայն: Այս նորահաստատ Որբանոցն ալ անշուշտ Գարակէօզեան հովանաւորութեան տակ տիպար հաստատութիւն մը պիտի դառնայ քիչ ատենէն:

Այսպէս ուրնմն, այսօր Գարակէօզեան ընտանիքը զարս հարիւրի մօտ երկսեռ հայ որբերու խնամքը ստանձնած է, նուիրելով այդ գործին իր բարոյական աջակցութիւնը, նիւթական նպաստը եւ իր անունին վարկը:


Ասիկա գեղեցիկ արարք մըն է որ պէտք է լռեցնէ ու եւ անհարկի խմբմանք:

Քննադատութիւնը հրապարակագրին իրաւունքն ու պարտականութիւնն է անշուշտ երբ հարկը ներկայանայ բայց նոյնքան պարտականութիւն մըն է նաեւ գնահատումը երբ առիթները ներկայանան:

Շիշլիի Որբանոցին պաշտօնական բացման առթիւ այս քանի մը տողերը նուիրելով Գարակէօզեան ընտանիքի՝ բարեբար ու ազգասիրական գործունէութեան, ուզեցինք գնահատումի այս հաճելի պարտականութիւնը կատարել վստահ ըլլալով որ այս կերպով թաբգմանը պիտի ըլլանք ամէնուն:

Իցիւ թէ Գարակէօզեան ընտանիքի անդամները նորանոր առիթներ ընծայէին մեզի այս պարտականութիւնը կրկնելու:»

Իր շահեկանութեան պատճառով, մամուլի էջերէն ճոս կ'արտագրենք նաեւ Գարակէօզեանի անդրանիկ սասնորէն Արամ Գառնիկի յատկանշական ուղերձը, որ երախտագիտական արտայայտութիւն մը ըլլալով նոյն ատեն — նախքան Շիշլի փոխադրութիւն — որբերուն դառն կացութիւնը կը պարզէ:—



Ուրմեղի ճեպարան (1948)

Ե Ր Ա Ջ Մ Ը

«Կեանքիս մէջ առաջին անգամն էր որ, այնքան յուզումնալից և այնքան խորհրդաւոր երազ մը կը աննէի :

«Յագմամարդ ու կեանքով լեցուն քաղաքի մը շրջափակէն գուրս, տխուր ու գերեզմանական ամայութեան մէկ ծայրը գտնուած միայրակ, քայքայուն և զազաղանման շէնքի մը մէջ կը գտնուէի :

Արդեօք ճակատագրին ո՞ր գոման մէկ քմահաճոյքը տարեր նեակեր էր զիս, ջլատող ու մեռելական այգ պակուցիչ միջնուրտին մէջ ուր՝ ամէնէն զուարթ հոգին անգամ սեւ կը հագնի և սոխակն անգամ բուրի գեր կը կատարէ :

«Ձմրան տխուր սեւ գիշեր մըն էր : Դուրսը, փոթորիկը ահեղօրէն կը գուար, մեր խորխուլ շէնքը կը տատանէր, կ'երերար, կը ճուար իր վրայ անդադող հարուածներուն ներքև կը սպառնար իր փլատակներուն տակ ծածկել մեր վախ մարմինները : Կեանքի ո՞չ մէկ նշոյլ, յուսատու և ո՞չ մէկ նշան բացի խեղճուկ լապտերի մը աղօտ լոյսէն՝ որ միայն որ սղորմուկ անկողիններուն մեռելական գալիութիւնը կը ստուերազծէր :

«Փոթորիկը կը շարունակէր աւելի անդուսող թափով, ալիկոծ ծովու մը վրայ գտնուելու պատրանքն ունենալ կը կարծէի : Շէնքին տախտակամածը խոյս կուտար ոտքերուս տակէն, և փայտեղէն այգ հնօրեայ գանդուածը իր ամբողջութեամբը, մահամերձի հանդիւններով կը հեռո՞յ, կը հեռո՞յ, կը հեռո՞յ :

«Ո՛չ, ինչպէս կը զգամ լքումը և ամայութիւնը դժբախտ ճակատագրիս, որքան խորացէս կը զգամ ծարաւը գուարթութեան, կապոյտ ու պայծառ հարիւրներուն, գալար ու վարդազեղ ծառերուն, որքան պէտք ունիմ ծիծաղկոտ բոցի մը, և այս ամէնուն զրկանքը ինչպէ՛ս կը ճնշէ, կը գալարէ իմ մատաղ հոգիս :

«Այսպէս, ցերեկուան գտնութիւններուն կը յաջորդէր՝ թախծալից գիշերուան ուրուականներու արձաւիրքը, ամիսներ ու տարիներ իրարու կը յաջորդէին և մեր առեայտանքը, մեր զրկումի ու անյուսութեան կեանքը՝ կը շարունակէր այգ խամբօցին մէջ՝ անդուլ, անգաղար :

Եւ սակայն, ատեն ատեն, լքումի և մեկամտազուլթեան վայրկեաններուն մէջ լսել կը կարծէի խորհրդաւոր և անտարա՞ր

ձայն/մը՝ որ կարծես թէ յոյսի և կենդանութեան շիճուկը կը ներթարկէր իմ ցամքած սրտիս և վհատած հոգւոյս մէջ:

«Համբերէ՛ կ'ըսէր այդ անոյշ ու խորհրդաւոր ձայնը, 'համբերէ՛, որդեակ՝ մօտ է վախճանը քու տառապանքներուդ, մարդասէր չքնադ հօգի մը՝ երջանկութեան նոր աշխարհ՝ մը պիտի փոխադրէ քեզ»:

«Արթնցայ...: Լաւ կը յիշեմ 1913 Սեպտ. 8ին անմոռաց ու յաւէ՛տ յիշատակելի կիրակիի տաւաօտն էր այն: Արշալոյսը գետ նոր կը ծագէր: Սա'լայն Անտուած իմ, արդեօք տակաւին կ'երազեմ թէ ո՛չ իրականութեան մէջ կ'ապրիմ:

«Իշխանական սպարանքի մը ընդարձակ ու փառաւոր սրահը փոխադրուած ըլլալու պատրանքին մէջ կը տարուբերիմ: Չէի կրնար աչքերուս հաւատալ:

«Այո, շուրջս զանուողները թէպէտ իմ ընկերներս, իմ ծանօթներս էին, բայց անոնք ալ ինծի նման շուարած ու մոլորուն կը հարցնէին իրարու. «Ո՛ւր կը գտնուինք, ի՞նչ է անունը այս հոյակապ շէնքին, զիւթական ո՞ր գաւազանը գծովքէն այս եղեմը փոխադրեց մեզ, արդեօք ո՞ր բարերար հոգիին կը պատինք այս անձառ կրանութիւնը:

«Եւ անա, հսկայ շէնքին ամէն անկիւններէն հետեւեալ ցըն՝ ծալից աղապակն սկսաւ արձագանդել:

«Աւետիս ձեզ, ով սիրելի սրբեր, անա՛ ձեր երազն իրակա նացաւ, անա ծագեցաւ ձեր երջանկութեան արշալոյսը, անա՛ դրախտ մը ձեզի՝ փոխան տարտարասի տանջանքներուն: Գարակէօզեան Տիգրան, բարութեան, ազգասիրութեան և սուսմասիրութեան այդ անմահ հոգին որ այս փառաւոր շէնքը կը կտակէ ձեզի, որպէսզի, ասկից յետոյ վայելէք հանգստաւէտ կեանք, ստանաք մաքի և սրտի գաստիարակութիւն և ձեր արդիւնքներով ու արժանիքներովն անձահացնէք իր անունը և պարծանք ըլլաք այն ազգին՝ որ կեանք տուաւ Տիգրան Գարակէօզեանի նման մեծահոգի և ազնուական Հայունն:»

«Այն ատեն բովանդակ սրբերս, խորին երախտադիտութեամբ զեղուն ծունր չօքեցանք և ուրախութեան արցունքներով արտասանեցինք մեր առաւօտեան նոր ազօթքը՝ որ այսուհետեւ մեր կեանքին ամէնէն անոյշ և յաւիտենական սաղմոսերգութիւնը պիտի ըլլայ:

«Ով մեր անմահ բարերարը Տիգրան Գարակէօզեան, քու

պանծայրի անուհոյ և խնկելի յիշատակոյ օրհնեալ ըլլայ յառիտեան,
քու գամբարանոյ մէր երախտաչէա սրտերուն մէջ յաւէա քան-
գակուած պիտի մնայ, յաւէա մեր նուիրական ու խար թող ըլլայ
քու անձա՛ն անուհիոյ արժանեաւոր սաներ ըլլալ: Իսկ մեր սրբ-
տաղին մաղթանքը պիտի ըլլայ խնդրել անտէրունջ սրտերուն
յառիտեանական պաշտպանէն, սրպէսոյ տառապեալ հայ ազգին հա-
մար Տիպրան Գարակէօզեանի նման պանծայրի Հայեր յարուցանէ:»

Բացումէն անմիջապէս վերջ, ազգին երեւելի մտաւորա-
կաններէն և հանրային դէմքերէն շատեր ինչպէս Օրմանեան
Ս., Զաւէն Պատրիարք, Արտարին գործոց նախարար Գ. Նորա-
տունկեան, Մանուկ Ազարեան, Կեդրոնականի տնօրէն Բրօժ. Այ
Սաչատուրեան, Արմենակ Շահմուրատեան, և ևն. հետզհետէ կ'ա-
ցելն՝ Արքանոց, աչքէ կ'անցընեն զանազան բաժանումները և
ներկայ կը գտնուին դասախօսութեանց: Անշատաբար յիշատա-
կութիւնը պիտի ընենք ուրիշ բազմաձիւ դէմքերու, որոնք այ-
ցելութենէ վերջ իրենց կրած տպւորութիւնները գրի առած
են մասնաւոր տոմարի մը մէջ:


Հաստատութեան պաշտօնական բացումէն սկսեալ մինչև
Ապրիլի վերջերը՝ Օրմանեան Ս. շարաթը երկու անգամ կանո-
նաւորապէս կ'այցելէ և յաճախ բոլոր սաներուն, հաւարա-
բար, կրօնական և բարոյական նիւթերու վրայ օգտակար ու
հրահանգիչ դասախօսութիւններ կը կատարէ:



Իսկ Արքանոց այցելուներէն մէկը, «Մգակիր հոգի մը» ստո-
րագրութեամբ իր տպւորութիւնները գրի կ'առնէր, ատեն մը
վերջ, հետեւեալ տողերով.—

«Շիշլիի Ազգ. գերեզմանատան մէջ ընկերական տխուր պար-
տականութիւն մը կատարելէ յետոյ, շատերուն պէս ևս ալ փա-
փաքնցայ, պատահութենէն օգտուելով անգամ մը այցելել Գա-
րակէօզեան Ազգ. Արքանոցը որ ամէն Հայու համար հպարտու-
թեան ճշմարիտ առարկայ մը դարձած է:

Շէնքը, թէպէտ նախապէս ուսւ բժիշկի մը կողմէ իբր հի-
ւանդանոց կառուցուած, սակայն Գարակէօզեան ընտանիքը՝ յա-
նուն Ազգին զայն գնելէ յետոյ, նիւթական ամէն զոհողութիւն
սիրայօժոր յանձն առած է վերածելու և ձեւափոխելու համար



Տյոյ անբարաններէն մէկը (1948)

զայն գիշերօթիկ վարժարանի եւ մանաւանդ որբանոցի մը պահանջած առողջապահական, գիտական եւ մանկավարժական ամէն առաւելութիւններով օժտելու համար:

Նախ եւ առաջ, զարդարուն պարտէզի մը մէջ, իբր հարիւր կանգուն երկայնութեամբ շէնքին փառաւոր ճակատը եւ հոյակապ ու սիւնազարդ դուռնէ մը մուտքը, լաւագոյն տպաւորութեամբ մը կը համալի՛ ամէն այցելու:

Որբանոցը բաղկացած է չորս ընդարձակ յարկերէ, ամբողջ ամրակուռ քարուկիր եւ մօզայի՛գ յատակներով:

Առաջին յարկը կը պարունակէ ճաշարան, խոհանոց, երկու մանան, մանդէններու շտեմարան, քալօռի՛ֆէնի յարկաբաժին եւ լուացարան:

Երկրորդ յարկը բուն վարժարանն է 7 ընդարձակ եւ լուսաւոր դասարաններէ բաղկացած, եւ որ կը պարունակէ նաեւ տեսչարան, լմանգարան, ուսուցչաց, դռնապանի եւ սպասաւորաց սենեակներէ զատ, ձեռական աշխատութեան մասնաւոր սրահ մը իրեն յատուկ գործասեղաններով:

Երրորդ յարկը կը պարունակէ երեք ընդարձակ ննջարաններ 110 անկողիններով: Երկու մեծ ննջարաններուն ճիշդ դիմացը կը գտնուին արգիական դրութեամբ մէկ մէկ գեղեցիկ լոգարաններ՝ մարմարէ հաստատուն սեղաններով, ինչպէս նաեւ՝ կէս մը թրքական եւ կէս մըն ալ եւրոպական ճաշակով շինուած հիանալի բաղնիք մը 8 աւազանով եւ պաղ ու տաք տուշերով՝ որոնց ամբողջութիւնը հայ թէ՛ օտարազգի ամէն այցելուի զմայլում կը պատճառէ: Դարձեալ այս երրորդ յարկին վրայ կը գտնուի ննամակալութեան ժողովատեղին, որ միանգամայն՝ իբր հիւրանոց ծառայելու սահմանուած է:

Չորրորդ յարկը կը պարունակէ դարմանատուն մը 8 անկողինով, դեղարան, հիւանդի յատուկ լոգարան, հանդերձատուն, պաշտօնէից ննջասենեակներ եւ ընդարձակ թէ՛ռաս մը՝ ուր վերելակ մը կը գտնուի, մասնաւորապէս աղտոտ ճերմակեղէնները ուղղակի լուացարան իջեցնելու եւ լուացուածները վեր առնելով չորցնելու համար:

Ամբողջ շէնքը, իր բովանդակ յարկաբաժիններով օժտուած է օդային կազով եւ քալօռի՛ֆէնով:

Թէպէտ առարկողներ գտնուեր են թէ՛ նիւթական այս ճոխութիւնները կրնան անտէրունջ որբերուն ապագային վրայ աննպաստ ազդեցութիւն մը գործել, սակայն ես, առանց կարե-

ւորութիւն տալու այդ տխմար գաղափարին, կու գամ հրապարակաւ յայտարարել որ, Բերայի շրջանակին մէջ, Հայութեան համար ամէնէն ներկայանալի տիպար հաստատութիւնն է Գարակէօզեան Ազգ. Որբանոցը, որ անմոռաց յիշատակարանը պիտի ըլլայ ողբացեալ կոտակարար Տիգրան Գարակէօզի, եւ միեւնոյն ատեն, Գարակէօզեան գերդաստանի անունին համապատասխան՝ նուրբ ճաշակին, վեհանձնութեան, գործնական ազնուասրտութեան եւ ազգին անտիրական որբերուն հանդէպ տածած անկեղծ համակրանքին մարմնացեալ մէկ ապացոյցն է ան:»(*)

4. ԵՐԿՈՒ ԽԱՂԱՂ. ՏՄՐԵՇՐՁԱՆՆԵՐ

Առաջին տարեշրջանի վերջաւորութեան իսկ, Որբանոցը կուտայ իր անդրանիկ հունձքը, 7 սաներ, որոնք յաջող քննութեամբ, եւ «արժանեաց աստիճանաւ» կ'ստանան իրենց վկայականները: Այդ շրջանաւարտներն են՝

Արսաշես Գաբիկեան
Կարապետ Կիրակոսեան
Հայկ Ալիսանեան
Մանուկ Յերթիլեան
Մկրտիչ Թերզեան
Մկրտիչ Կարապետեան
Յարութիւն Ղարիպեան

Յաջորդ տարեշրջանը կ'սկսի նոյն ուսուցչական կազմով: Խնամակալութեան եւ Կեդր. Ուսումն. Խորհուրդին գնահատութեան կ'արժանանան տնօրէն Գ. Մարգարեանի բոլորանուէր ջանքերը Որբանոցին յառաջիմութեան համար:

Մասնաւոր զարկ կը տրուի արհեստագիտութեան ճիւղին:

1914 Ապրիլ 21էն սկսեալ Շիրքէթի Հասքէօյի գործարաններուն մէջ 14 աշակերտներ կը հետեւին հետեւեալ արհեստներուն: Մերենագիտութեան ճիւղին՝ Գրիգոր Մալխասեան, Զարեհ Յովհաննէսեան, Զարեհ Իւթիւհեան, Լեւոն Յարութիւնեան եւ Սարգիս Բալաբեան. ատաղձագործութեան՝ Մուրատ Ասոսեան, Մկրտիչ Անանեան եւ Յակոբ Կարապետեան, սեփնէնթիութեան՝ Յակոբ Յակոբեան, Մուրատ Դերձակեան եւ Միհրան Յովհաննէսեան. մօտեչիութեան՝ Սեպուհ Գարիպեան եւ Սե-

(*) «Ժամանակ» 11—24 Օգոստ. 1913. Թիւ. 1544:

պուհ Տէօրմէնեան, դարբնութեան՝ Հայկ Մարկոսեան: Ուրիշ
երեք սաներ կը զրկուին Տօլմապահչէի ատաղձագործարանը:

1914—1915ի ընթացաւարտներն են՝

Արամ Գառնիկեան
Արշակ Խաչիկեան
Հայկազն Տ. Ղեռնդեան
Հրաչեայ Մօսիօֆեան
Յակոբ Ժամկոչեան
Նշան Պըյըզլեան
Վարդան Սմբատեան

Հազիւ երկու խաղաղ եւ արդիւնաւոր տարեշրջաններ բու-
լորած, Ա. Ընդհանուր Պատերազմը իր անակնկալներով կու գայ
ցնցել Որբանոցի կրթական կեանքը: Ուսուցիչներէն ու ներքին
պաշտօնեաներէն շատեր հարկեցուցիչ պատճառներով կ'ընդ-
հատեն իրենց պաշտօնավարութիւնը: Անոնց տեղ պաշտօնի կը
կոչուին Տիգրան Պաղտիկեան (Օսմ. եւ Ֆրանս.), Մանուկ Յով-
հաննէսեան (ընդհ. դաստիարակ), Կարապետ Համամեան (գե-
ղագրութիւն եւ Ֆրանս.), Կարապետ Փափազեան (մնայուն ու-
սուցիչ), Սարգիս Չամչիկեան (ուսուցիչ), Տիգրան Նշանեան (ու-
սուցիչ), որոնցմէ ոմանք շատ կարճատեւ ծառայութիւն կ'ու-
նենան ու տեղ կու տան նոր կրթական պաշտօնեաներու, ինչ-
պէս Ետիգուլչի Որբանոցի նախկին տեսուչ Ֆրանկիւլ Պագրը-
եանի, Արմենակ Գրիգորեանի, Սարգիս Թիւթիւնեանի, եւ այլն:

Տնօրէն Գ. Մարգարեան այս մասին ցաւով կ'արտայայտուի
Խնամակալութեան մատուցած 1915—16ի իր տեղեկագրին մէջ.

«...Չափազանցութիւն ըրած չեւ ըլլար. երբ ըսեմ, թե ուսուց-
չական կազմին մեջ տեղի ունեցող այս անկերջ փոփոխութիւններն
եւ անակնկալ երաժարումները ո'րքան անկասկած ազդեցութիւն մը
գործեցին Որբանոցիս ներքին կանոնադր ուղղութեան վրայ եւ թե
միւս կողմէ սահմանուած կարգն ու սարքը որքան փոփոխութեան
ենթարկուեցան՝ խարու յաջորդող նոր ուսուցիչներու տարիքին, ըն-
թուումին, խառնուածքին, ունեցած փորձառութեան կամ անփոր-
ձութեան պատճառաւ եւ հետեւաբար ինչ աստիճան դժուարութեան
մասնուեցաւ տնօրէնութեան պաշտօնը:»

Այս շրջանին, Պէյօղլուի քարոզիչ Տ. Հմայնակ Եպսկ. Դի-
մաքսեան անձնուիրաբար կ'ստանձնէ Երկու քարծրագոյն կարգի-
րուն կրօնքի դասաւանդութիւնը:



Գրախոզերն Ուրանացի տղիտիսն կանանցը

Հրապարակային դասախօսութիւններէ զատ, գիշերային սենտողութեան պահերուն ինքնօգնութեան դասեր եւս կ'աւանդուին, առաջնորդ ունենալով Սամուէլ Սմայլսի գործը: Ուսանողութեան կը ծանօթացնեն ընկերային շատ խոնարհ ծագում ունեցող այն ականաւոր անձերը, որոնք իրենց պողպատէ կամբքով եւ յամառ աշխատութեամբ հոյակապ հեղինակութիւններ հանդիսացած են արուեստներու եւ գիտութեանց այլեւայլ երկրորուն մէջ:

«Մատենադարան անուետով մասնաւոր սենեակի մը մէջ հիմը կը դրուի գրադարանի մը, 1913ին նուիրուած գիրքերուն վրայ աւելցնելով Հմայնակ Արք. Դիմաքսեանի անձնական գրադարանին 221 հատորները՝ զրական, պատմական ու կրօնական), զնդապետ Տօթ. Մանուէլ Պէյ Իթիւնեանի Տիկնոջ կողմէ նուիրուած 200է աւելի գիրքեր՝ հայերէն եւ օտար լեզուներով, Վենետիկի Մխիթարեաններէն Հ. Թ. Սիրունիի եւ Երուանդ Օտեանի նուիրած կարեւոր երկերը, որոնց ընդհանուր թիւը կը յանգի 800ի»:

5. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ ՈՐԲԱՆՈՅԸ ԵՏԻԳՈՒԼԷԻ ՄԷՋ

Պատերազմ. նախարարութեան կողմէ հաղորդուած հրամանագրի մը համաձայն, 1916 Յունուար 26ին Խնամակալութիւնը Զաւէն Պատրիարքի նախագահութեամբ բացառիկ նիստ մը գումարելէ յետոյ, կը հարկադրուի Որբանոցին շէնքը տրամադրել Շիշլիի Օթօմօպիլներու գործարանին Զինուոր. Վարչութեան եւ որբերը փոխադրել Ետիգուլէ, Ս. Փ. Հրահանօցի շրջափակին մէջ: Գոյքերու եւ կարասիներու փոխադրութիւնը շատ հապնապով ու տեղւոյն Զին. Իշխանութեան կողմէ տրամադրուած բնոնատար կառքերով տեղի կ'ունենայ: Կառաժի Տնօրէնութեան կը փոխանցուին Որբանոցին սեփական գրասեղանները, հաշասեղաններուն մէկ մասը, մահճակալներուն եւ անոնց կազմածներուն կէսը, խոհանոցի, բալօրիֆէրի վերաբերեալ առարկաներ եւ այլ կարասիներ: Փոխադրութեանց կը հսկեն Եզուարդ Գարակէօզեան, Տրթ. Գ. Դաւիթեան եւ Յակօբ Էսսանան:

Մաս մը անգործածելի ու պահեստի իրեղէններ հանդերձատան սրահին մէջ կնիքի ներքեւ կը պահուին ու մէկ նրկուամիս յետոյ կը փոխադրուին Հիւանդանոց: Շէնքին պահպանութիւնը Խնամակալութեան կողմէ կը յանձնուի Մուրատ Արօ-

եանից, որուն աչալուրջ հսկողութեան եւ կառաժի տնօրէն Սա-
լահէտտին պէյի նախանձախնդիր հոգածութեան շնորհիւ մին-
չեւ վերստացումը՝ տարիէն տարի անվթար կը մնայ հաստատու-
թիւնը՝ տրամադրուած կարասիներով ու գոյքերով:

Հիւանդանոցի կանանց Յիմարանոցին վերնայարկը ամբողջ
որբերու ուսումնարանի կը վերածուի: Արանց հիւանդանոցի
միջնայարկը իբր ննջարան կը ծառայէ, իսկ Յակոբեան յարկա-
րաժնի գետնայարկն ալ կ'ըլլայ սեղանատուն: Անշուշտ Գարա-
կէօզեան սաները չեն գտներ իրենց առաջուան հանգստաւէտ
պայմանները:

Գասաւանդութիւնները կը շարունակուին կանոնաւոր կեր-
պով: Որբանոցը կ'ունենայ, 6 ընթացաւարտ, որոնք են՝

Արշալիս Մարգարէսեան

Գրիգոր Արգարէան

Գրիգոր Մալխասեան


Կարապետ Սահակեան

Հրանդ Պողոսեան

Վահերամ Ռուբէնեան

Վարպետ արհեստաւորի մը հսկողութեան տակ կը վերա-
հաստատուի կօշկակարատներ, ոչ կը հալթայիէ տղոց ան-
հրաժեշտ կօշիկը պատերազմի տարիներուն: Նախկին ընթա-
ցաւարտներէն 8 հոգի զանազան պաշտօններու կը կոչուին: Հի-
ւանդանոցին մէջ: Որբերու առողջութեան կը հսկէ Հիւանդա-
նոցի բժշկական մարմինը, իսկ մինչեւ փոխադրութեան լուա-
կանը այդ խնամքը ստանձնած էին բժիշկներ Կորեկեան, Մու-
թաֆեան, Ալեանաքեան եւ Պալթազարեան, շաբաթական այցե-
լութիւններով: Իսկ ձեռական աշխատութեանց նիւղը կը վե-
րակազմուի Պողոս Շուշանեանի կողմէ:

1916—17 տարեշրջանին Որբանոցի աշակերտութեան թիւը
կը բարձրանայ 145ի, հազիւ մէկ մասը թոշակաւոր: Ուսուցչ-
կը մարմինը փոփոխութիւններու կ'ենթարկուի եւ պաշտօնի կը
մարտիրոս Մարտիրոս Չարխուկեան, Միհրան Տէօթմէնեան, Գա-
կոչուին Մարտիրոս Չարխուկեան, Միհրան Տէօթմէնեան, Գա-
նիկ Գանեան, Յովհաննէս Ծալեան եւ Յուսէպ Նայիմ: Ասոնց-
նէ զատ պաշտօնի կը կոչուին նաեւ նախորդ տարեշրջանի ըն-
թացաւարտներէն Արշալիս Մարգարէսեանի եւ Գրիգոր Արգար-
եան: Իսկ առողջարանութեան դասը անձնուիրաբար կ'ստանձ-
նէ Տրթ. Գրըգենեան:



Արևանայի Բաղնիչը

Տիրող տնտեսական տազնապին հետեւանքով Որբանոցին մատակարարութիւնը կը դժուարանայ: Այս միջոցին է որ բարեգործ Ամերիկացի մը Մսթըր ֆիլթ կը հոգայ ամբողջ ուսանողութեան անհրաժեշտ ներմակեղէնը (ներքնաշապիկ, գիշերազգեստ, եւ.ն.):

1916—17ին Որբանոցը կու տայ 5 շրջանաւարտներ, որք են.

Խաչիկ Ժամկոչեան
Կիրակոս Ժամկոչեան
Յարութիւն Մովսէսեան
Նուպար Ասրանեան
Ոստանիկ Անեւեան

1917—18 տարեմուտին արձանագրուող 206 սաներէն 85ը կը մեկ ին հետեւեալ պարագաներու մէջ.—

Որդեգրուած	7
Տնօրէնութեան ձեռքով արհեստի դրուած	26
Իրենց պաշտպանին ձեռքով արհեստի դրուած	9
Ինքնաբերաբար մեկնած	24
Խոյս տուած	9
Արտաքսուած	7
Զինուորութեան եւ այլ պատճառներով	3

Մնացեալ 121 սաներէն 38ին թոշակները կը վճարուին Ազգ. Փոխանորդարանէն, Պայպլ Հաուզէն, Մատակարար Մարմիններէ, պաշտպաններէ եւ պարագաներէ:

Որբանոցին ուսումնական մակարդակը ամէնէն աննախանձելի վիճակը կը պարզէ այս տարեշրջանին: Աւսուցչական մարմինը անվերջ փոփոխումներու կ'ենթարկուի հրաժարումներու հետեւանքով: Հետզհետէ պաշտօնի կը կոչուին դաստիարակուհի Օր. Նունիկ Տ. Ղեւոնդեան, Արշակ Վարդանեան, Յարութիւն Հանուհի Տ. Ղեւոնդեան, Արշակ Վարդանեան, Յարութիւն Հանուհի Տ. Ղեւոնդեան, Սարգիս Մարտիրոսեան, եւ.ն.:

Արդէն իսկ գոյութիւն ունեցող բոլոր անպատեհութիւններն ու դժուարութիւնները գլուխ կը ցցեն: Քարիւղի պակասին հետեւանքով գիշերային սերտողութիւնները կը դադրին ամիսներով: Տարեշրջանը ամբողջական 6 կարգերով բացուելուն հակառակ, շրջանաւարտ ըլլալիք սաները՝ 9 հոգի, կը հեռանան եւ Որբանոցը ընթացաւարտ չունենար:

1918 Ապրիլ 1էն սկսեալ Հաստատութիւնը իր առանձին մատա-

կարարութիւնը կ'ունենայ, անմատչելի եւ անբաւարար համարուելով Հիւանդանոցի Հոգաբարձութեան պիւտճէն ու մատակարարական յանձնանձումը (սննդեղէնի): Իւրաքանչիւր որբի յատկացուած 4 ոսկիի փոխարէն կարելի կ'ըլլայ 280 դրշով հոգալ անհրաժեշտ սնունդը:

Տնօրէն Գ. Մարգարեան իր տարեկան տեղեկագրին մէջ մանրամասն կ'անդրադառնայ այս շրջանի դժնդակ կացութեան վրայ եւ մինչեւ իսկ կը գանգատի ջուրի պակասէն: «Ազգ. Ա. Փ. Հիւանդանոց եւ ջուրի պակաս հոմանիշ են. այս ցաւը անդամանելի է,» կը գրէ: Հոգաբարձութեան մօտ կատարած իր դիմումներուն սա պատասխանը կ'ստանայ. — «Ինչպէս որ մատակարարութիւնը բաժնեցիք, ջուրերնիդ ալ դուրսէն բերել տուէք:» եւ այդպէս ալ տեղի կ'ունենայ:

Հոս նոյնութեամբ կ'արտագրենք նոյն տեղեկագրին (27 Օգոստ. 1918) վերջին մասը, ուր Մարգարեան ի վեր կը հանէ Գարակէօզեան Որբանոցի մատակարարութեան սատար հանդիսացող երկու պարագայ.

«ՆՈՒԻՐՍԱՏՈՒՈՒԹԻՆՆԵՐ.— Որբանոցիս անուանը տեղի ունեցած պարբերական նուիրատուութեանց համար, ի դիմաց եւրախառու որեւալ որբերուն խորին շնորհակալութիւն յայտնելով հանդերձ, խզձի գէժ մեղանչանք մը դորձած պիտի ըլլայի, եթէ պարտականութեան այս հարկը առաւելապէս չփութայի մատուցանել Ամերիկեան Բարեախրական Ընկերութեան Թուրքիոյ ներկայացուցիչ Մսթըր Փիթի, որուն Որբանոցիս նկատմամբ տաճած մասնաւոր համակրանքին իբր դորձնական ազացոյց՝ մատուցած նախախնամական նպաստներն ու նուիրատուութիւններն յաւէտ անմոռաց պիտի մնան:

«Ներկայ տարեշրջանին մէջ ազգ. մամուլը և ի մասնաւորի «Ժամանակ» օրաթերթը իր հոգածութեանն առարկայ ըրաւ Որբանոցիս նիւթական աննախանձելի վիճակը և քանիցս կոչում ըրաւ հանրութեան զգացումներուն, որպէս զի մանչերու յատուկ ազգ. այս միակ հաստատութիւնը քաջալերէ իր նպաստներով: Բարեացակամ օրաթերթին կարգացած հրաւերներն յօժարութեամբ պսակուեցան բարեսէր ազգայիններէն, որոնք Մարտ ամիսէն սկսեալ մինչեւ Մայիսի վերջը, իրենց նպաստները չզլացան և այսպէս գոյացաւ կարեւոր գումար մը, որ անմիջական պէտքերու յատկացուեցաւ:

«Ինչպէս արդէն հրապարակաւ, ներկայ տեղեկագրիս մէջ ալ,

Համալի պարտականութիւն կը համարիմ խորին շնորհակալու-
թիւնս յայտնել վերոյիշեալ օրաթերթին արտօնատէր Սարգիս
էֆ. Գօշուհեանի և ամբողջ Խմբագրական Մարմնոյն»

22 նոյ. 1918ին տեղի կ'ունենայ Օրմանեան Ա.ի յուղար-
կաւորութիւնը, որուն կը մասնակցին 20 սաներ՝ գլխաւորու-
թեամբ իրենց տնօրէնին:

Չորս տարուան օրինակելի և օգտակար պաշտօնավարութե-
նէ մը յետոյ, 1918ի վերջերը, Գրիգոր Մարգարեան, այցելու ււ-
սուցչի պաշտօնը միայն պահելով, կը հրաժարի:

Խնամակալութիւնը դիմում կը կատարէ Պէրպէրճան վար-
ժարանի Տնօրէնութեան, որպէս զի իր շրջանաւալ տներէն ներ-
կայացնէ մէկը, որ ներքին ուսուցչի ու նոյն ատեն տնօրէնի
մը կարողութիւնները ունենայ: Ուսուցչական Ժողովի որոշու-
մով կը յանձնարարուի Յովհաննէս Թելեանը, որ այդ միջոցին
կը հետեւէր Իրաւաբանական Համալսարանի դասընթացքին:

Յ. Թելեանի կը յանձնուի Որբանոցին Տնօրէնութիւնը՝
1918—19 դպրոցական տարեշրջանին սկիզբը: Անոր պաշտօ-
նավարութեան կը զուգադիպի վերստացումը Գարակէօզեան Որ-
բանոցի շէնքին, ուր 27 Յունուար 1919ին կը փոխադրուին սա-
ները: Անոնք ետիզուլէէն իրենց ուսուցիչներուն առաջնորդու-
թեամբ շոգեկաւորով կու գան Աիրքէճի, ուրկէ հետիոտն կ'ուղե-
ւորին դէպի իրենց պալատ»ը՝ Շիշլի: Տասնըհինգ օր յետոյ զին-
ւորական իշխանութեան կողմէ Խնամակալութեան անվթար կը
փոխանցուին Հաստատութեան գոյքերն ու կարասիները:

Այս տարեշրջանին որբանոցի աշակերտութեան թիւին վրայ
կ'աւելնեն 68 նոր սաներ (յետոյ իջած 59ի), որոնք Խնամա-
տարութեան կողմէ կը զետեղուին ու հոն կը պատուարուին:
Ասոնց համար իբր սննդագին կը վճարուի որոշ գումար մը:
Այս մասին, Ազգ. Խնամատարութեան վեցամսեայ (1 Մայիս
1919—31 Հոկտ. 1919) տեղեկագրին մէջ (էջ 179) յետագայ տո-
ղերը կ'ան. «Գարակէօզեան Որբանոցին մէջ ունինք 59 գաւա-
ռացի որբեր 7—15 տարու: Մեր որբերը կը կրեն հաւասարա-
պէս Գարակէօզեան սաներու համազգեստը: Ճերմակիցն ու կօ-
շիկ մասամբ հայթայուած են Խնամատարութենէն: Կը պառկին
մահճակալներու մէջ, ինչպէս որբերու պալատ»ին միւս պա-
տուարեալները: Հոն կ'ստանան նախակրթութիւն»:

Այս տարեշրջանին վերաբերեալ հետեւեալ շահեկան ման-
րամասնութիւնները կը գտնենք տնօրէն Յովհաննէս Թելեանի

տարեկան տեղեկագրին մէջ, զոր ան մատուցած է Ռրբանոցի
Խնամակալութեան:

«Այս տարուան շրջանը կարելի է նրկուքի բաժնել: Ա. 1918
Սեպտեմբերէն մինչև Յունիարի վերջ Եսիգուչիի շրջան եւ Բ.
Փետրվարէն մինչև Յունիսի վերջ՝ Շիշլիի շրջան:

«Երբ փոխադրուեցանք Շիշլի, 115 աշակերտ ունէր Հաս-
տատութիւնը: Ասոնցմէ 8ը իրենց
ճնողքին մօտ մեկնեցաւ յօժա-
բակամ: Այս միջոցին Ա.զգ. Խնա-
մատարութեան ղրմումին ըն-
թացք տրուելով 60ի մօտ տարա-
զիր որբեր եւս հիւրընկալուեցան
եւ ուրիշ նորազիրներու հետ ընդ-
հանուր թիւը բարձրացաւ 175ի:
Ասոնցմէ 169ը ուսման, իսկ 6ը
արհեստներու հետեւեցան:



ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ԹԵՂԵԱՆ

«Ռրբանոցը ունեցաւ նախա-
կրթարանի 5 դասարաններ: Յե-
տոյ կազմուեցաւ Զ. Կարգը: Դըժ-
ուար էլաւ սաները անմիջապէս
ի ննց տարիքին համապատաս-
խան դասարաններու մէջ զ'տե-
ղել: Անհրաժեշտ դարձաւ հա-
ղերձատունը, դարմանատունն ու
Խնամակալութեան սենեակը նըն-
ջարաններու վերածել:

«Մեծ հոգ տաշուեցաւ մաքրութեան, որբերու սնունդին եւ
առողջութեան: Բւրաքանչիւր որբի օրական տրուեցաւ մէկուկէս
վեպիխայի հաց (750 կրամ), առտունները՝ թէյ ձիթապտուղով ու
պանիրով. ձմեռը՝ թուզ, չամիչ ու պուշտեա: Ծարաթը նրկու-
անգամ միսով կերակուր, նրկուրական անգամ մարսոճնի, լու-
բիա, զետնախձոր, բանջարեղէն եւ փիլաւ (մէկը բրինձէ, միւսը
պուշտուրէ): Մէկական անգամ ալ՝ սիսեռ, ոսպ, չոք պեգեչիա:
Պարբերաբար տրուեցաւ նաեւ պտուղ:

«Գալով առողջապահութեան, Տօրթ. Բ. Տինանեան, ամէն
շաբաթ, կանոնաւոր այցելութիւններով անձնուիրաբար ստանձ-
նեց բժշկական անհրաժեշտ հոգածութիւնը: Հիւանդապահի
դեր կատարեց Պ. Մ. Չարխուկեան: Փոխադրութեան ատեն բա-



Հասցեսուրբան Երպանյանների սենյակ

ւակահ բորոտներ կային. բոլորն ալ ապաքինեցան: Շիշլիի կարմիր խաչի Հիւանդանոցը մեծ ասպնջականութիւն ցոյց տուաւ հիւանդ սաներու հանդէպ:

«Ճերմակեղէնի եւ հագուստի խնդիրներն ալ լրջօրէն բարեկարգուեցան: Իւրաքանչիւր աշակերտի ապահովուեցաւ 3 ձեռք ճերմակեղէն, 4 սաւան, հագուստ, կօշիկ, զլխարկ ու թաշկինակ:

«Տղոց բարոյական վիճակն ու կենցաղն ալ ուշադրութեան առարկայ եղան եւ մասնաւոր գուրգուրանք ու հոգածութիւն ցոյց տրուեցան անոնց նկատմամբ: Դասարանական պտոյտներ, աշակերտական ասուլիսներ օարբուեցան: Հայ Տրամաթիք Թատերախումբը հրահանգիչ ներկայացումներ տուաւ որբերուն համար:

«Փոխանցման այս շրջանին՝ Որբանոցը, բացի տնօրէնէն, ունէր 4 մնայուն եւ 5 այցելու ուսուցիչներ: Ասոնցմէ հրաժարողներ եղան ու զեղագրութեան ուսուցիչ Միհրան Տէօքմէճեան ալ իր մահկանացուն կնքեց.

Ուսուցչական կազմը կ'ամբողջանար հետեւեալ կերպով. —

1. Մարտիրոս Չարխուկեան (հայերէն եւ կրօնք).
2. Արշակ Վարդանեան (պատմութիւն, աշխարհագրութիւն եւ կրօնք).
3. Արմենակ Օրմանեան (հայերէն եւ զժագրութիւն).
4. Յովհաննէս Պետիկեան (ֆրանսերէն եւ գիտութիւն).
5. Յակոբ Բռիկեան (թուարանութիւն, երկրաչափութիւն, անգլիերէն եւ թուրքերէն).
6. Սուրէն Բաբախեան (հայերէն, թուարանութիւն եւ մարզանք).
7. Տիգրան Պաղտիկեան (թուրքերէն, ֆրանսերէն եւ հայերէն).
8. Գրիգոր Մալգարեան (ֆրանսերէնէ հայերէն թարգմանութիւն, ընդհ. պատմութիւն, գրարար եւ քաղք. տնտեսագիտութիւն).
9. Գրիգոր Գօյինեան (երաժշտութիւն).
10. Էօմէր Լուծֆի (թուրքերէն).
11. Յովհաննէս Թէլեան (գիտութիւն եւ քաղաք. կրթութիւն):»

«Որբանոցը շուտով գտաւ իր բնականոն ընթացքը: Յաջողակէս քննութիւն տալէ ետք, յաջորդ 1919—20 տարեշրջանին ընթացաւ արտի վկայական ստացան հետեւեալ 6 սաները.

Մարտիրոս Մարտիրոսեան
Մովսէս Շուշիեան
Յովնանեան Ալոյսիանեան
Սարգիս Չիլիկիսեան
Տիրան Իսիկիեան
Քերոյրե Առագեան


«Շրջանաւարտներէն մաս մը իր ուսումը շարունակեց կեդրոնականի մէջ, ուրիշ մէկ քանին որպէս եզրական սան մեկնեցան Փարիզ, հետեւելու համար համալրարանական ուսման:

«Հաստատութեան նպատակն էր ունենալ նաև Արհեստանոցի բաժին մը: Այս ուղղութեամբ առաջին քայլը առ ուսած էր ժամանակին և հիմնուած կօշկակարատուն մը: Անշուշտ ի՞նչ միջոցները թոյլատու ըլլային, պիտի հաստատուէին նաև ուրիշ արհեստներ: Արդիւնքը ցոյց տուած էր որ արհեստանոցին գոյութիւնը օգտակար կը հանգիստանայ թէ՛ Արրանոցին և թէ՛ աշակերտներուն ապագային համար: Այսպէս, կօշկակարատներ իր շօշափելի օգուտը ունեցած է թէ՛ պիւտե՛ի խնայողութեան և թէ՛ սաներուն արհեստ սորվեցնելու տեսակէտով: Այսօր հրապարակին վրայ բաւական թիւով Գարակէօզեանի շրջանաւարտները ունինք, որոնք այդ արհեստն շնորհիւ ինք նարաւ դարձած են:

«Արրանոցին կօշկակարատներ ի երկայիս վարիչ վարպետի հսկողութեան ներքեւ կը գտնուի և նախկին չորս սաներ այնտեղ կ'աշխատէին թէ՛ աբհետ սորվելու և թէ՛ աղոց անհրաժեշտ կօշիկները պատրաստելու համար:

«Արհեստանոցի ճիւղերը ամբողջ սցենելու համար անհրաժեշտ ձեռնարկներն եղած են և մօտ օրէն պիտի ունենանք նաև կահագործութեան և փորագրութեան բաժիններ՝ զ'իկավարութեամբ Պ. Արմենակ Օրմանեանի: Այս արհեստներուն պիտի հետեւին մօտաւորապէս 30—40 սաներ:»

1920ի վերջերը տնօրէն Յովհաննէս Թէլեան կը հրաժարի ու կը մեկնի Փարիզ իր իրաւարանական Տօրթօրայի ծրագիրը իրագործելու համար: Խնամակալութիւնը, ի վարձ իր ծառայութեան կը հոգայ անոր ուսանողական շրջանի տալուան մը ծախքը:



Որսևոյի սեփական սենյակը

ԱՅՑԵԼՈՒՆԵՐՈՒ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ^(*)

(1913—1919)

ՈՂՋՈՅՆ . . .

Ողջո՛յն բեզի, հէ՛ք սրբերուն ապաստան,
Որ կ'ը կանգնիս որպէս կոթող բարութեան:
Ողջո՛յն բեզի, հ'վ հոյակապ կառուցուած
Ուր իմ ցեղիս բեկորները Սուրբ Աստուած
Պիտի պահէ ու խնամէ մինչև ոչ

Անո՛ր գոնեն կեանքի ուղին լուսաւոր:
Յորչափ կա՛գուն մընաս, բեզի հետ անանց
Պիտի ապրի Գարակէօզեան փառապանծ
Անունը մեծ բարերարին հայ սրբոց . . .

Ողջո՛յն ու բեմ, հա՛յ տուն, շրթեղ սրբանոց . . .

1 Մայիս 1913

ՍՄ. ԲԻԻՐԱՏ

Գարակէօզեան Որբանոցի շէնքը այցելելու բախտաւորութիւնը ունեցայ: Հաստատութեան տնօրէն ջազմաշխատ եւ մեծայարգ ուսուցիչ Գրիգոր էֆի. Մարգարեան պէտք եղած առաջնորդութիւնը բնելու եւ ծանօթութիւնը տալու շնորհը շոայլից: Հաստատութեան բաժանումները եւ կազմածքը խիստ նպատակայարմար թուեցան ինձ: Ազգը յանուն իր սրբերուն շնորհաւորութեան արժանի է. իրը ազգային ոմն կը փութամ իմ երախտագիտական եւ շնորհակալութեան բաժինս մատուցանել Գարակէօզեան բարերար գերդաստանին:

25 Յուլիս 1913

Պետկան Առեւ. Համալսարանի
Տնօրէն

Գ. ԲԷՌԻՆՅԱՆ

(*) Որբանոցի Ա. Տնօրէն Գ. Մարգարեանի պաշտօնախնայութեան արժեքներուն կը վերաբերին զանազան այցելումներու կողմէ շեմքի մագիստրանտի քառակուսի սկսեալ մինչև 1918 եւ անոր յաջորդ շրջանին մասնաւոր ամսաթիւնը մէջ գրի առնուած սպառնական այս նշխարները՝ զորս կ'արձագրեմք հոս նոյնութեամբ, որպէս քանկագիտական վաւերագրեր:

Այսօր այցելեցի Գարակէօզեան Ազգ. Որբանոցին շէնքը: Հաստատութեան տնօրէնը՝ Գրիգոր էֆ. Մարգարեան պտտցուց զիս բոլոր յարկերը, զորս քննեցի մանրամասնօրէն եւ ունեցայ հետեւեալ տպաւորութիւնները.—

Ամենայն ինչ հաստատուն, նպատակայարմար եւ ճաշակաւոր է: Միայն ափսոս որ ննջասրահներու սակաւութեան պատճառաւ հազիւ պիտի կրնան պատասպարուիլ 110 աշակերտներ:

Շատ փափաքելի էր որ վեհանձն ըստերարը հաճէր չորրորդ յարկին մէջ (երրորդին վրայ), ուր ամենամեծ յարմարութիւն կայ, երկու ննջասրահներ աւելցնել, որով փոխանակ 110ի, 250 որբեր կրնային հանգիստ պատասպարուիլ եւ առանց ծախքի մեծ տարբերութեան, Որբանոցը կրկին ծառայութիւն մատուցած պիտի ըլլայ ազգին:

Անոր որբերը շրջանաւարտ ըլլալէ յետոյ, պէտք է հացատու արհեստ կամ արուեստ մ'ուսնանաւ. այն է՝ օժտոած ըլլան կամ մի ո եւ է հասարակ արհեստով (հիւսնութիւն, դերձակութիւն, եւլն.) կամ արուեստով (ինչպէս մանկավարժութիւն կամ այլ մասնագիտութիւն) մը:

4 Յունիս 1913

Կրթական Ընդհ. Տեսուչ

Գ. ՔԱՒԱՆԹԱՐԵԱՆՅ

Եթէ որբանոց բառը մեծ դրան նակտին չկարգայինք, իրաւամբ պիտի տաշուէինք իշխանի մը տան տպաւորութիւնը ունեւալու, ուր ամէն ինչ նոխսն իրենց պարզութեան ու կարգաւորեալ դրութեանը մէջ: Հիացանք անոր համար որ միայն եւրոպական հաստատութեանց յատուկ էր այդ կարգաւորութիւնը: Մանուկներու պաշտպանութիւնը աստուածային գործ է: Չանոնք զգուսղ Յիսուսն ալ կ'ըսէր. «Թո՛ղ տուր մանկըտուոյդ գալ առ յիս»:

Շատ ուրախ եւ գոհ տպաւորութեան մը տակ կը մեկնիմ Հայուն պատիւ բերող այս շէնքէն:

24 Հոկտ. 1913

ԳԷՈՐԳ Ծ. ՎՐԳ. ԱՐՄԱՆԵԱՆ

Կեանքի եւ դատարարակութեան մէջ սեռնելը էական սկզբունք մըն է ու Գարակէօզեան Որբանոցին մէջ այս երկու տեսակէտով ալ ամէն բան սեռնուած է: Մաքրութեան վեհափառ տիրապետութեան ներքեւ հետս կը տանիմ սքանչացումս:

6 Նոյ. 1913

ՋՈՅԿԱՆԹՅՈՒՄ

(Պարսկերէն բնագրէն քարգլաննում է)

Շէնք մը որ դրախտի բէօշկի մը կը նմանի՝ որմէ խոյս կու տայ տրամութեան դեւը: Անոր ներսը խիստ լուսաւոր և զուարթ է և Ապրիլի արեւուն պէս շողշողուն: Տրտնութեան դեւը ինչպէ՞ս անոր շուրջը դառնայ՝ քանի որ արեւը պահպանութիւն կ'ընէ անոր վրայ:

Երբ անոր ներսը այսպէս լուսաւոր տեսայ, կարծեցի թէ նիւմանի պալատն է: Ըսի. «Աստուծոյ սիրոյն, ի՞նչ գեղեցիկ տեղ է, գրիչը զանի նկարագրելու մասին կը տկարանայ, երկրի վրայ դրախտի նմոյշը կու տայ. արդէօք զայն հիմնողը Արարչին ձեռքն է: Դրախտի զուարթութիւնը՝ որուն մենք բաղձացող ենք, միշտ հիւր է այս պալատին մէջ: Կ'ուզէի գիտնալ թէ ի՞նչ է այս շէնքը:» Ըսին թէ «ասիկա դպրոց է, որ շինուած է որբերու համար, այս տունը որբերու բնակարանն է:»

Այս խօսքը զարմանք պատճառեց ինձի, վասն զի որբերու բնակարանին մէջ ոչր ու կոծ կ'ըլլայ, մինչդեռ հոս, ոչրի ու կոծի հետքն անգամ չկայ, ամէն ինչ վարդի ու կակաչի պէս ծիծաղկոտ է: Հոս չկայ լացող սոխակէ՛ր զատ՝ որ անոր գեղեցկութենէն հմայուած տաղեր հիւսէ, հոս չկայ արտասուող զարնան ամպէն ի գատ, որուն ամէն մէկ կեթիլը բարիքի մարգարիտ մըն է: Զեփիւտը կ'երգէ. «Շատ պտըտեցայ, բայց չեմ գիտեր տեղ մը որ ասոր հաւասարի:»

Զեփիւտը անոր շուրջէն չի հեռանար, անոր շուրջը դառնալ կ'ուզէ միշտ: Ես մինչև հիմայ շատ դպրոցներ տեսած եմ, որոնք ասոր հետ բաղբատմամբ բանտեր են: Հո՛ս, վարդի տերեւի պէս զուարթ կ'ապրի այն որբը որուն արտեւանունքը արցունքով թրջած է:

Այն բարերարը որ շինած է ասիկա, յաւէտ երախտագիտութեան արժանի է: Շնորհաւորութեան արժանի են որբերը որոնց համար աստուածային բարիք մըն է աս:

Իցի՛ւ թէ հայ ազգին մէջ այսպիսի բարերարներ շատ գրտնուէին: Այս փափաքով կը տոչորի ամէն սիրտ:

1913

ԱՏԵՓԱՆ ԿՈՒՐՏԻՆԵԱՆ

(Հիւլեի)

Թուրքիոյ Հայոց մէջ առաջին անգամ տիպար որբանոցի հաստատութեան բոլոր կարելիութիւններով օժտուած շէնք մըն է, որ կը տեսնուի շնորհիւ Գարակէօզեան բարեհամբաւ գեր-

դաստանին, որ այս որբանոցին կազմածները, կարասիները եւ ըստը հանդերձանը այնքան ճոխութեամբ ու եւրոպական ճաշակի վայել շքեղութեամբ պատրաստելով ցոյց կու տայ թէ որբան կը գնահատէ ազգին սրբերու կեանքն ու ապագան: Տարակոյս չունինք թէ որբերու տրուելիք կրթական, բարոյական, մտաւորական եւ արհեստական ու զեղարուեստական խնամքն ալ համապատասխան կ'ըլլայ անոնց ֆիզիքականին համար նախատեսուած այսքան փայլո ն հոգածութեանը:

29 Յունիս 1913

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ

Գարակէօզեան Ազգային տիպար որբանոցին այցելութեան առթիւ՝ կը յայտնենք մեր անկեղծ հիացումն ու սրտարուխ մաղթանքները բարեհամբաւ բարերար զերգաստանին եւ բարերարեալներուն:

16 Յունիս 1913

Մեծաւոր Մխիթարեանց Վիկենկայի

Հ. ՄԿՐՏԻՉ ՎՐԴ. ՆՈՐՇՈՒԱՆԵԱՆ

Հարֆ Վիկենկեան Մխիթար. միսէի

Հ. ՍՏԵՓԱՆ ՀԱՐՈՆԵԱՆ Հ. ԹՈՎԲ. ԿԷՏԻԿԵԱՆ

Հ. ԽՈՐԷՆ ԿԴԵՄԷՅԱՆ

Մեծ հանոյքով այցելեցի որբանոցս ու կատարեալ գտայ. Աստուած օրհնէ իր բարերարը, աշխատաւորքը եւ իւր սրբերը:

Տեօրեան Մխիթ. վարժարանին Պէյօղլուի


Հ. ԵՓՐԵՄ ՎՐԴ. ՍՐՐՈ. ՀԱՄԵԱՆ

Որբանոցը, իր ըստը մասերովը, յարգելի Պ. Տնօրէնին բարեկամ առաջնորդութեամբ աչքէ անցրնելէ ետքը, սրտի անհուն գոհունակութիւնով պատիւ կը համարիմ գրել որ ազգային զգացումներուս մէջ ինքնին փայլաւորած, հրնուազին կը գրեմ այս տողերը: Յիշատակը լուսահոգի Գարակէօզեանի օրհնուած ըլլայ:

ՄԵԼԻՔՈՆ ԿԻՒՐՃԵԱՆ (Հրանց)

Այսօր պատիւ ունեցանք այցելելու ամէն Հայու սրտին այնքան մօտիկ եղող սոյն որբանոցը, որն իր տեսակին մէջ մէկ հատիկն է հայ ազգի համար՝ իր մէջ տեսնուած կանոնաւորութեան, ճաշակի եւ բարեկազմութեան տեսակէտով: Մեզ նկարագրուածներէն եւ պատմուածներէն հանոյքով կը հետեւցնենք որ սոյն հաստատութեան 110է աւելի սաներ նպատակայարմար կրթութիւն մը պիտի ստանան ապահովեալ ապագայ մը ունենալով իրենց առաջ: Շատ գոհ մնացինք դաստիարակ ուսուցիչ-

Հայաստանի Գրական Պալատի Գրադարանը



Արքանոցի գրասենյակի նկար

ներու պարտաճանաչ պաշտօնավարութենէն եւ դաստիարակներու պարտավունքներէն՝ առանց նոյնիսկ դաստիարակի ներկայութեան (Վ. կարգի մէջ): Տեսանք նաեւ համեստուհի՝ Օր. Ասլանեանը որ պատկառանք կ'ազգէր այցելուին եւ զոր մենք պարտք կ'զգանք կոչելու մայր որբերուն:

Հիմնադիր-սեփեակն Վանի «Երամեակ» վարժարանի
19 Յունուար 1914 ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄԵԱՆ

Այսօր, Վարդանանց տարեդարձին օրը, առաջին անգամ այցելեցի այս փառաւոր հաստատութիւնը: Դեռ վեց ամիս առաջ իբրեւ Ազգ. Հիւանդանոցի Գրասենեակի տեսուչ, մօտէն զգացած հիմա հոս գտնուող տղոց վիճակին դառնութիւնը, եւ անկէ վերջ մինչեւ տասնըհինգ օր առաջ կեսարիոյ Ա. Կ. վանքի բարձ. վարժարանին մէջ պաշտօնավարութեամբս գիշելօթիկ դպրոցի մը պայմաններուն ծանօթացած, կրկնակ բազդատութիւն մը կը կատարեմ ա՛յն եւ ա՛յս տեսածներուս միջեւ եւ կ'ուրախանամ մտածելով հիմա հոս ապրող, մեծցող ու դաստիարակուող տղոց ուրախութեանը: Ո՞ւր էր թէ Գաբակէօզանի պէս բարերարներ ամէն կողմ երջանկացնէին բախտազուրկ հայ մանկութիւնը ու իրենց տրուած դաստիարակութեան բնոթիւնն ալ օգնելով, նոր ոգիով, առողջ եւ ազնիւ, լաւագոյն սերունդ մը պիտի ունենայինք ապահովարար, որուն մէջ սրբագրուած պիտի ըլլային մեր ազգային նկարագրին մնացլ ու անհաշտ, ծուռ ու թանձր գիծերը: Գրիգոր էփ, Մարգարեանի, Կեդր. Վարժարանի իմ հին ուսուցչիս, հայրական հովանին եւ իր աշխատակիցներուն եռանդուն աջակցութիւնը՝ խնամակալութեան եւ աղբին յարատեւ հօգածութեան տակ, այս մարտը ու ուսասիր շէնքին եւ այս օդաւէտ միջավայրին մէջ որբանոցը ծաղկանոցի մը վերածեր են ու պիտի պահեն այնպէս, ամէնուս մխիթարութեան համար:

26 Փետր. 1914

Վ. Ա. ՀԱՆ ԹԷԲԵՆԵԱՆ

Իբր նախկին որբանոցին խնամակալ, իբր նախկին ուսուցիչ ամէնէն աւելի կրնամ գնահատել, «Գարակէօզան որբանոց»ին այն բազմադիմի առաւելութիւնները, որոնցմէ ո՛չ միայն մեր ազգային նմանօրինակ հաստատութիւնները, այլ օտար հաստատութիւններն ալ զուրկ են կրնամ ըսել համարձակ: Այս տեսակ փառաւոր հաստատութեան մէջ ազգին որբերը չեն այլ ուս

որը, այլ ամէն ծնողական խնամքներ վայելող զաւակներէն աւելի երջանիկ են:

Ամեն. Օրմանեան Արրազան, որ պատիւ ըրաւ մեզ առաջնորդելու, հիացումս չկրնալով զսպել, ըսի իրեն. «Եթէ մէջ մըն ալ աշխարհ գայի, պիտի ուզէի որը գալ, պայմանաւ որ այս Գարակէօզեան որբանոցի սան ըլլայի:»

Անմահ յիշատակին Գարակէօզեան Տիգրանի ընծայելով յարգանացս հաւաստին, կարողութիւն կը մաղթեմ անոր արժանի յաջորդներուն, վառ պահելու համար սոյն փառաւոր հաստատութիւնը, յօգուտ հայ ազգին:

Հիւնհայիր-Տեօրէն Կարապետեան. վարժարանի

27/2/914

ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Տարիներ առաջ՝ քանի մը անգամ այցելած էի Ազգ. Որբանոց կոչուող այն յարկը՝ որուն պարտքը պիտի ըլլար առողջ, կենսունակ եւ ընկերութեան անիւրին լծուող անձնուէր անհատներ պատրաստել: Միշտ տեսակ մը մտայլ տրամադրութեամբ կը մեկնէի այդ յոյսի տունէն, ու որբութիւնդ կը թուէր ինձի աշխարհի էն թանձր, անմեկնելի թշուառութիւնը:

Այսօր՝ նոր որբանոցին ազնիւ ու բարեացակամ տնօրէնութեան եւ ուսուցչութեան թոյլտուութեամբն ու ընկերակցութեամբ պտտեցայ ըստ յարկերը. տարարաստ զրկեալներ զուարթ, երջանիկ դարձնելու ամէն առաւելութիւններով օժտուած այս հաստատութիւնը հպարտութեամբ ու յոյսով կը լեցնէ ժիւ: Բարերարներու կանխահոգ իմաստութիւնն ու ներքին պաշտօնէութեան անձնուէր, հոգածու նուիրումը՝ ազգային հպարտութեան մթնոլորտ կ'ստեղծեն այս նշխարական հաստատութեան շուրջ:

28/2/914

ՏԻՒՐԱՆ, ՉԻՑԿԻՒՐԵԱՆ

Աւրախութեամբ այցելեցի եւ հիացմամբ տեսայ Ազգին մեծ պատիւ եւ մխիթարութիւն պատնառող Գարակէօզեան որբանոցը: Եւրոպական նման շէնքեր այցելող ու տեսնող անհատ մը՝ ուրախութեամբ կը յայտարարեմ որ Գարակէօզեան որբանոցի շէնքը կը մրցի եւրոպական նման հաստատութեանց շէնքերուն հետ Անմահ մնայ շինող բարերարին յիշատակը:

Մարտութեան տեսա կէտով ուրախ եմ շնորհաւորելու տնօրէնութիւնը եւ վարչութիւնը:

Իսկ դասաւանդութեանց տեսակէտով, ուրախ պիտի ըլլայի

եթէ երբեր փրանսերէն լեզուն մէջ թիչ մը աւելի վարժ տեսնէի աշակերտները. բայց տեսչութեան ներկայ ջանքերը կը յուսադրեն ապագային համար:

Իսկ ամէնէն աւելի հիացումով տեսայ ապագայ արհեստանոցի ծրագիրը: Աս վերջին տարիներուն մէջ, Ֆրանսա զաղթող ազգայիններէն միայն արհեստաւորները գործ կը գտնեն:

Գարակէօզեան որբանոցը իր պաշտպանեալներուն, ընդհանուր կրթութեան հետ արհեստներ սորվեցնելով, ապահոված կ'ըլլայ անոնց ապագայ բարօրութիւնը:

Մալայիս հասարակեալ եւ անդամ Փարիզի
Աշխտեակր. ընկերակառն

15 Մարտ 1914

Չ. ԽԱՆՉԱՏԵԱՆ

Այսօր պատիւ ունեցայ այցելել Գարակէօզեան նորաշէն որբանոցը, եւ մականցայ հոնկէ մեծ գոհունակութեամբ. մանաւանդ ամենամեծ մխիթարութիւն եւ գոհունակութիւն՝ որովհետեւ հիմա ազգը կ'ունենայ տիպար որբանոց մը, օժտուած ամենակերպ բարեկարգութեամբ եւ խնամքով. մխիթարութիւն՝ որովհետեւ հիւն որբանոցին տեղ այս նորը՝ յոյս կու տայ ինձ թէ Մեր ազգին ապագան ալ պիտի ծիծաղ լինէր օր մը ու բարձրանար, ինչպէս ծովեզերեայ հիւն լիւր շէնքին խեղճ որբուկները եկան բարձրանալ այս փառաւոր, բարձրադիր, գեղեցիկ շէնքին մէջ:

Գարակէօզեանց յիշատակը անթառամ ծաղիկներու պէս թո՛ղ յաւերժանայ եւ հոն վաստակաւոր ուսուցիչներն իրենց քրտինքը բեղմնաւոր դաշտներու մէջ թափելու թո՛ղ ջանան, մեր ամէնուս յարգանքին արժանանալով:

9/4/914


ՏՕՔԹ. Վ. Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

Այս հաստատութեան մարբութեանը, կարգ եւ կանոնի ու կուլտուրայի վառ արտայայտութեան եւ միանգամայն հիացած եմ եւ յանձին այս հիմնարկութեան եւ հաւատում եմ մեր ապագային:

27/4/914

Պետական Գումարի Անդամ
ՄԻՔԱՅԷԼ ՊԱՊԱՉԱՆԵԱՆ

Իսթանպուլ այցելութեանս առթով իմ ամենամեծ հաճոյքներէս մին եղաւ տեսնել Գարակէօզեան Որբանոցը, ուր մարբութիւնը, առողջապահական դրութիւնը, աշակերտներին իրենց



Հասարակական հանդիսանոց

դասերի ժամանակ ցոյց տուած ուշադրութիւնը, իրենց աշխոյժ վարմունքը եւ իրենց կայտառութիւնը ցոյց կու տան թէ սըրտի, մտքի եւ ֆիզիքական կրթութեան խնամք կը տարուի այս որբանոցին մէջ, ինչ որ ոչ միայն պարծանք կը բնէ Հիմնադրին ու խնամակալութեան, այլեւ պատիւ՝ իր պաշտօնէութեան:

Եթէ որբերի գոյութիւնը տխրութիւն կը պատճառէ, այս որբանոցին գոյութիւնը ուրախութիւն մը կը պատճառէ եւ այս զգացումով կը մեկեւիմ սոյն ազգօգուտ հաստատութենէն:

13/5/914

Մ. ՓՈՐԹՅԻՒՆԱՆ

Առողջապահիկ տեսակէտէ նախանձելի գտայ հաստատութիւնը: Առաջդիմութեան ամէն պատեհութիւն ունի, եթէ հոգ տարուի նոխացնելու գրադարանը եւ բարձրացնելու վարժարանը ձեռարուեստի նիւղերուն մէջ:

19/5/914

Ա. ՎՈՒՄԵԱՆ

Ես շատ անգամ այցն ած էի Ա. Յակոբայ Որբանոցը, ետիգուլէ եւ միշտ տխուր զգացում մը կը մնար ներսս: Այսօր առաջին անգամ եկայ տեսնել Գարակէօզեան Ազգ. որբանոցը, որ սքանչելի կերպախոսութիւնն է հինին: Ազգի մը համար դժբախտութիւն է զբաղիլ որբերով, այրիներով, անկեալներով: Այդ դժբախտութիւնը մեղմացնող օրհնութիւն մըն է այս հաստատութիւնը: Օրհնեա՛լ ըլլայ բարերար Տ. Գարակէօզեան եւ օրհնեա՛լ ըլլան մանատանդ Գարակէօզեաններ՝ որ բարիքը մարմնացուցին այսքան գիտակցութեամբ եւ շրջութեամբ: Օրհնեա՛լ ըլլան այս հաստատութիւնը իր մարտութեան եւ բարձրութեան մէջ պահելու աշխատող պաշտօնեաներ: Տա՛յր նրկինք, որ այս յարկին տակ խնամուողներ ապրէին բարութիւնը իրենց կեանքի բոլոր ընթացքին մէջ: Սուրբ Աւետարանի խոստումը իրագործուած է հոս. «նչ թողից զձեզ որբս»:

ԲԱՅԳԷՆ ԵՊՅԿ. ԿԻՒԼԷՍԷՐԵԱՆ
(Յենոյ Կարողիկոս Անրչխոսի)

21/5/914

Մինչեւ որ բոլորովին սահմանադրական ժողովուրդ մը ըլլանք, այս որբանոցը կրնայ տիպար օրինակն առնուիլ ազգ. հաստատութիւններու:

Կ'օրհնեմ յիշատակը բարերարին: Պատիւ անոր կտակը իրագործող ընտանիքին եւ Ազգ. Վարչութեան: Յաջողութիւն Որբանոցի խնամակալութեան, արդիւնաւորում կրթական պաշտօնեաներու վաստակներուն:

Առաջնորդ Պրուսոյի
ՍԱՀԱԿ Ծ. ՎՐԿ. ՕՏԱՊՈՇԵԱՆ

28/7/914

Ասիմանագրութեան վերահռչակումէն առաջ, Իսթանպուլ գտնուած միջոցիս, իրր կրօնքի եւ բարոյախօսութեան ուսուցիչ կ'երթայի ետիգուլէ, Ս. Յակոբայ մատուռին կից Ազգ. Որբանոցը, ուր իրապէս տխրատեսիլ եւ անշուք այգ սրբանոցն ալ որր մըն էր ինքնին պարունակեալն ու պարունակողը տըխրագոզեցիկ էին, բայց երբ եօթը տարի յետոյ եկայ հոս եւ այցելելու բախտն ունեցայ մեծանուն ու մեծահոգի Գարակէօզեանի շինել տուած այս հոյակապ ու փառաւոր սրբանոցը՝ զգացի եւ տեսայ որ Ազգ. Որբանոցը իր որր վիճակէն ելած ու փոխուած է:

Կ'օրհնեմ հիմնադիրն ու հայ ազգս, որ զիտցած ու կրցած է ծնողազուրկներու համար կառուցանել այս տիպար սրբանոցը, ուր ազգին բախտազուրկները պիտի կրնան պատասպարուիլ ու մտքով ալ զարգանալ եւ ապագային ազգին օգտակար անհատներ ըլլալ:

Կը մաղթեմ ի սրտէ, որ հայ ազգը թիչ սրբեր ունենայ բայց շատ Գարակէօզեաններ:

24 8/914

ՆԵՐՍԷՍ ԵՊՍԿ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

— Լուծիւնը՝ որ սոկի հանչցուած է իմաստուններէն, այս յարկին մէջ տիւրոյ զլխաւոր յատկութիւններէն մէկը տեսայ, ուրիշ առաւելութեանց հետ միանալով՝ ան պիտի արդիւնաւորէ անշուշտ հոս ի գործ դրուած քանրերը, յօգուտ ուսանող սրբերու ապագային:

29 8/914

Ս. ԴԱԻԹԵԱՆ

Գարակէօզեան Ազգ. Որբանոցը այցելելով, զերագոյն գոհունակութիւնս կը յայտնեմ, նախ շէնքին ներքին եւ արտաքին մասին մարբութեանը, երկրորդ՝ ձեռարուեստի գործատունը այցելեցի ուր արձանագործութեան նմոյշները տեսնելով աշակերտաց ունեցած հաշակը եւ ընդունակութիւնը գնահատելի գտայ: Արդէն որբանոցի միւս մասերը ծանօթ են: Ուրախութեամբ կ'արձանագրեմ իմ սրտագին գոհունակութիւնս:

21/2/915

ԵՐ. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

Յոյն ազգ. բարենպատակ հաստատութեան համբաւն արդէն իմացած ըլլալով շատերէ, ուրախ եմ գոհունակութեամբ յայտնելու որ այցելութեանս տպաւորութիւնը կրկնապատիկ եղաւ, անձամբ տեսնելով՝ թէ՛ շէնքին յարմարութիւնն ու մարբութիւնը եւ թէ՛ անձնուէր պաշտօնէութեան գործակցութիւնը,

Մանուանդ Մաբգարեան էփ.ին. որ իր վրայ ամփոփած կ'երեւի այս կարգի բարեգործութեան մը խաչալին նշգրիտ իրականացումը:

14 3 915

Հ. Թ. ԹՈՒՄԱՆՅԱՆ,
Մխիթարեան Վեհեկոյ

Այս բարենպատակ հաստատութիւնը մեր հայ ազգին ամենամեծ պարծանքներէն մին գտայ ես, թէ՛ իր տնտեսական եւ թէ՛ բարոյական շատ մը առաւելութիւններով: Արախ անհուն գոհունակութեամբ կը յայտնեմ իմ անկեղծ ցանկութիւնս եւ կը մաղթեմ որ այսպէս շարունակուի միշտ եւ ըլլայ մեր Հայութեան համար պարծանք մը՝ ի տես օտարականներուն:

14 3 915

Հ. ՅՈՎԱՆՓ Տ. ՄԱՐԳԱՐԵԱՆ,
Վեհեկոսեան Մխիթարեան

Այսօր, կարծեմ մէկ տարուան անջրպետով, երկրորդ անգամն է որ Գարակէօզեան որբանոցը կ'այցելեմ: Առաջին անգամուն՝ շէնքը միայն աւարտած ու կահաւորուած՝ իր փոքրիկ ու դժբաղդ հիւրերը ընդունելու կը պատրաստուէր: Այդ այցելութեանս մէջ ամէն նախահոգ, կարգի կանոնի կատարելութիւնը կար արդէն: Այսօր հայ մանուկները եկած հաստատուած են եւ կեանքը մտցուցած են այստեղ: Առաջ չվառուած կանթեղ մըն էր, այսօր իր բոլոր լուսավառութեանը մէջն է ան: Սիրալոծար այցելեցի բոլոր դասարանները, հաստատութեան բոլոր մասերը: Չգարմացայ գտնելով հոն ինչ որ առաջին այցելութիւնս նախատեսել կու տար՝ կատարելութիւն: Մէկ դիտողութիւն մը ըրի այն չափազանց համեստութեան մասին որով այս տիպար հաստատութիւնը ինքզինքը կը պահէ հանրութեան աչքէն: Ամէն գուրգուրանքի արժանի այս մեծ գործը պէտք է ամէն Հայերուն սրտին մէջ իրեն յատուկ տեղը ունենայ:

17 30 Ապրիլ 1915

Գ. ԶՈՂՐԱՊ

Պատիւ ունենալով ներկայ գտնուիլ Գարակէօզեան որբանոցին շրջանաւարտ դասարանին աշխարհարարի բնութեանց, կը փութամ արտայայտել սրանչանքս աշակերտներու այդ նիւղին մէջ ունեցած մեծ յաջողութեան մասին եւ կը շնորհաւորեմ սրտագին, ինչպէս պաշտօնէութիւնը, նոյնպէս խնամակալութիւնը:

15 6 915

Զ. Հ. ԱՍՍՏՈՒՐ

Կարակէօզեան Ազգ. որբանոցի վեցերորդ դասարանի աշակերտներուն Հայերէնի բնութեան և շարադրութեան ընթերցման ներկայ գտնուելու պատիւը ունեցայ: Տպաւորութիւնս եղաւ կատարեալ գոհունակութիւն: Որբանոցին նիւթապէս և բարոյապէս այս գեղեցիկ և խնամուած յարկին տակ պիտի փափարէի շատ աւելի թուով աշակերտներ տեսնել, որովհետեւ այն զգացումը ունեցայ որ ներկայ տնօրէնութեան և պաշտօնէութեան կարողութիւնը աւելիին և լաւագոյնին իսկ համապատասխանելու ոյժ մը կը ներկայացնէ: Այս առթիւ կը համարձակիմ խոնարհարար այս թելադրութիւնը ընել Պատնամակալութեան:

15 6 915

ԵՐ. Տ. ԱՆԿՐԷԱՍԵԱՆ

Կարակէօզեան որբանոցին շրջանաւարտ կարգին բնական գիտութեանց բերանացի բնութեան ներկայ գտնուելու պատիւն ունենալով տեսայ գոհունակութեամբ որ աշակերտաց մեծամասնութիւնը յաջող պատասխաններ տուին իրենց ուղղուած հարցումներուն, ուստի կը փութամ իմ շնորհաւորութիւնս յայտնել որբանոցին տնօրէնութեան:

1915

Ի. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Որբանոցին շրջանաւարտներու կարգին թուարանութեան, երկրաչափութեան և տոմարակալութեան բնութիւններուն ներկայ գտնուեցայ և ուրախութեամբ տեսայ որ այս գիտութիւնները իբրև միջոց զործածուած են տղոց մէջ նշգրիտ սրամաքանութիւն մը կազմելու: Մանաւանդ թուարանութեան մէջ զործնականի տրուած կարեւորութիւնը ամէն զովեստէ վեր է ու այդ նիւղը դասաւանդող պարտնը զովեստի արժանի:

1915

Պ. Պ. ԱՏՐՈՒՆԻ

Չափազանց գոհ մնացի այս այցելութենէս՝ որուն համար անկեղծ շնորհաւորութիւններս կը յայտնեմ մեր եղբայրակից հայ ազգին՝ առանկ փառաւոր հաստատութիւն մը պահելուն համար:

1915

ՏԻԿ. ՄՕՍԹՐԱՏՈՒ

Առաջին անգամ ըլլալով առիթը կ'ունենամ այցելելու Կարակէօզեան Որբանոցի շէնքը, ուր տիրող կանոնաւորութիւնը, աշակերտաց ձեռակերտները և ի մասնաւորի դասարաններու հոյաւուն և առողջապահիկ վիճակը և ուսուցիչներուն ու

աշակերտներուն միջեւ տեսնուած փոխադարձ գուրգուրանքը
ենթադրել կուտան ինձ նոյն յառաջդիմութիւնը սաներու իմա-
ցական եւ բարոյական մարզերուն վրայ, ըստ ամենայնի արժա-
նի բարեյիշատակ բարերարին եւ իր արժանաւոր ժառանգնե-
րուն բաղձանաց:

26 Ռգոս. 1915

ԶԱՐՄԱՅՐ ՔԶՆՅ. ԿԵԶԻՒՐԵԱՆ,

Պատենութիւնն ունեցայ այցելելու Գարակէօզեան որբա-
նոցը: Սրաի մեծ գոհունակութիւն կ'զգամ հոն տիրող կատար-
եալ մաքրութենէն, կաշգապահութենէն եւ կանոնաւորութենէն,
որոնք պերնախօս սպաքոյցներ են հաստատող՝ թէ հաստատու-
թիւնը կը գտնուի կարող ձեռքերու խնամքին ներքեւ. բան մը
որ արժանի է շնորհաւորութեան: Միայն թէ հաստատութեան
ամէնէն աղքատ մասը կը կազմէ մատենադարանը, որ հոգա-
ծութեան կարօտ է: Այս մասին կ'արժէ հրաւիրել ուշադրու-
թիւնը՝ որբան Պատ. խնամակալութեան, նոյնրան եւ զբազէտ-
հեղինակ բարեսէրներուն: Լիայոյս եւ որ ուրիշ առթիւ այս
թերին լրացած տեսնելու ուրախութիւնը կ'ունենամ:

12/915

Ա. Յ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Ներկայ գտնուեցայ Գարակէօզեան Որբանոցի ընթացա-
ւարտ կարգին ֆրանսերէնի, ազգ. պատմութեան եւ ընդհ.
պատմութեան բնութիւններուն. մեծամասնութիւնը լաւ կեր-
պով սորված եւ իւրացուցած էր աւանդուած դասերը, ինչ որ
ցոյց կու տայ թէ՛ տղոց ուշիմութիւնը եւ թէ՛ մանաւանդ ու-
սուցիչ պաշտօնէութեան կարողութիւնն ու խղճամիտ աշխա-
տութիւնը:

1915

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

Գարակէօզեան Որբանոցին շէնքը զեղեցիկ եւ նպատակա-
յարմար է, բոլոր առողջապահիկ պայմաններով օժտուած: Տիրող
մաքրութիւնն ու կարգապահութիւնը զնահատելի: Որբա-
նոցը աւելի գիշերօթիկ դպրոցի մը տպաւորութիւնը կը թողու
այցելուին վրայ: Ուսուցչական մարմինն ալ իր տնօրէնով
գիտակից են իրենց կօչումին: Շատ գոհ տպաւորութեամբ կը
մեկնիմ օրհնելով բարերար հիմնադիրին յիշատակը:

12 Յունիս 1919

ՄԵՍՐՈՊ ԵՊՈԿ. ՆԱՐՈՅԵԱՆ

Հանութեամբ այցելեցինք ազգաշէն հաստատութիւնը, ուր

բարերար հիմնադրին մեծագործութեան համեմատ կանոնաւորութիւն գտանք եւ կը շնորհաւորենք Տնօրէնութիւնը:

17 Օգոստ. 1919

ՅՈՎ. Զ. ԵՊՍԿ. ՆՍՂԼԵԱՆ

Վ. ԽԱԿԱՆՈՐ ՏՐԱՊԻԿՈՆԻ

Պ. ՎՐԳ. ԲԻՐԷՃԵԱՆ

Հ. Գ. ՎՐԳ. ՓԱՆՉԻԿԵԱՆ

Վարիչ Վ. ԽԵՆ. Մխիթարեան Վրժ. Խ

Զ Գ Ա Յ Ո Ւ Մ Ի Ս Ո Ւ Բ Ո Ւ Ս Ն Կ Ա Ր Ը

Գարակէօզեան Որբանոցը Գարակէօզեանի արծանն է, որուն ներքեւ պահպանութիւն գտած է մէկ մասը նորահաս սնրունդին:

Համալը այս խնակներուն, որոնք վաղուան հայ համայնքին հիմները պիտի կազմեն եւ յարգանք իրենց խղճամիտ Տնօրէն Պ. Յ. Թեղեանին:

27 Հոկտ. 1919

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Մեհնում Գարակէօզեան եֆեֆիանի ինսանիյեր համընա օլարագ ինճարնա հիմներ պուլուրսուլարը էյրամհանե կերեֆ հըֆ. զըսընհա վե կերեֆ Ֆեհնի միմարնա հեր նիհեթի մուհիպի իֆթիհար վե շայանը րագսիր օլսուլու:

7 Մայիս 1329

Մխալայ

ԹԱԼԷԱԹ

Մուհասսեհա հասըանան օլմագ իզերե էարըմը օլան վե անիբեհն բեֆ միւհեհմեյ րասիլար իյե մեֆրեպ վե էյրամհանե հալինե կիրմիթ պուլուրսուլու Գարակէօզեան երմեհի էյրամհանեհի զիյարեթ էյյեհիմ: Զալալը էերիմլերին էն ուֆաֆ ինքիյանարը պիլեֆի շիւքիներեֆ վե բեֆ պիլիլիմ Ֆեսաֆեարլըֆ էսիլերեֆ պեօյե միւնրագամ վե սրհնի պիւ միւհասեհեթի հայրիյեհին վիւհուրսէ կեթիթլիմեհ սեվկիլի վարանըմը իչին շայանը իֆթիհար օլսուլուհսան Գարակէօզեան Ֆամիլիարըն Ֆեսաֆեարլըզարը հեր հալսէ հալիպի րագսիթի: էյրամհանեհին միսիւրի րարիւհեհնա մուհրեհեմ Գիւրգուր Մարգարեան էֆեհիանի մեֆրեպի կեօրմեֆիլլըլմ հազըրնսաֆի միւսասեֆ վե լուրֆ վե նեզաֆերլերինե սանի պուրսուլայրնա քեհեֆիւր էլլերիմ:

11 7 329

Մեհլիաթի Մեպուսանը Օսմանի

Էնհիւմեհների Բեարիպի

ՄԷՀՄԷՏ

Իսրայելացիներու միակուսարը մեքենայիսի իշխնեք եւ
ալի պիտ մեզի ինրագ եքեւ շու երամանակի գիյարեք երմեք
պանքիյարմ: Կեօրսիւլիւմ ինքիգամսան տօլայր միւսիւրիւ մու-
րերեմի քեպրիք եքեւ վե մեմլեքեքիմիգե. պու կիպի միւսուսարը
քեասիւսիցի սիլեքիմ:

Միւսուսարը Իրմիլիլի Վաքիլի
Միւմեյիլի
Ա.Լ.Ի

Պու կիւն պեքայի գիյարեք Շիւլիսեք եւայիւն Գարակեօգեան եր-
մեքի երամանակեքից: կելուպ պիւրիւն սընքիւարը տօլաւարմ քու-
լեպեքեք պագրլարընա սօրուլան սիւալլարա գարեշ ալընան մար-
լուպա մուվաքիք նեվապարսան քեքիսարըն նիսիլեքի վե մեք-
քեպիւն ուսուլը իսարեպիսեք կեօրիւլեք ինքիգամ հուսուսուցեմի ին-
քիմամ շայմը քագիք օլուպ շու պապրա հիմմքիւրի սեպք: Եքեք
նեյեքի իսարե վե մեմուրիցի քեպրիք երմեքիլ: Բեպի Գանը եյ-
լեքիմ:

3 Մարտ 1330

Վիլայեք Մասրիք Միւքիքիլի
ՀԱՄԱԶԱՄՊ ՀԱՔԻ

Գարակեօգեան դրախտ որբանոցը այցելելուս առթիւ յա-
նուն ժառանգազուրկ հայ որբերու խորին երախտագիտութիւնս
կը յայտնեմ Գարակեօգեան բարեպաշտ եւ բարեգործ գերդաս-
տանին:

Կ. Վ. ՊԱՆՆՊԱՆԵԱՆ
(Տեառն էջսեան Վարժարանի)

Գարակեօգեան բարեպաշտ տոհմին անունը յաւերժացնող
Շիւլիլի Գարակեօգեան հոյակապ Ազգ. մրբանոցը այցելելու
առթիւք ունենալով կը փութամ տպաւորութիւններս նօթագրել:

Նախապէս իբր հիւանդանոց կառուցուած այդ շէնքը՝ նար-
տարապետական հնարաւոր փոփոխութեանց ենթարկուելով վե-
րածուած է արդի գեղակերտ որբանոցին: Օգասուն, վայելչա-
զարդ, մանկավարժական պահանջմանց համաձայն կահաւոր-
ուած, առողջապահական պայմաններով օժտուած արդի շէնքը
ուր ուսանող մանկութեան պիտի ջամբուին առատ սնունդ,
առողջ դաստիարակութիւն եւ ժամանակի պահանջմանց հա-
մաձայն գործնական արուեստ եւ գիտութիւնը, բաղձալի է
որ շնորհիւ խնամակալութեան անխոնջ ջանքերուն եւ կըր-
թական մարմնոյն անձնուէր աշխատակեանց ըլլայ ազգ.

այն տիպար հաստատութիւններէն մին, որուն յառաջդիմութեան համար Գարակէօզեան ընտանիքն ոչինչ չէ խնայած, իրենք ըլլալով հիմնադիրք, որրանոցը նկատելով իբրև իրենց բնակարանը եւ ուսանողներն ալ որդեգրած ըլլալով իբրև իրենց գաւակներք:

Յարգանք իրենց յիշատակին, երախտագիտութիւն նիւթապէս եւ բարոյապէս զայն բաջալերող իրենց պարագաներուն, եւ յաջողութիւն կրթական բոլոր պաշտօնէից:

Շէնքը գեղեցիկ, նպատակը վսեմ, մաղթելի է որ արդիւնքն ալ ըլլայ զովելի:

Գ.Ա.Ռ.Ե.Ի.Կ Մ. Գ.Ա.Ն.Ճ.Ե.Ա.Ն.
(Ուսուցիչ)

Որրանոցի մը գոյութիւնը ինքնին տխուր յուշարձան մըն է: Գարակէօզեան որրանոցը երջանիկ պալատի մը տպաւորութիւնը թողուց իմ վրաս: մ'ը էր թէ մեր բոլոր որրերն ալ՝ բազմակից ըլլային հոս գտնուող որրերուն, որոնք ապահովարար իրենց դատակարգին ամէնէն երջանիկներն են:

Վ.Ա.Հ.Ա.Ն. Թ.ՈՇ.Ի.Կ.Ե.Ա.Ն.

Հին որրանոցի շէնքին մոայլ տպաւորութիւնը փարատելու համար նորն այցելեցի, որրանոց չէ այս, այլ գիտութեան եւ լուսոյ տանար մը, ճաշակի կոթող մը, վայել Գարակէօզեան անունին: Գարակէօզեանց իտէալը եղած էր, որրին նայուածքէն ազգուած, պատրաստել անո՞ր ապագան, թո՞ղ ապահով ըլլան, յայտնի կը նշմարուի հոս այդ բարւոր ապագային: հետանկարը, գործին ձևունհաս՝ կարող տնօրէնի մը հարտար հսկողութեան տակ: Բարերարութեանց լաւագոյնն է. այո՛, եկեղեցի շինել է:

Ե. դասարանի հայերէնէ փրանսերէն թարգմանութիւնները տեսայ, բիչ ատենի մէջ զգալի յառաջդիմութիւն, երգեցողութեանց մէջ եւս: Փառաւոր շէնքին հետ փառաւոր արդիւնք կ'ակնկալուի: Պատիւ եւ փառք ողբացեալ Տիգրան Գարակէօզեանի յիշատակին:
ՏԻՐԱՅՐ Ծ. ՎՐԳ. ՄԱՐԳԱՐԵԱՆ.

Որրանոցները ցոլացուցելներն են ազգին նկարագրին եւ մեծութեան:

Գարակէօզեան որրանոցը իր արտաքինով եւ ներքինով ամենաախորժիկ տպաւորութիւնը կը թողու այցելուին վրայ:

Իր վայելուչ տնօրը, փառաւոր մուտքը, լուսասփիւռ դասարաններն ու ննջարանները ինչպէս նաեւ տիրող մաքրութիւնը՝ պատիւ կը բերեն ազգին, ինչպէս պատիւ կը բերեն որրանոցին վարչութեան եւ ուսուցչական կազմին՝ աշակերտներու բարեկրթութիւնը եւ ընդհանուր կարգապահութիւնը:

Երջանիկ եղայ այսօրուան այցովս՝ գնահատելի բարձրութեան վրայ տեսնելով ազգին արժանապատուութիւնը:

Թող օրհնուած ըլլայ յիշատակը բարերարներուն:

Յ. ՊԱՊԻԿԵԱՆ

(Տեսուչ Աեւերնեան ձեւարանի)

Այսօր առաջին ագամ ըլլալով առիթն ունեցայ այցելելու Գարակէօզեան Ազգ. Որրանոցը եւ պատ. տնօրէն Գ. Մարգարեան էֆէնտիի առաջնորդութեամբ աչքէ անցրնելով ըստ յարկերը, կրեցի գոհունակ տպաւորութիւն մը, տեսնելով ամէն տեղ տիրող կանոնաւորութիւնն ու մաքրութիւնը: Ծնորհաւորելի է մասնաւորապէս պատ. խնամակալութիւնը իր ըրած ընտրութեան համար՝ յանձին Գ. Մարգարեանի, իբր տնօրէն հաստատութեան, ուր բաղդազուրկ որբերն առարկայ եղած են հայրական խնամքի մը եւ զգալի յառաջդիմութիւններ ըրած են ուսմանց եւ ձեռական աշխատութեանց մէջ: Ապահովաբար կրնայ ըսուիլ թէ պատ. խնամակալութեան աշխատութիւնները տահմանուած են արդիւնաւոր ըլլալու: Փափաքելի է միայն, որ եթէ հնար է, ձեռական աշխատութեանց վրայ աւելցունին նաեւ կօշկակարութեան, գերձակութեան եւ այլ նման արհեստներ:

ԲԱՐՍԵՂ ԱԼԵՏԻՍԵԱՆ

Այս անգամ եւս որրանոցը այցելելուս, գտայ տիպար կարգապահութիւն եւ մաքրութիւն: Հիացայ տղայոց դասարաններու մէջ՝ նոյնիսկ առանց դասի մնացած միջոցներուն եւս՝ ունեցած հանդարտ աշխատասիրութեան վրայ: Լաւ լարուած մեքենայ մը, ամէն ինչ իւր պաշտօնին վրայ: Ծնորհաւորելի է Պատ. խնամակալութիւնը եւ իւր ամենօրեայ աշխատութիւնը չզլացող Պատ. Տնօրէնութիւնը: Նոյնպէս ինձ հիացում ազդեց տղայոց հողէ արձանագործութիւնը. փափաքելի է որ բարեյիշատակ բարերարին արձանը շինելու աշխատող Արշակ Խաչիկեան պատանիին՝ այդ նիւղին մէջ ունեցած ընդունակութիւնն արդիւնաւորելու միջոցներն ի նկատի առնէ Պատ. խնամակալութիւնը:

ՅԱԿՈԲ ՀԱՄԱՄՃԵԱՆ

Այսօր շրջանաւարտ կարգի աշակերտաց կրօնի եւ բարոյագիտութեան հարցաքննութեան ներկայ գտնուելով, ըստ բաւականին յուսատու վիճակի մէջ տեսայ զանոնք:

1915

ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ԱՐՔ. ԱՐՇԱՐՈՒՆԻ
(Նախկին Պատրիարք)

Ազգային սոյն տիպար որքանոցը այցելութիւնս որքան ալ տխրութեան քողով համակուած սկսայ, ուրախութեան ու մխիթարութեան զգացումով կ'աւարտեմ, տոհմիս ասպագայ երջանկութեան մէկ բոյնը նշմարելով անոր վրայ: Շնորհաւորութիւնն, շնորհակալութիւնն, մաղթանքներ հիմնադրին, պաշտպաններուն հետ աշխատող մարմնոյն:

1915

ՍԼ. ՎՐԴ. ՍԻՐՈՒՆԵՍԱՆ

Այսօր պատեհութիւնն ունեցայ այցելելու Գարակէօզեան Որբանոցը, ուր կը պատսպարուին հարիւրէ աւելի որբեր, խիստ մեծ հոգածութեամբ: Գասարաններուն, ննջատենակներուն եւ բոլոր վայրերուն մէջ տիրող մաքրութիւնը մեծ գովեստի արժանի են: Այս հաստատութեան իւրաքանչիւր վայր կը հաստատեն թէ հիմնադրին անունը անմահ պահելու համար տնօրէն Մարգարեան էֆէնտին, իւր հայրական խնամօք եւ հոգածութեամբ ամէն ջանք ի գործ դրած է: Ի սրտէ կը շնորհաւորեմ յարգելի Մարգարեան էֆէնտին եւ կը մաղթեմ որ առւետրական ճիւղերն աւելի գործնական ընթացքի մը մէջ մտնեն:

ՕՆՆԻԿ Ի ՀՍԱՆ

(Երեսփոխան Իզմիրի)

Փափաքելով Գարակէօզեան Ազգ. Որբանոցի շրջանաւարտներու քննութեանց ներկայ գտնուել, այսօր առիթը ունեցայ ունկնդիր ըլլալ իրենց քաղաքական տնտեսագիտութեան քննութեան եւ գոհունակութեամբ դիտեցի որ աշակերտք այնքան կարեւոր ու գործնական այս ճիւղը լաւ մարսած էին, ինչ որ պատիւ կը բերէ իրենց ուսուցչին: Բայց ասկէց աւելի իմ ուշադրութիւնս գրաւեց յիշեալ աշակերտներուն բարեկիրթ ու կենցաղագէտ ընթացքը, որ ասպացոյց է իրենց տնօրէնին եւ ուսուցչաց հայրական խնամքին ու խղճամիտ հոգածութեան: Նոյնպէս իմ անկեղծ շնորհաւորութիւններս Պատ. Խնամակալութեան, որ անշուշտ գոհ պէտք է մնացած ըլլայ իր փափաքներուն պսակումը տեսնելով:

20 Յունիս 1915

ՆՇԱՆ ԴՈՒԿՍՍԵԱՆ

Այսօր այցելելով հաստատութիւնն ու շրջագայելով ամէն կողմերը, տիրող կանոնաւորութիւնը եւ կատարեալ մաքրութիւնը տեսնելով սքանչացայ եւ իմ շնորհակալութիւնս կը յայտնեմ խնամակալութեան եւ Տեսչութեան:

Գ.Ա.Ռ.Ն.Ի.Կ ՊԵՁԱԶ

(Անդամ Վարչաւրեան Ազգ. Պատրիարքարանի)

Այս օղաւէտ, գեղեցիկ եւ ընդարձակ շէնքը, դասարանները եւլն. եւլն, ամէնքը զատ զատ շրջեցայ մեծ հաճոյքով եւ հիացայ ընդհանուր կայաւորութեան եւ մաքրութեան համար: Մանուկները արթուն, կայտառ եւ ուշիմ կերպարանքով զարմացումս գրաւեցին: Այս հաստատութեան հիմնադիրները եւ խնամակալները ողջ ըլլան եւ Աստուած զիրենք վարձատրէ:

Մ. Ա.ՃԻՄԵԱՆ

Այցելելով այսօր Գարակէօզեան Որբանոցը, հոն տիրող մաքրութեան, կանոնաւորութեան եւ անթերի կարգապահութեան մասին մեր ստացած անխառն եւ գոհ տպաւորութիւնները հոս արձանագրել հաճոյքէ գերիվեր է մեզ:

Կ'օրհներ յիշատակը այն կտակարարին որ զաղափարը յղացած եւ նուիրած է այսքան օգտակար հաստատութիւն մը ազգին: Կը շնորհաւորենք եւ կարողութիւն կը մաղթենք կտակը գործադրողներուն:

ՄԱՔՐՈՒՂԻ Գ. ԱՇՃԻԱՆ

5 Հոկտ. 1919

(Չեխուկոյ Ազգ. Կեդր. Որբանոցի Տնայունի)

1895—1900 տարիներու ընթացքին, մօտաւորապէս հինգ տարի, Ազգ. Հիւանդանոցի բժշկութեան պաշտօն վարած ըլլալուս՝ Ս. Յակոբայ որբանոցի անխնամ եւ ողբալի վիճակը կար երեւակայութեանս մէջ, բայց այսօր Գարակէօզեան Ազգ. Որբանոցի այցելութիւնս հին որբանոցի տպաւորութիւնը քանդելով ուղեղիս մէջ փառաւոր պալատի մը տեսարանը պատկերացուց: Ուսուցիչներէն Վարապետ է՛ր. Պօտիկեանի առաջնորդութեամբ, բոլոր դասարանները, աշխատանոցը, ննջարանը, հանդերձատունը, լուացարանը նւ բաղնիքը այցելեցի. ամէն տեղ մաքրութիւն գտայ. դասարաններն ու ննջարանը լուսաւոր եւ օղաւէտ են. բոլորն ալ դէպի հարաւ կը նային, ինչ որ առատ արեւ ընդունելու միջոց մ'է, բժշկական տեսակէտով ընդունելի:

Փափաքելի է որ արուեստանոցի մասը աւելի գործնական ճիւղեր եւ մասեր ունենայ որբերուն ապագան ապահովելու համար. մեր որբերը ուսեալ արհեստաւորներ պէտք է ըլլան:

ՏՕՔԹ. ՄՈՒԹԱՅԵԱՆ



Ե Ր Կ Ր Ո Ր Դ Շ Ր Զ Ա Ն


(1920-1938)

1. Ա. ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Որբանոցին խնամակալութիւնը, որ սաներու տեղափոխութեան պատճառով հեռու մնացած էր հաստատութենէն ու կազմալուծուած վիճակ մը կը ներկայացնէր, 1920ին կը վերակազմուի հետեւեալ կերպով.

- Եղուարդ Գարակեօզեան
- Աւեհիս Բեֆեօզեան
- Ժիրայր Խորասանձեան
- Յակոբ Յակոբեան

Նորակազմ խնամակալութիւնը 30 Յուլիսին (1920), ընկերակցութեամբ Էսաբեան վալժարանի տնօրէն Հայկ Խօճասարեանի, կ'այցելէ Որբանոց եւ հաստատութեան կրթական կեանքին նոր զարկ մը տալու համար, թափուր մնացած տնօրէնութեան պաշտօնին կը կոչէ ծանօթ դաստիարակ Արամ Նիկողոսեանը:



Նոյնընտէր տնօրէնը 1 Օգոստոսին պաշտօնի կը ձեռնարկէ եւ ընտանեկան պարագաներով իր բնակութիւնը կը հաստատէ որբանոցի շէնքին մէջ:

Ա. Նիկողոսեան զօրաւ ր տարրերով կ'ամբողջացնէ ուսուցչական մարմինը: Իրեն գլխաւոր զօրավիգ կը հանդիսանան ծանօթ դաստիարակ ուսուցիչ Արմենակ Պաղտատեան եւ Տիկինը, Յարութիւն Սարայտարեան եւ ուրիշներ:

Արամ Նիկողոսեան



Տնօրեն Արամ Եփրոզյանի շքանի ռազմայական Վարկինը և շքանաւարները

Լայն իրաւասութիւնն կը տրուի իրեն հիմնական փոփոխութիւններ կատարելու կրթական ծրագրին, ուսուցչական մարմնին ու ներքին պաշտօնէութեան կազմին մէջ: Նոյն ատեն, նոր բաժանումներով կ'ընդարձակէ արհեստանոցի բաժինը ու կը հաստատէ նաեւ Գիւղատնտեսութեան ճիւղ մը:

ՈՐՐԱՆՈՑԻ ՅԱՐԱԿԻՑ ՊԱՐՏԻՉՈՒՆ ԿՅՈՒՄԸ

Այս ծրագրին գործադրութիւնը հնարաւոր կը դառնայ մահաւանդ իր պաշտօնավարութեան սկզբնական շրջանին զուգահիսոյ Որբանոցին այժմու ընդարձակ պաշտէզին յաւելումովը: Շուրջ 1800 կանգուն տարածութեամբ այդ հողամասին կցումը



Հրանդ Մանավեան

տեղի կ'ունենայ հետեւեալ պարագաներու տակ. — Որբերուն առօրեայ քանջարեղէնը ապահովելու՝ նպատակով, Հաստատութեան Խնամակալութիւնը՝ նախաձեռնութեամբ Եղուարդ Գարակէօզեանի, ծանօթ իրաւագէտներու հետ խորհրդակցելէ յետոյ, գնումի համար դիմումներ կը կատարէ պատկան իշխանութեան մօտ եւ պատասխան կ'ստանայ թէ «հազի՛նէի հասսայ»ի ապրանքը վաճառքի չի կրնար հանուիլ: Ասոր վրայ չորրձին հետապնդումը կ'ստանձնէ նոյն ատենուան Իշխանաց Կղզիներու քաղաքապետական տնօրէն Հրանդ Մանավեան, որ իր անխոնջ

պրպտումներով կը յաջողի Թափուի արձանագրութիւնները գտնել եւ խնդիրը հանել նախարարաց Խորհուրդին առջեւ ու Մեծ Եպարքոս Ալի Բիգա փաշայի միջոցաւ ձեռք բերել Կայսերական Հրովարտակ մը, որով այդ ընդարձակ գ'տիւնը կը շնորհուէր որբանոցին: Պաշտօնական եւ օրինական ծախսերու գումարը շուրջ 15000 ոսկի, կը գանձուի ելիւմտական նախարարութենէն ու կը յատկացուի փոխանցման գործողութեանց: Նորաստաց հողը իսկոյն կը վերածուի տղոց զբօսատեղիի եւ մասամբ ալ կը յատկացուի մշակութեան:

ՆԵՐՔԻՆ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1920—21 տարեշրջանին Որբանոցը ունէր 175 սաներ՝ բաժնուած նախակրթարանի 6 եւ նախապատրաստական 2 կարգերու վրայ:

Արամ Նիկողոսեանը տնօրէնութեան շրջանը կը տուէ մինչեւ 1928: Ան իր դաստիարակչական ու մանկավարժական փորձառութեամբ եւ իւրայատուկ ըմբռնումներով կը վարէ հաստատութիւնը: Պարտիզամշակութեան, հաւաքութեան, անասնաբուծութեան եւ արհեստներու ընծայուած բացառիկ կարելորութիւնը, ի վերջոյ անհամաձայնութիւն ստեղծեց իր եւ Խնամակալութեան միջեւ: Անոր անձնագրոջմ գործունէութիւնը եւ իր շրջանին յատուկ անցքերն ու իրողութիւնները, ինչպէս նաեւ կրթական հունձքը կու տանք ստորեւ արագ ուրուագծումով մը:



Արմենակ Պաղտատեան

1920—21ին 40 սաներ Ազգ. Խնամատարութեան վերադարձուելով՝ նախապատրաստական կարգերէն մէկը կը ջնջուի: Իւրաքանչիւր դասարան կը յանձնուի գիշերօթիկ ուսուցչի մը հսկողութեան, վերջ տրուելով այցելու ուսուցչի դրութեան:

Որքանոցը կ'ունենայ հետեւեալ հինգ շրջանաւարտները.—

Օր. Անսէիս Ա. Նիկողոսեան

Մարտիրոս Մարտիկեան Յովհաննէս Ալալանյեան

Մովսէս Շուշիկեան Մարգիս Զիլիկիբեան

Խնամակալութեան արձանագրութիւններէն կը տեղեկանանք թէ 4 Մարտ 1921ին որքանոց կ'այցելէ «Հայ Տրամաթիք» թատրոնի վարիչներէն Տրդատ Նշանեան եւ կը բանախօսէ, նիւթ ունենալով հայ բեմին կարելորութիւնը եւ մեր լեզուին առողջանութեան հետ անոր ունեցած աղերսը: Կ'արտասանէ նաեւ Դուրեանի «Տրտունջք»ը եւ Ֆրանսուա Դօբէի «Դարբիններու Գործադուլը»:

1921—22ին դասաւանդութիւնները կը վերսկսին 135 սաներով: Բժշկական աչալուրջ սպասարկութիւն մը կը հաստատուի

Տօթթ. Բ. Տինանեանի հսկողութեան ներքեւ: Բթի եւ կոկորդի դարմանումները անձնուիրաբար կը կատարէ Տօթթ. Տատուր, իսկ հարկ դատուած գործողութիւնները տեղի կ'ունենան Պուլկարաց հիւանդանոցին մէջ:

Որքերը ընտանեկան խնամքի առարկայ կ'ըլլան եւ մեծ կարեւորութիւն կ'ընծայուի անոնց սնունդին, հագուստ կսպուստին եւ քարոյական դաստիարակութեան: «Ապշելու արուեստ» անունով դասընթացք մը կը հաստատուի եւ շաբաթը ժամ մը կը խօսի տնօրէն Ա. Նիկողոսեան:

Կը հիմնուի գեղարուեստական աշխատանոց մը, ուր կը յայտնուին փոքրիկ նկարիչներ, զծագրիչներ ու քանդակագործներ: Իսկ քեմական ընդունակութիւն ցոյց տուող սաներ ներկայացումներ կու տան: Ասկէ զատ կը կազմակերպուի լսարան մը, ուր հանդէսներ եւ քանախօսութիւններ տեղի կ'ունենան:

Բացի առօրեայ մարզանքներէ, տղոց գործնական դասեր կը տրուին տնական աշխատանքներու (խոհանոց, ճաշարան, հանդերձատուն եւլն.): Շատեր կը հետեւին երկրագործական աշխատութեանց: Ուրիշ ճիւղ մըն էր գիւղատնտեսութիւնը, ուր սաները կը տեսնեն ու կը սորվին հաւաքուծութիւն, ինչպէս նաեւ աղանի, ճագար, խոզ ու կով պահելու կերպերը: Որքանոցին թուրքերէն լեզուի ուսուցիչը՝ Հիլմի պէյ, նոյն ատեն անասնաբոյժ ըլլալով, այս ճիւղերուն հետեւողներուն կու տայ անհրաժեշտ ծանօթութիւնները:

1921 Դեկտ. 31ին Հայկ Անտոնեանի կողմէ նուիրուած խոզով մը հիմը կը դրուի խոզանոցին եւ քանի մը տարուան ընթացքին 30ի կը բարձրանայ անոնց թիւը, որոնք հետզհետէ ծախուելով բացառիկ հասոյթ մը կ'ապահովուի հաստատութեան:

22 Ապրիլ 1922ին Ամերիկ. Նպաստամատոյցը կը նուիրէ երկու կաթնտու կովեր, որոնց համար զոմ մը կը շինուի:

26 Ապրիլին կը հաստատուի հաւնոցը՝ Ձարեհ Խօրասանճեանի նուիրած 30 հաւով եւ 1 արջաղաղով:

29 Յուլիսին փարախ մը կը հիմնուի Սրապ Կիւմիւշեանի նուիրած ոչխարովը:

8 Մայիս 1922ին կը բացուի հիւսարանը: Կ'ապահովուի երկու մեքենայ, որոնց վրայ կ'աշխատին մաս մը որբեր ու կը պատրաստեն քրիֆօ եւ գուլպայ: Որքանոցին անհրաժեշտ քրիֆօները եւ գուլպաները հոս կը պատրաստուին ու կ'ընդունուին



Որբանոցին յարակից ընդարձակ պարտեզը

նաեւ յանձնարարութիւններ ուրիշ հաստատութիւններէ, որոնք կը գնահատեն արտադրութեանց տոկոսնութիւնն ու աժանութիւնը:

Կօշկակարութեան ճիւղին մէջ կ'աշխատին 10 տղաք, որոնք ոչ միայն հաստատութեան անհրաժեշտ կօշիկները կը հոգան, այլեւ դուրսէն ալ ապսպրանքներ կ'ընդունին:

Վարպետներու հսկողութեան ներքեւ կահագործարանն եւս իր բոլոր կազմածներով արդիական աշխատանքի մը կը վերածուի եւ հաստատութիւնը մեծապէս կը նպաստաւորուի անկէ:

Տղաքը ինքնաբաւ դարձնելու ջանքեր կ'ըլլան: Անոնցմէ ոմանք կը դրուին սափրիչի քով, ուրիշներ ծնփելու արհեստը կը սորվին, կան ալ որ ելեքտրագործներու քով կ'աշխատին:

1921—1922 շրջանին Որբանոցին ընթացքը կ'աւարտեն հետեւեալ սաները.

Անդրանիկ Երկանեան	Յարութիւն Պաշեան
Անդրանիկ Մջիկեան	Յովհաննէս Իսրաասեան
Աասուր Տեւիրձեան	Նշան Իսպիրեան
Արամ Նիկոլեան	Նուպար Տապանձեան
Արեւեակ Գասպարեան	Նորայր Մարգարեան
Աւագ Աւագեան	Շահնուր Շահրիկեան
Գառնիկ Բնարեան	Պետրոս Գարագեան
Գեորգ Կարապետեան	Պողոս Բեօշեան
Երուանդ Գասպարեան	Սեդրակ Գասպարեան
Խաչատուր Սուրբանեան	Սիրուակ Գաբսանեան
Մասթեոս Ուզունեան	Մսեօյան Երկանեան
Միհրան Մեկեկեկեձեան	Վահան Բեչեձեան
Մկրտիչ Գազազեան	Վահրամ Սեփերեան
Յակոբ Գույումձեան	Վահե Մեշիֆեան
Յակոբ Թօգարչեան	Տիրան Զրահեան

Այս շրջանաւարտներէն շատեր իրենց ընդունակութեան եւ յարմարութեան համաձայն կը տեղաւորուին զանազան տեղեր, զետեղման մասնաւոր դիւանի մը կողմէ, ուր կը դիմեն գործատէրեր: Ոմանք ալ ուրիշ որբերու հետ Յունաստան կը փոխադրուին Ամերիկեան Նպաստամատոյցին կողմէ, առաջնորդութեամբ Հ. Գոուզեանի:

1922—23 տարեշրջանին դասարաններու թիւը կը վերածուի

Ճի, անանց նախապատրաստական կարգի: Աշակերտութեան թիւն էր 124: Ուսուցչական կազմը անփոփոխ կը մնայ: 19 Դեկտեմբեր 1922էն սկսեալ Տ. Գէորգ Եպսկ. Արսլանեան իր ընդհատուած պաշտօնը կը շարունակէ, բացի Ա. դասարանէն միւս կարգերուն ալ աւանդելով կրօնագիտութեան դասեր: Հաստատութեան մնայուն համարակալի պաշտօնին կը կոչուի Յարութիւն Հազարապետեան, որ կը կանոնաւորէ հաշուական տոմարները: Աշակերտներու վիճակագրութեան յատուկ նոր տոմարներ եւս կը պատրաստուին: Այս միջոցին է որ Արհեստանոցը տնտեսապէս կ'անջատուի հաստատութենէն եւ իր 2170 ոսկի արժող անշարժ գոյքերուն վրայ կ'աւելնայ 1252 ոսկիի շարժուն դրամագումար: Կահագործարանին առընթեր կը բացուին խոզանակաշինութեան, մեքենագործութեան, թիթեղագործութեան, լուսանկարչութեան, ելեքտրագործութեան եւ պայուսակաշինութեան ճիւղեր: Այս կերպով Արհեստանոցը ինքնապահ կը դառնայ եւ դրամագումար կ'ըլլայ 3829 ոսկի:

1922 Նոյեմբերին Գուլէլիի Կեդր. Որբանոցին պարպումին հետեւանքով 125 որբեր 8—10 օր հիւրաբար կը պատսպարուին Գարակէօզեանի մէջ: Նոյն օրերուն որբանոց կ'այցելէ «Հաուըրտ Գարակէօզեան Հօմ»-ի տնօրէնը՝ Տքթ. Գր. Դաւիթեան եւ ի պահանջել հարկին իր վարած հաստատութեան 97 տղաքը հոն, յարմարագոյն յարկի մը վրայ տեղաւորելու կարելիութիւնը կ'ուսումնասիրէ: Յետ քննութեան համոզում կը գոյացնէ թէ շէնքը անբաւական է այդ նպատակին համար:

1922—1923 տարեշրջանին վերջը Որբանոցը կու տայ հետեւեալ 15 շրջանաւարտները.—

Արամ Զրկայեան	Կարապետ Թալուզեան
Արմենակ Նարոյեան	Մարտիրոս Դօհամիւսեան
Ադամ Հեփանեան	Միխայիլ Միխայիլեան
Գեորգ Թերզեան	Յակոբ Թիւրքանեան
Նիկա Ֆերհասեան	Նշան Փաշազեան
Նուանդ Դաշեօնեան	Շահան Շահրիկեան
Խայկ Զարխուկեան	Վահան Մջիկեան
Օննիկ Նալբանդեան	

ԿՐԹԱԿԱՆ ՑՆՕՐԷՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՅՈՒՈՂՈՒԹԻՒՆԸ

1923—24 տարեշրջանին, ինչպէս բոլոր համայնքային ու կրթական հաստատութիւնները, Գարակէօզեան Որբանոցն եւս

Կրթական Տնօրէնութեան անմիջական վերահսկողութեան ենթակայ կ'ըլլայ: Հանրապետական վարչաձեւի նոր օրէնքներուն համաձայն հիմնական փոփոխութիւններ կը կատարուին: Որքանոցը կ'ունենայ իր նոր արտօնազիրը եւ ննամակալութեան կողմէ Մէարիթի մօտ հիւմնադիր կը նշանակուի Եզուարդ Գարակէօզեան:

Թուրքերէն լեզուի, պատմութեան եւ աշխարհագրութեան դասերը կ'աւանդուին Կրթական Տնօրէնութենէն անուանուած Թուրք ուսուցիչներու կողմէ:

Այս շրջանին Որքանոցը կը վերածուի իբր Նախակրթարան (İlkokul) 5 դասարանի: Սաներէն մաս մը Հաուըրտ Գարակէօզեան Հօմի որբերուն հետ Ռումանիա կը մեկնի: Աշակերտութեան թիւը կը նուազի ու յետոյ կը բարձրանայ 114ի: Սակայն հաստատութիւնը շրջանաւարտ չունենար:

1924—25ին, նոր կարգադրութեամբ Որքանոցի դասարաններուն թիւը կը զեղչուի 4ի եւ այս հիման վրայ կ'ստացուի պաշտօնական արտօնազիրը: Աշակերտութեան թիւը կ'իջնէ 106ի: Այս տարեշրջանին աւարտական կարգէն կը վկայուին հետեւեալ տասը սաները. —

Արսն Բեռեկեհեան	Երուսնդ Պաղճեան
Արսաշես Թումայեան	Թորոս Խրսեան
Գեղամ Գօշուհեան	Յակոբ Մահմուրեան
Երուսնդ Աւսանեան	Վահագն Նիկողոսեան
Երուսնդ Շահմուրտեան	Սարգիս Ղուկասեան

Ընթացաւարտները մինչեւ ինքնապահ դառնալը կը շարունակեն մնալ Որքանոցը:

1925ի շրջանաւարտ կարգը, մասնաւոր արտօնութեամբ 26 Յանիսին կ'այցելէ Հանրակառքի Ընկերութեան Շիշլիի կառատունն ու աշխատանոցները, ուր ելեքտրագէտ-երկրաչափ եւ կառուղիղներու ուսուցիչ Հրանդ Անդրէասեան չորս ժամու տեղողութեամբ մի առ մի բացատրութիւններ կու տայ ելեքտրագիտութեան հիմնական օրէնքներուն եւ մեքենաներու գործածութեան վրայ:

Որքանոցի տնօրէնութեան հրաւերին վրայ բարձրագոյն դասարանին շահեկան դասախօսութիւն մը կ'ընէ նաեւ Տօթ. Ռ. Չաքար, նիւթ ունենալով «Ռէօնիթկէնեան ճառագայթները:»

Ամսօրերը հանդէսին սաները կը ներկայացնեն Յակոբ Պարոնեանի «Մեծագատիւ Մուրացկանները»:

1925—1926էն սկսեալ Գարակէօզեան Որբանոցին մէջ կը պաշտօնավարեն Մէարիֆէն կարգուած հետեւեալ ուսուցիչ-ուսուցչուհիները. — Նահի պէյ, Իսմայիլ էմին պէյ, Իճլալ Ասըմ հանըմ եւ Մէրվէթ հանըմ:

Սոյն տարեշրջանին Որբանոցին ընթացքը կ'աւարտեն 13 սաներ.

Ասրուշան Բապուճեան	Կարսպէս Թաւարզաշեան
Աասուր Պասնաճեան	Հայկ Քեչիշեան
Արամ Յովհաննէսեան	Ղազարոս Գասարճեան
Բարսեղ Գարսագաշեան	Ոսկան Գարայճեան
Գեորգ Քիշեիշեան	Պարգև Նիկոշեան
Գրիգոր Աւիրսեան	Սուրեն Իսկեճեան
Վարդան Երկանեան	

Բոլորն ալ իրենց նախասիրութեան համաձայն կը հետեւին զանազան արհեստներու եւ մեքնագիտական աշխատութեանց:

Ց նոյ. 1926ին կը հիմնուի «Գարակէօզեան Սանուց Միութիւնը», նպատակ ունենալով՝ 1. Ապահովել շրջանաւարտներուն յետ վարժարանական կրթութիւն, 2. Փոխադարձ օգնութիւն եւ 3. Բարոյապէս ու նիւթապէս սատարել հաստատութեան:

Պատշաճ հանդիսութեամբ կը տօնուի Որբանոցին տարեդարձը եւ այդ առթիւ ընթացաւարտ սաները կը ներկայացնեն «Երանոս Աղբար» եւ «Չորս Սալորներ» զաւեշտախաղերը:

Որբանոցին աշակերտութիւնը անխտիր կը հետեւի եկեղեցական երաժշտութեան դասերուն, զորս ձեռնհասօրէն կ'աւանդէ Օննիկ Քիւրքեան: Յետոյ Չարեհ Մխիթարեանի ղեկավարութեամբ կը կազմուի նաեւ «Գարակէօզեան Երգչախումբ»ը, որ լաւագոյն կերպով մարզուելէ ետք յաճախ հրաւէր կ'ընդունի զանազան թաղերէ, Պատարագի երգեցողութեան համար:

15 Մայիս 1927ին, երբ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին կոմիտասեան եռաձայն պատարագի երգեցողութիւնները կատարելու հրաւիրուած էր երգչախումբը, մասնաւոր Տէր Ողորմեայ երգեց «Վասն արագ ապարինման երուսաղէմի Պատրիարք Տ. Եղիշէ Արքեպսկ. Դուրեանի»: Իսկ 1928ին երգչախումբը իր մասնակցութիւնը բերաւ բանաստեղծ Միսաք Մեծարենցի մահուան 20 ամեակին առթիւ, անոր ի յիշատակ մատուցուած Ս. Պատարագին եւ հոգեհանգստեան պաշտօնին:

1926—27ին Որբանոցը կու տայ հետեւեալ շրջանաւարտները.

Գեորգ Տապանեան	Նշան Փախազեան
Կարայկես Մալխասեան	Սեւեիան Կիւմիշեան
Հրանդ Բիշեան	Վահէ Գարիպեան
Յակոբ Փախազեան	Վասիլոյս Պերպերեան
Յարութիւն Խաչիկեան	Վարդգես Յոխիկեան
Յովհաննէս Գանդիսեան	Վուսնշապուռի Տէյիրեան
Օգսէն Ճիգմեան	

1927ին, հաստատութեան արհեստանոցի բաժնին համար առանձին արտօնութիւն ստանալու անհրաժեշտութիւնը կը ներկայանայ: Այս մասին տարակարծութիւն կը ծագի Որբանոցի հիմնադիր Եղուարդ Գարակէօզեանի եւ տնօրէն Արամ Նիկողոսեանի միջեւ: Մամուլն ու Ազգային վերին մարմիններն եւս կ'զբաղին այս հարցով: Ի վերջոյ Տնօրէնութիւնը տեղի կու տայ եւ յաջորդաբար կը փակուին գոմը, խոզանոցը եւ արհեստագիտական կարգ մը բաժիններ: Կը մնայ միայն կօշկակարատունը, պայմանաւ որ, ըստ Մէարիֆի տեսակէտին, այնտեղ աշխատին միմիայն Որբանոցէն շրջանաւարտ ելող սաները: Այս միջոցին, Կրթական Տնօրէնութեան կարգադրութեամբ, կը ջընջուին նաեւ ընդհանուր պատմութեան եւ աշխարհագրութեան դասերը:

1927—1928ին աշակերտութեան թիւն էր 96: Վկայական կ'ստանան հետեւեալ 13 շրջանաւարտները.—

Արմենակ Ալեքսանեան	Մկրտիչ Մխչեան
Աւեսիս Թօզնեան	Յովհաննէս Տ. Բարդեանեան
Խարէն Միրաբեան	Նեւսոն Տասուրեան
Կարայկես Գանճիշեան	Նուպար Դերձակեան
Հոյկ Մախրաճեան	Նուպար Տեմիրճեան
Յակոբ Պէյլերեան	Վաղարշակ Ժամկոնցեան
Օննիկ Աւիրխանեան	

Տնօրէնութեան դիմումին վրայ, ծանօթ ատամնաբոյժներ Տօթ. Մ. Գալիֆայեան եւ Տօթ. Վ. Հինդլեան անձնուիրաբար կ'ստանձնեն տղոց ակոսներու դարմանումը, այցելելով Որբանոց: Այս ճիւղին սպասարկութիւնը յիտոյ կ'ստանձնէ ատամնաբոյժ Կոպեռնիկ Ժամկոնցեան:

2. ՆՈՐԱԿԱԶՄ ԽՆԱՍԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏՆՕՐԷՆԻ

Փ Ո Փ Ո Խ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Ազգ. Կեդր. Վարչութիւնը 1928ի սկիզբները հարկ դատեց վերակազմել Գարակէօզեան Որբանոցի Խնամակալութիւնը, որ տարիներէ ի վեր կորսնցուցած էր իր մեծամասնութիւնը եւ պաշտօնի վրայ գտնուող մէկ քանի անդամներ առիթը չէին ունեցած գրեթէ կանոնաւոր նիստեր գումարելու եւ զբաղելու հաստատութեան մատակարարական գործերով: Նորակազմ Խնամակալութիւնը, որ առաջին նիստը գումարեց եւ իր դիւանը ընտրեց 10 փետր. 1928ին, կը բաղկանար հետեւեալ ծանօթ ազգայիններէն.

Երուանդ Եռսուփեան	(Ա.Տեւապէս)
Տօֆ. Արթ Մեզպուրեան	(Ա.Տեւադպիր)
Երուարդ Գարակէօզեան	(Գ.անձապէս)
Աւեճիս Բեմեզեան	(Ա.նդամ)
Զգօն Խորասանճեան	(Ա.նդամ)
Գառնիկ Եռսուփեան	(Ա.նդամ)

Խնամակալութիւնը իր նախորդին ու մասնաւորաբար հիմնադրին ու տնօրէնին միջեւ ծայր տուող անհասկացողութիւններն ի գուր կը ջանայ հարթելու Որբանոցին ներքին խաղաղութիւնն ու բնական վիճակը վերահաստատել: Այս կացութիւնը կը տնէ ամբողջ տարի մը:

1928—29 տարեշրջանին սկիզբը, հիմնադիր Եդուարդ Գարակէօզեանի դիմումին վրայ, Կրթական Տնօրէնութիւնը կը միջամտէ եւ վերջ կը դնէ Արամ Նիկողոսեանի պաշտօնավարութեան:

Խնամակալութիւնը 30 նոյ. 1928ի նիստին մէջ, ուր ներկայ գտնուած են Երուանդ Եռսուփեան, Տօրթ. Ա. Մեզպուրեան, Զգօն Խորասանճեան, Եդուարդ Գարակէօզեան եւ Գառնիկ Եռսուփեան, կը հրաւիրէ ներքին ուսուցիչներէն Արմենակ Պաղտատեանն ու Յարութիւն Սարայտարեանը եւ անոնց կը յանձնէ Որբանոցը առժամապէս վարելու գործը: Յաջորդ օր Կրթական Տնօրէնութեան քննիչներէն Համտի Նազրմ պէյ անձամբ կու գայ եւ պատասխանատու տնօրէնութեան պաշտօնը կը անձնէ Յ. Սարայտարեանի:

Այս փոփոխութենէն յետոյ տեղի կ'ունենան հետեւեալ կարգադրութիւնները.—

Նորընտիր Տնօրէնին զխաւորութեամբ ուսուցչական մարմինը կը վերակազմուի հետեւեալ կերպով.—

Արմենակ Պաղտատեան	(ընդհ. դասխարակ)
Տիկ. Անժէշ Պաղտատեան	(դասխարակուհի)
Արսաշես Թեղաշեան	(մնայուն ուսուցիչ)
Ալիքսան Բարսեղեան	(մնայուն ուսուցիչ)
Յարութիւն Գինեպսեան	(մնայուն ուսուցիչ)
Օր. Վիգոր Չպուզանեան	(մնայուն ուսուցչուհի)
Էլիֆ Նանի պէյ	(քուրսերէնի)
Սերվէք Թահսիս հանրմ	(քուրսերէնի)

Նախորդ տնօրէնին դասերը (հայերէն, ֆրանսերէն եւ քնական գիտութիւն) կը յանձնուին Մ. Ուղուրլեանի:


Ըստ Կրթական Տնօրէնութեան հրահանգին, կարելի չըլլար 8 տարեկանէն վար սաներու ուսուցումը Որբանոցին մէջ: Ուստի 3—7 տարեկան փոքր տղաքը յարմար կը դատուի զետեղել Ձէրիքէօյի Մէրամէթեան վարժարանի մանկապարտէզի բաժնին մէջ:

Յ. Սարայտարեան առաջին պատեհութեամբ կը ձեռնարկէ հաստատութեան արձանագրութեան տոմարներուն ինորոյ պատրաստութեան՝ օրուան պահանջներուն համաձայն:

Նախ կը պատրաստուի աշակերտներու արձանագրութեան (սինիլ) ընդարձակ տոմարը, լուսանկարներով, ուր իւրաքանչիւր աշակերտ մուտքի թուականի կարգով կ'ունենայ իր թիւը: Կը կազմուին աշակերտներու յատուկ թղթածրարներ (տօսիէ), ուր կ'ամփոփուին առողջական վիճակացոյցներ, պատուաստի վկայագրեր, անձնագիր եւ այլ պաշտօնաթուղթեր: Յետոյ կը պատրաստուին Որբանոցին կարեւոր գոյքերուն ընդհանուր ցուցակը, հանդերձա-



Յարութիւն Սարայտարեան



Յ. Մարտիրոսյանի սերունդի սկզբնական շրջանի ուսուցչական կազմը և շրջանառարները խումբի ներքին

տան պատրաստը ներկայացնող տոմար մը, հագուստներու եւ կօշիկներու սպառման տետրակ, եւլն.։ Կը թուագրուին ու կը դասաւորուին աշակերտներու ընդունելութեան վերաբերեալ վկայաթուղթերը, այդ առթիւ զրկուած նամակները, Կրթական Տնօրէնութենէն զրկուած շրջաբերականներն ու մասնաւոր գրութիւնները (թէգքէրէ)։ Խումբերու բաժնուելով կը կարգաւորուին նաեւ Որբանոցին հիմնարկութենէն սկսեալ գոյութիւն ունեցող հաշուական տոմարները, օրագրութեան տետրակները եւ թղթակցութեանց պատճէնները։

Ասոնց համընթաց Խնամակալութիւնը կը ձեռնարկէ կարգ մը կարեւոր նորոգութիւններու եւ զետեղումներու։ Կը նորոգուին շէնքին հարաւի պատուհաններուն շրջանակները. բաժանումի կ'ենթարկուին լայնածաւալ ապակիները ու պահպանակներ կ'անցուին բոլորին։ Ծինել կը տրուին տասնեակ մը նոր գրասեղաններ։ Կը փոխուին ջուրի ծորակներն ու խողովակները. կը նորոգուին ելեքտրականութեան ներքին լծէ արտաքին թելերն ու կոճակները, բաղնիքի ջնուցիչ խողովակները եւ քալօրիֆէրի մէկ մեքենան։ Կը նորոգուին ու կը ներկուին մահճակալները եւ շէնքին մետաղեայ կարասիները։ Անդանատունը, որ երեք կամարածեւ անցքերով միացած էր իրեն կից նրբանցքին, կը վերածուի առանձին սրահի մը՝ երկու դուռներով։ Ճաշասեղաններուն մոմլաթերը կը փոխուին ու փայտեր կը գետեղուին աշակերտներու ոտքերուն տակ, զանոնք պաղառութենէ գերծ պահելու համար։

Գրեթէ ամբողջութեամբ կը փոխուին տանիքին զինկերը, կտտրած կղմիւտները եւ ջուրի խողովակները։ Ներքին յարկաբաժիններն եւս կը ներկուին ու կը վերանորոգուին։ Հանդերձատան համար շինել կը տրուին հինգ խոշոր դարաններ, ուր կը պահուին աշակերտներու զգեստները, կօշիկներն ու զլխանոցները։ Այս վերջինները որ պէտքի ձեւով էին, փափեքներու կը վերածուին։

Բանջարանոցն եւս կը շրջապատուի փշաթելերու ցանկակապատով մը, գոմին պատուհանները կ'ունենան երկաթ ծողիկներով պաշտպանուած շրջանակներ, իսկ տանիքը կը դրուի նոր գերաններու վրայ, կանխելով փլուզումի մը վտանգը։ Պալատէզին անպէտ դարձած ջուրի խողովակները կը կանոնաւորուին ու բանջարանոցը ջրելու գործը կը դիւրանայ։ Բոլոր այս

կարեւոր նորոգութիւնները տեղի կ'ունենան ուղղակի ինամակալութեան նարտարապետ անդամ Աւետիս Բէքմէզեանի հսկողութեան ներքեւ:

Որբանոցի կրթական ծրագրին եւ յարակից բարեփոխումներու վերաբերեալ տեղեկութիւնները կը բաղենք տնօրէն Յարութիւն Սարայտարեանի կողմէ 1931—32 տարեշրջանի լրումին առիթով պատրաստուած տեղեկագրէն.—



Աւետիս Բեքմէզեան

«Վերջացող տարեշրջանին սկիզբը, կրթական Տնօրէնութեան հրահանգով բարեփոխուեցաւ Որբանոցիս ուսման ծրագիրը, որուն համաձայն ֆրանսերէն ու արկրաչափութիւն պիտի դասաւանդուին Դ. դասարանին մէջ: Երգի եւ մարմնակրթանքի դասերը մաս պիտի կազմեն ծրագրին: Իսկ մնացեալ դասերուն մէջ աննշան փոփոխութիւններ կատարուած են: Դարձեալ, կրթական Տնօրէն-

նութեան ուրիշ մէկ հրահանգին համաձայն, չորս ամիսէ ի վեր կիրակի օրերը բաց կը պահենք Որբանոցը եւ դասաւանդութեամբ կ'զբաղինք. իսկ ուրբաթ օրերը, ինչպէս անցեալ 8 տարիներուն մէջ, ներկայիս ալ, կ'ընդունինք շաբաթական հանգիստի օր: Այս փոփոխութեան հետեւանքով, աշակերտները փոխանակ կիրակիի, ուրբաթ օրերը կ'երթան եկեղեցի իրենց հերթապահ դաստիարակներուն առաջնորդութեամբ:

Անցեալ Սեպտեմբերին աշակերտներուն ընդհանուր թիւն էր 110, որոնցմէ 8ը գիշերող սաներ էին, այսինքն Որբանոցիս մէջ խնամուող բայց դուրսը արհեստի կամ բարձրագոյն ուսման հետեւողներ: Տարուան ընթացքին հրաժարեցան 2, ինքնաբաւ դարձան եւ հաստատութենէս մեկնեցան 3, արտասահման ուղեւորեցաւ 1, որդեգրութեան տրուեցաւ 1 աշակերտ: Ընդունուեցան 2 նոր սաներ, որով ներկայիս 105 է աշակերտութեան թիւը:

Աշակերտներու ուսման մակարդակը եւ ծանօթութեանց պա-

շարք կարելի է գոհացուցիչ նկատել: Այս պարագան կ'ապացուցանեն քննութեանց թիւերը եւ մեզմէ բաժնուող շրջանաւարտները, որոնք միջնակարգ վարժարան կը յաճախեն եւ առհասարակ առաջնութիւն կը շահին իրենց գտնուած դասարաններուն մէջ:

Արհեստական ճիւղ.— Որբանոցն իբրեւ արհեստի մնայուն բաժին՝ ունի կօշկակարատուն մը, ուր վարպետ մը եւ գլխաւոր աշխատաւոր մը կը պատրաստեն աշակերտներու կօշիկներն ու դուրսէն առնուած յանձնարարութիւնները: Վերի կարգերու տղաք հոն կ'ընտելանան արհեստի գլխաւոր պահանջներուն: Այս աշխատութիւնը իրենց կը պարգեւէ ապարանջան մը, որով շատեր կը յաջողին շրջանաւարտ ըլլալէ վերջ իրենց եւ իրենց պարագաներուն ապրուստը ճարել: Կօշկակարատունը իր առանձին համարակալութիւնը ունի, որ ամէն տարեշրջանի վերջը կը միացուի Որբանոցիս մատակարարական ընդհանուր հաշիւներուն:

Ունինք կահագործարան մը, ուր աշակերտները իրենց մեծերուն հսկողութեամբ կը կատարեն կահկարասիի պզտիկ նորոգութիւններն ու շինութիւններ:

Կազմակերպուած ձեռական աշխատութիւն մը կամ արհեստ մը կարելի է համարել նաեւ Որբանոցիս բանջարամշակութիւնը: Շնորհիւ աշակերտներու քրտնաթոր նիւթերուն բանջարանոցին մէջ ներձայիս տնկուած են մեծաքանակ սոխ, սխտոր, լուբիա, լոլիկ, դդում, կանկառ, վարունգ, եգիպտացորեն, եւլն: Երեք տարուան ընթացքին տնկուեցան 63 տանձնիի, 32 խնձորենիի, 17 ծիրանի, 19 դեղձի, 23 սալորենիի, 12 թութի, 27 սերկելիլի, 6 զղեարի, 5 կեռասի, 6 բալի, 14 թմբիի, 1 ընկուզենիի, 48 որթատունկի, 70 թզենիի եւ 30 արքասիայի ծառեր ու ծառակներ, որոնց գումարն է նախորդներուն հետ՝ 395: Ասոնցմէ շատեր այս տարի պտուղ տուած են արդէն:

Առողջութիւն եւ սնունդ.— Որբանոցիս բժշկական խնամքը, ինչպէս նախորդ տարիներուն, յանձնուած էր Տօթ. Բարսեղ Տինանեանի, որ մեծ ձեռնհասութեամբ իր հոգածութեան առարկայ պահեց աշակերտութեան եւ պաշտօնէութեան առողջութիւնը, հերթական այցելութիւններով:

Գալով սնունդին, որակով ու քանակով համարժէք կարելի է նկատել նիւթապէս բարօր վիճակ մը ունեցող ընտանիքի մը

սնունդին: Եղանակին համաձայն տուինք բանջարեղէն, ընդեղէն, խմորեղէն, կաթնեղէն, եւլին.: Միսը, ըստ սովորութեան տրուեցաւ շաքաթը երկու անգամ, իսկ մսով բանջարեղէն կամ ընդեղէն՝ յաճախ Բանակի խնդիրը լուծելու համար նկատի ունեցանք մեր անցեալի փորձառութիւնը. այսպէս փորձով գիտէինք որ իւրաքանչիւր աշակերտի միջին հաշուով պէտք է տալ 100 կրամ չոր լուբիա, 90 կրամ ոսպ, 80 կրամ սիսեռ, 90 կրամ ծաւար, 90 կրամ բրինձ, 200 կրամ ոչխարի միս, 240 կրամ կոփու միս, 25 կրամ թէյի շաքար, 25 կրամ ձիթապտուղ առաւօտեան նախահաշին համար, 25 կրամ կարագով, դմակով խստն իւղ, 250—400 կրամ զանազան բանջարեղէններ, 225—240 կրամ ձուկ, 325 կրամ գետնախնձոր, եւլին.:

Հսկեքձանկ և մաքրութիւն. — Բացի ձմեռնային եւ ամառնային հագուստներէ եւ կօշիկներէ, բոլոր աշակերտներն ունին իրենց պահեստի հագուստներն ու կօշիկները: Անցեալ Սեպտեմբերին եւ Մարտին շինեցինք 70 ձեռք ձմեռնային եւ նոյնքան ամառնային հագուստներ: Սաներու կիսակօշիկները վերածուցան պօքի եւ տարուան մը ընթացքին ունեցանք մօտ 100 զոյգ կօշիկի խնայողութիւն մը: Իւրաքանչիւր աշակերտ ունի իրեն յատուկ եւ իր արծանագրութեան թիւով երկու բուրդ ֆանէլա, չորս ձեռք ճերմակեղէն, երկու զոյգ սաւան, երեք հատ երեսի սրբիչ, երկու հատ սեղանի անձնոց, բաւարար գուլպայ եւ թաշկինակ:

Շարքսիսն դաստցոյց և հայերեկի ուսուցումը. — Կրթական Տնօրէնութեան 28 Ապրիլ 1932 թուակիր եւ 2059/39 համար Շրջաբերական հրահանգին համաձայն, գործադրութեան կը դրուի 1928ին նախապատրաստուած կրթական ծրագիրը, չորս դասարանի վրայ՝ հետեւեալ կերպով. —

Աւանդուած հիւղեր	Ա.	Բ.	Գ.	Դ.	
Կրօնք	1	1	1	1	} շաքաթական դասաժամ
Հայերեկ	6	6	5	5	
Թուրքերեկ	8	8	6	6	
Պատմութիւն	—	—	2	2	
Աշխարհագրութիւն	—	—	2	2	
Եւրոս պիլիպի	—	—	2	2	
Գիտութիւն և Առողջ.	2	2	2	2	
Ռեսուրսիւն	3	3	3	3	
Երկրագիտութիւն	1	1	1	1	

Բարոյագիտութիւն	1	1	1	1	} շարաթական դասաժամ
Գեղագրութիւն	1	1	1	1	
Նկարչութիւն	1	1	1	1	
Ձեռարուեստ	10	10	10	10	
Փրանսերէն	2	2	3	3	

Ծրագիրը յետոյ բարեփոխուելով կ'աւելնան նաեւ երաժշտութեան եւ մարմնամարզի դասեր:

Մայրենի լեզուի ուսուցումը տեղի կ'ունենայ հետեւեալ աստիճանական վերելքով.

Ա. ԿԱՐԳ.— Առողանութեան դասեր, բառագիտութիւն, շիտակ խօսելու վարժութիւն, արձակ ու չափածոյ հատուածներ գոց ընել, գրել կարգալ եւ ուղղագրութիւն:

Բ. ԿԱՐԳ.— Շիտակ կարդալ, կարդացածը հասկնալ եւ պատմել ու պարբերութիւններ կազմել ու գրել, ճանչնալ «մասունք բանի»ները:

Գ. ԿԱՐԳ.— Շիտակ հասկնալ եւ հասկցնելու ձեւով կարդալ, կարդացածը բացատրել, ուղղագրութիւն, փոքր հատուածներ ու նամակներ գրել, բառագիտութիւն, քերականութիւն, արձակ ու ոտանաւոր կտորներ գրի առնել եւ արտասանել:

Դ. ԿԱՐԳ.— Ընթերցում, ուղղագրութիւն եւ քերականութիւն, գրագէտներու եւ բանաստեղծներու մասին ծանօթութիւններ, նիւթի մը մասին վիճաբանիլ, շարադրութիւն, նամակ, օրագիր բռնել եւ տեղեկագիր պատրաստել, թուրքերէնէ եւ ֆրանսերէնէ թարգմանութիւններ:

Նկարչութիւն.— Ա. Կարգ.— Երկրաչափական ձևեր, պարզ իրերու սեւագրութեամբ նկարներ եւ ջրաներկ պատկերներ:

Բ.— Բնանկարներու եւ երեւակայական պատկերներ:

Գ. եւ Դ.— Կենդանիներու եւ բոյսերու նկարներ, երեւակայական պատկերներ:

Ձեռարուեստ ու յիստորիաներ.— Թուղթով ու խաւաքարով թռչուններ, կենդանիներ եւլն. շինել, կալի, գահի, տախտակի, ապակիի, թիթեղի եւ երկաթ թելիլու վրայ աշխատութիւններ, հաւ, նապաստակ, ոչխար, այծ ու կով պահել, բանջարեղէն հասցնել եւլ.:

Հաստատութիւնը ունեցաւ նաեւ Կրթական Տնօրէնութեանէն

վաւերացուած ներքին կանոնադիր մը, որ կը ճշդէր սաներու ընդունելութեան պայմանները, արձակուրդի ու տօնական օրերը եւ աշակերտութեան ու ուսուցչութեան պարտաւորութիւնները:

Յ. Մարայտարեանի տնօրէնութեան առաջին չորս տարեշրջաններուն Որբանոցը յաջորդաբար տուաւ հետեւեալ ընթացաւարտները. —

1928 — 1929

Զաւեն Եփրոյունեան	Յովնանեկա Փոփոզեան
Խաչիկ Մակարեան	Սահակ Գարիկեան
Խաչիկ Ոսկերիչեան	Սեւիտն Գրիգորեան
Կարապետ Տապանեան	Սեւիտն Սեւուշեան
Մանուկ Մաքարեան	Վարդան Թօփաչեան

Օննիկ Զանգիլեան

1929 — 1930

Արծրունի Զարգանեան	Մնացական Վեգիբեան
Եղիա Քեշիշեան	Յակոբ Թազարեան
Լոյսօֆէր Մանուկեան	Յակոբ Գարիպեան
Կարապետ Հեֆթեան	Պօղոս Թօփեան
Կարպիս Աղսաչեան	Ռաֆայել Ռաֆայելեան
Ղևոնդ Մարգարեան	Տիրան Տիմիշեան

Օննիկ Գարիպեան

1930 — 1931

Անտրոն Գեւորեան	Մկրտիչ Սերոբեան
Աշիֆսան Աղսաչեան	Մազուն Զաղանեան
Զաւեն Յովնանեկեան	Յարութիւն Թեֆֆաչեան
Կարապետ Թովմաթեան	Նուպար Տ. Պօղոսեան
Հայկ Պօղոսեան	Տիրայր Թիւրքեանեան

1931 — 1932

Արամստ Ազարեան	Կիւլչիեկի ԽՏԵԱՆ
Ազոս Յոխիկեան	Յակոբ Մանուկեան
Անդրանիկ Խաչիկեան	Յակոբ Մկրտիչեան
Զաւեն Տ. Զաֆարեան	Յակոբ Թադեոսեան
Եղուարդ Մալուշեան	Նուպար Գաւանեան
Ժիրայր Նշանեան	Նուպար Կարապետեան

Վահրամ Մալուշեան

1932—33 տարեշրջանին Որբանոցը կ'ունենայ 99 աշակերտ

(Ա. կարգ 35, Բ. կարգ 20, Գ. կարգ 29 եւ Դ. կարգ 15) ըստ 8 գիշերող սաներէ, որոնցմէ 3ը կը յաճախեն կեդրոնական, 4ը կը հետեւին արհեստի եւ մէկն ալ կը պատասխարուի Որբանոցին մէջ իր խանգարուած առողջութեան պատճառով:

Տարուան ընթացքին աշակերտները կ'օգնեն Որբանոցին մէջ կատարուած այլազան շինութիւններուն ու նորոգութիւններուն: Կ'օժանդակեն խոհանոցի ու հանդերձատան գործերուն եւ իրենց մասնակցութիւնը կը բերեն նաեւ շէնքին ընդհանուր մաքրութեան աշխատանքին: Չմրան եղանակին իսկ անոնք կը շարունակեն բանջարանոցին յարգարման ու մշակութեան նախապատրաստական աշխատութիւնները: Կը բանան արեւելքէն արեւմուտք երկարող լայնատարած երկու ծառուղիները. անոնց մէջ գտնուած հողը կը նետեն մշակելի արտերուն վրայ. քովընտի արահետներ կը բանան արտերուն միջեւ ոռոգումն ու ջրտուքը դիւրացնելու համար: 3 տարի առաջ բանջարանոցն մէջ գտնուած ճահիճներուն եւ այլ անյարմարութիւններուն պատճառով հոս հոն խառն ի խուռն տնկուած պտղատու ծառերը երկրաչափական ճշգրտութեամբ կը շարեն նոր ճամբաներուն եզերքը ու վերջապէս կը հերկեն ու կը ցանեն ընդարձակ բանջարանոցը, որ կ'ստանայ հաճելի տեսք մը:

Պաշտօնէրիւնը.— Այս մասին տնօրէն Յ. Սարայտարեանի 1932—33ի տեղեկագրէն կը քաղենք հետեւեալը. «Գարակէօզեան Ազգ. Որբանոցը այս տարի եւո ունէր իր ներքին դաստիարակ ուսուցիչները՝ Օր. Վիքթօր Չպուքճեան, Պ. Արտաշէս Թէլլաւեան եւ Տիկ. Անժէլ Պաղտատլեան: Իսկ Թուրքերէն դասերու համար՝ Էլիֆ Նաճի պէյ եւ Սաատէթ հանըմ: Հաստատութեանս մատակարարը Պ. Կարպիս Պինպաշեան, որ տարիներէ ի վեր մառանապետի եւ հայթայթիչի պարտականութիւններն ստանձնած է, մեծապէս օժանդակեց տնօրէնին արտաքին յարաբերութիւններուն: Այցելու համալակալ Պ. Օննիկ Ոսկանեան իր շաքաթական այցելութիւններով պահեց Որբանոցիս ելեւմուտքը եւ անցեալ տարեշրջաններու հետ ծախքի եւ հասոյթի բաղդատութիւնը ներկայացնող հաշուետոմարները: Խոհարար մը եւ իր օգնականը, հանդերձապահուհի, կարուհի, երկու օգնականներով, գ'շ'րապահ, դռնապան, եւլն. 21ի կը հասնի Որբանոցի պաշտօնէութեան ամբողջ թիւը:»

1934—35ի տարեշրջանին Թուրքերէնի ուսուցչուհի կը կարգուի Սամիմէ հանըմ: Պ. Ա. Թէլլաւեան կը հրաժարի: Յաջորդ

տարեշրջանին ալ տեղի կ'ունենայ Օր. Վ. Չպուզեանի հրա-
ժարումը:

1934ին աշակերտութեան թիւը կ'իջնէ 89ի, 1935ին 65ի,
իսկ 1936ին 45ի:

Այս միջոցին է որ խնամակալներէն շատեր յաջորդաբար կը
հրաժարին: Պատնէշին վրայ
կը մնան միայն Տօթ. Ա.
Ն. Մէզպուրեան եւ Եղուարդ
Գարակէօզեան: Ու հետեւա-
բար Խնամակալութիւնը կը
կազմալուծուի: Լուրջ տագ-
նապի մը կը մատնուի հաս-
տատութեան մատակարար-
ութիւնը:



Տօթ. Ա. Ն. Մէզպուրեան

Վարչական ժողովը, ո-
րուն կ'ատենապետէր Պետ-
րոս Պէյ Խօրասանի, ստի-
պողաբար կը վերակազմէ
խնամակալութիւնը՝ ատե-
նապետութեամբ Տօթ. Ա.
Ն. Մէզպուրեանի: Պակսած
անդամներուն տեղ կ'առ-
նուին Տօթ. Բարսեղ Տի-
նանեան, Վահրամ Թօմպուլ-

եան եւ Սարգիս Բէքմէզեան: Զանքեր կը թափուին Որբանոցին
բնականոն վիճակը վերահաստատելու եւ աւելցնելու թիւը սա-
ներուն, որ 42ի իջած էր 1937ին:

Հակառակ տիրող աննպաստ պայմաններուն, Որբանոցը կը
շարունակէ ամէն տարի տալ իր ընթացաւարտները՝ հետեւ-
եալ կերպով.—

1932 — 1933

Գեղամ Շարվանեան	Յարութիւն Մազուսեան
Գեորգ Գարսյարութեան	Յարութիւն Մուրսեան
Գրիգոր Աւետիսեան	Նուպար Գարսագչեան
Խաչիկ Ասլանեան	Պետրոս Միհրանեան
Հայկ Անրեանսեան	Սարգիս Մելչոնեան
Հայկասեր Յովսէփեան	Վահե Գալփայեան
Մինոս Աբգարեան	Վահե Թապազեան
	Տաճատ Հեփիսեան

1933 — 1934

Ազատ Գրիգորեան	Յակոբ Այվաձեան
Արսաշէս Փարմազազեան	Յակոբ Գոչեան
Դեղամ Թադեոսեան	Յարութիւն Ճոնեան
Գրիգոր Թոթոյեան	Յովհաննէս Արզարեան
Եղուարդ Օհանեան	Յարութիւն Փսնոսեան
Եղուարդ Շիրվանեան	Նիկողոս Մովսէսեան
Խաչիկ Նահապետեան	Պետրոս Պոլոյեան
Կարապետ Մերժեան	Պերճ Արսենեան
Կարապետ Փայտազեան	Սուրեն Կապարեան
Հայրապետ Հայրապետեան	Վաղարշակ Իսիկեան
Հրաչեայ Գալֆայեան	Տիգրան Թորգոմեան
Մանուէլ Պաշխուրեան	Տիգրան-Նուրհան Չայեան
Մելիքն Ապահեան	Յաւակ Պալլեան

1934 — 1935

Անգրանիկ Յարութիւնեան	Կղեմէս Թաշձեան
Կարեգին Պոյաձեան	Յարութիւն Հեփիլեան
Դեռոգ Սարափեան	Յակոբ Դանիէլեան
Եղիշէ Մերեան	Յարութիւն Զիլեան
Թադեոս Կարկանեան	Յարութիւն Սուշուեան
Ժիրայր Բիրեկիսեան	Նշան Կոստեան
Լեւոն Սարաձեան	Պարոյր Թուշուեան
Լօռիս Մելիքեան	Պերճ Օսապաշեան
Կարպիս Կոստանեան	Սարգիս Յովհաննէսեան
Կարպիս Սանթրեան	Սարգիս Գարիպեան
Կարապետ Պենկեան	Սենեֆերիտ Պետրոսեան

1935 — 1936

Արամ Տոխանեան	Մանուկ Պետիկեան
Արայ Տունանեան	Յարութիւն Գրիգորեան
Արշալիր Զափարեան	Յովհաննէս Պոլոսեան
Գրիգոր Գրիգորեան	Պերճ Հանքիլեան
Ժիրայր Կրանեան	Ռուբէն Գալպագեան
Համազասպ Պեյլերեան	Տիգրան Սարալարեան
Օննիկ Գուշազազեան	

1936 — 1937

Զօհրապ Պարթուլիօղլու	Վահէ Տօղրամանեան
Վահրամ Տեօվլեքեան	

1937 — 1938

Անդրանիկ Տուրինեան
Արթին Միրսիչ-Փիլիպոս
Լևոն Պեոյախսեօֆեանի
Կարպիս Պիլյախարս

Ասեփան Բունաշեան
Վարուժան Իշխանեան
Օհաննէս Պեյրեան
Օննիկ Մանուկեան

ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ ԽՆԱՄԱՏԱՐԱԿԱՆ


Մ Ի Ա Ց Ե Ա Լ Ո Ր Բ Ա Ն Ո Ց

| 1938 - 1940 |

Որբանոցներու միացման պարագան Սուրէնեան Վարչութեան օրով երկու տարի յաջորդարար սեղանի վրայ եկաւ, սակայն այն ատեն խնդիրը հասունցած չըլլալով, երկու որբանոցներու մատակարար մարմինները չկրցան համաձայնութեան մը գալ, իսկ Վարչութիւնը չպնդեց իր տեսակէտին վրայ, աչքի առջև ունենալով թէ երկու որբանոցները իրենց նիւթական միջոցներով տակաւին ի վիճակի էին գոյութիւնին շարունակել անջատ անջատ:

Միացումը հրամայական դարձաւ 1938 Սեպտեմբերին, երբ մէկ կողմէ Շիշլիի Գարակէօզեան ազգային որբանոցին մատակարարութիւնը անելի մատնուած էր, կալուածական հասոյթներու ծայրայնղ նուազումին եւ յոռի տնտեսութեան մը հետեւանքով ու հաստատութիւնը ինկած ծանր պարտքերու տակ, միւս կողմէ Սանատարեան խնամակալութեան երկար տարիներէ ի վեր խնամատարութեան ըրած նիւթական կարևոր օժանդակութիւնը, ծանօթ դատին առած ծախսորդ վերջաւորութեան վրայ դադրած էր, եւ խնամատարութեան համար դժուար էր առանց այդ օժանդակութեան իր գործը շարունակել: 1937—38 շրջանին խնամատարութիւնը իր կարելին ըրաւ ազգային նախակրթարաններու մէջ ուսում ու դաստիարակութիւն ստացող 4—500ի մօտ դպրոցական տղոց թողակները վճարելու, բայց հասաւ ատեն մը երբ հազիւ կարելի կ'ըլլար հասնիլ Սկիւտարի որբանոցին, ուր կը պատսպարուէին 70—80—90 երկսեռ որբեր,

եւ երկու գաղթականներու մէջ գտնուող 4—500ի մօտ խնդն գաղթականներու պէտքերուն: Արբազան Պատրիարքն ու օրուան Վարչութիւնը մօտէն տեղեակ կացութեան յղացան ու թեւադրեցին որբանոցն'յրու-



ԳԵՈՐԳ ԹՈՐԳՈՄԵԱՆ

անպայման միացումը, այսպէսով Գարակէօզեան Որբանոցը պատուաստում մը կրելով նոր եւ աշխոյժ Խնամակալութեան մը ձեռքին տակ, պիտի կրնար վերելք մը ունենալ որուն Խնամատարութիւնը պիտի բերէր իր նիւթական ու բարոյական ազդու ձեռնտուութիւնը: Իսկ Խնամատարութիւնը Ակիւտարի որբանոցին Շիշլիի որբանոցին հետ միացումովը նիւթական կարեւոր խնայողութիւն մը պիտի ունենար իր պիւտեճին մէջ ու զայն գործածէր գաղթականներու եւ անոնց փոքրիկներուն ուսումնական ու դաստիարակ-

կութեան ծախքերուն: Այն նամակը որ Վարչութեան անխախտ կամբը կը յայտնէր որբանոցներու անպայման միացումին մասին, որոշապէս յը շեշտէր այս պարագան եւ ժամ առաջ միացման իրականացումը կը պահանջէր 1938ի Յուլիս եւ Օգոստոս ամիսներուն էր, Խնամատարութեան Վարչական Ժողովի անդամներուն մեծամասնութիւնը զործէ ձեռնթափ եղած էր, անոր Տիար Ատենապետը երբեմն փոխ ատենապետին հետ եւ յանախ առանձինն կը վարէր միացման սկզբնական բանակցութիւնները մերթ Շիշլիի որբանոցի Խնամակալութեան եւ մերթ Կեդրոնական Վարչութեան հետ, ըստ իր անձնական համոզումներուն, փափաքներուն եւ օրին մէկն ալ Վարչութեան թեւադրութեան վրայ, ինչպէս Գարակէօզեան որբանոցի Խնամակալութիւնը, Խնամատարական Վարչական Ժողովն ալ ինքզինքը գոյվութենէ դադրած նկատեց իր ատենապետին փափաքովն ու որոշումովը: Մինչ Վարչութիւնը միայն Խնամակալութեան եւ Խնամատարա-

կան Վարչական Ժողովին որբանոցներու միացումին իրենց ան-
պայման հաւանութիւնը յայտնելը ուզած էր, եւ միշտ զրած
թէ միացումը կը պատկանի որբանոցներուն միայն, եւ թէ զաղ-
թախնամ գործը ըստ առաջնոյն պէտք էր որ պահեր իր գոյու-
թիւնը, Կեդրոնական Վարչութիւնը միացեալ որբանոցին համար
կազմեց նոր ննամակալութիւն մը, 7 անդամներէ բաղկացած:

Ահա՛ պատեմէնը այն պաշտօնագրին (զատ զատ զրկուած
իւրօրանչիւրին) զոր մեզ տրամադրեց Պ. Գէորգ Թորգոմեան:

Ա.Զ.Վ. Վ.Ս.Բ.Ս.Կ.Ս.Ն Ժ.Պ.Ղ.Ո.Վ.

Ի Ս Յ Ա Ն Պ Ո Ւ Լ

Իսրայիլ, 13 Յունիս 1938

Համար 1072

Ազուաշուք Տիար Գեորգ Թորգոմեան

Ռեռումաբ Ազգ. Վարչական Ժողովոյ, մասնաւոր ծրագրով մը
միացած են Ալիւսարի խնամասարական եւ Շիշլիի Գարակեօգեան
Որբանոցները ներկայ 1938-39 տարեշրջանի սկիզբէն, նիւթական
կարէնուր խնայողութիւն մը ապահովելու նպատակաւ, եւ ըստ այս
ծրագրի յիշեալ որբանոցներու խնամասարական մարմինները դադ-
րած ըլլալով՝ Վարչական Ժողովը կազմեց սոյն Միացեալ Գարա-
կեօգեան խնամասարական Որբանոցին համար նոր խնամակալու-
րիւն մը հետեւեալ անձնաւորութիւններէն. —

Չեր Ազնուութիւնը եւ Տիարք

Եղուարդ Գարակեօգեան

Մկրտիչ Իւրիւնեան

Լեւոն Սուրենեան

Տօքր. Ա. Մեզպուրեան

Տօքր. Բ. Տիւնեան

Սարգիս Բեքեգեան

Նորնսիր խնամակալութիւնը անմիջապէս նիւթ գումարելով,
իր դիւանը կազմելէ յետոյ իբր առաջին գործ պիտի ձեռնարկէ ներ-
քին կանոնագրի պատշաճութեան եւ յաջորդական ֆանի մը նիւթե-
րու մեջ աւարտելով զայն, պիտի ենթարկէ Ժողովիս նկատաւան եւ
վաւերացման: Այս կանոնագրով պիտի հեզուին որբերու ընդունե-
լութեան, պիւսնէի կազմութեան, պատշտեաններու անուանման, որ-

բանոցին մասախարհաբան, ինչպէս նաև կրթական եւ այլ յարակից գործառնութեանց պայմանները, որոնք պէ՛տ է համապատասխանեն Գարակեօզեան որբանոցի կտակագրի ոգիին եւ երկրին օրէններուն:

Քաջամանօք բլլալով խնամասարական գործին հանդէպ Ձեր Ազնուութեան Տաճաճ գուրգուրանքն ու նուիրումը եւ ի մասնաւորի բարեսիրական այս մարզին մէջ Ձեր մասուցած օգտակար ծառայութիւնները, վարչական Ժողովս վստահ է որ Ձեր Ազնուութիւնը նկատի ունենալով միացման այս կարեւոր ձեռնարկին անհրաժեշտութիւնը, պիտի բարեհաճի բնորոշիլ այս աշխատութիւնը եւ իր մեծալարգ բնկերակիցներուն աշխատակցութեամբը խելոյն լծուելով գործի, պիտի յաջողի նախ գլուխ հանել յիշեալ կանոնագրին պատաստութիւնը եւ ապա ձեռնարկելով Սկիւտարի որբանոցի որբերուն փոխադրութեան, ամբողջացնելով միացման այս կարեւոր գործը դպրոցական տարեօրջանի սկզբնաւորութենէն, այն է 1 Սեպտեմբերէն շատ առաջ, եւ շարունակելով սոյն նորակազմ հաստատութեան մասախարհաբան, վարչական եւ հսկողութեան հոգրջանադիր գտնուիլ դնելու զայն բաղձալի պայմաններու եւ ուղղութեան մէջ, ինչ որ կ'սպասուի Ձեր Ազնուութեան եւ Ձեր Ժրջան անդամակիցներուն ձեռննատութենէն եւ գործունէութենէն:

Կանխալայտ շնորհակալեօք եւ ջերմագին մաղբաններով,

Ի դիմաց վարչական Ժողովոյ
 Ասեմոպոլիք Վ. Ասեմապետի
 Վ.Ա.Բ.Գ.Ն. Ա.Գ.Կ.Ի.Լ. Ե.Բ. ՇԻՐԻՆՆԱՆ

Միացեալ որբանոցներու Խնամակալութիւնը 5 Յունիս 1938ին, Խնամատարութեան կեդոտնին մէջ իր առաջին նիստը գումարեց ամբողջ անդամներու ներկայութեամբ եւ իր դիւանը ընտրեց հետեւեալ կերպով.—

- Գեորգ Թորգոմեան (Ասեմապետ)
- Տօբ. Ա. Մեզպուրեան (Գեորտսեմապետ)
- Տօբ. Բ. Տիւսնեան (Ասեմապոլիք)
- Մկրտիչ Իւրիւնեան (Գանձապետ)

Այս միացումէն առաջ երկու մարմիններու կողմէ բանակցութիւններ տեղի ունեցած էին եւ որբանոցին տեւականութիւնն ու մատակարարութիւնը ամուր եւ ապահով հիմերու

լու համար, արդէն գոյութիւն ունեցող խնամատարական մասնանիւղերը ուժովցնելու եւ նոյնիսկ մասնանիւղ չունեցող կամ գոյութենէ դադրած մասնանիւղերու տեղ նորեր կազմելու եւ զանոնք գործի մղելու հետամուտ կ'ըլլայ, որպէսզի նոր օգնութիւններու միջոցաւ կարելի ըլլայ մատակարարու թիւնը ապահովելէ զատ որոշ չափով խնայողութիւն մըն ալ յառաջ բերելի շահ որբանոցի յարատեւման եւ ապագայի պէտքերուն:

6.— Նոր կազմուած Խնամակալութեան գանձապետը պէտք է բոլոր հասոյթները ի ձեռին ունենայ, Խնամակալութեան Ժողովին ամէն շաբթու հաշիւ տալու պայմանաւ, օրինակ, Խնամատարութեան բոլոր յատկացումները եւ թաղային եւ զանազան հասոյթները պէտք է գանձապետին տրամագրուին ինչպէս նաեւ Գարակէօզեան որբանոցի բոլոր հասոյթները, որոնցմէ անշարժ կալուածներու պայմանագրութիւնները պէտք է կընքուին ուղղակի Խնամակալութեան բարոյական անունին եւ գանձապետը ինքը պէտք է գանձէ կամ գանձուածները իրեն յանձնուին կանոնաւոր ստացագրերով եւ փաստաթուղթերով: Գանձապետին մօտ 500 լիրայ գումարէն աւելին վստահելի դրամատուն մը ի պահ կը դրուի: Դրամատան գործողութիւնը կը կատարուին երկու ստորագրութեամբ, ինչպէս նոյն դրութիւնը կը գործադրուի տարբեր ազգային հաստատութիւններու մէջ, երկու անդամէն զատ պահեստի անդամ մըն ալ պէտք է գտնուի, երկու անդամներէն մին անպայման գանձապետն է, միւսներն ալ Ժողովը կ'որոշէ:

7.— Մատակարարութեան գործը պէտք է ստանձնեն փոխն ի փոխ Խնամակալութեան անդամները (նախամեծարաբար գանձապետը) ընկերակցութեամբ մատակարարին, ամէնէն նպաստաւոր գիներով վաճառողէն գնուելու պայմանաւ, նիւթական միջոցներուն ներած պաշազային մեծաքանակ եւ միանուագ գնումները նախամեծար պէտք է ըլլան:

8.— Մատակարարը միեւնոյն ատեն մառանապետ է, առանձին մառանապետ պէտք չէ պահուի, մատակարարին պարտականութիւնները եւ մառանին ելքն ու մուտքը կը ճշդուի եւ հակակշռի տակ կ'առնուի առանձին ներքին կանոնագրով:

9.— Նոր Խնամակալութիւնը տարեշրջանի սկզբնաւորութենէն առաջ հաւաքական քանի մը նիստերու ընթացքին կը պատ-

րաստէ նոր եւ արդիական պահանջքները լրացնող ներքին կանոնադիր մը, որբերու ընդունելութեան, որբանոցի մատակարարութեան, պաշտօնեաներու անուանման եւ արծակման ինչպէս նաեւ կրթական գործերու պայմանները սահմանող եւ զայն կ'ենթարկէ Վարչական ժողովոյ վաւերացմանը:

10. — Խնամակալութիւնը



Ս. ԲԷՄԵՉԵԱՆ

միմիայն որբանոցի շահը եւ խնայողութիւնը իրեն նշանաբան ունենալով երկու որբանոցներու պաշտօնէութիւնը կը զտէ, պահելով անոնցմէ արժանաւորագոյնը եւ պիւտճէի տեսակէտով ամէնէն մատչելին եւ յարմարները, բացարձակ անկողմնակալութեամբ, քանի որ անհրաժեշտօրէն եւ պարագաներու հարկադրանքով կարգ մը պաշտօնեաներու պաշտօնը աւելորդ կը դառնայ: Խնամակալութիւնը առանց այլեւայլի վերջ կու տայ որբանոցին մէջ ընտանիքով բնակելու դրութեան: Պաշտօնէ դադարողներուն հարկ նդածը կ'իմացնէ զոնէ երկու ամիս առաջ:

11. — Ինչպէս ազգային ամէն մարմին, Գարակէօզեան-Խնամատարական ազգային որբանոցի խնամակալութիւնն ալ պարտաւոր է ամէն տարւոյ Յունիսին լիազու մար նիստի մը մէջ պատրաստելու իր տարեկան պիւտճէն ինչպէս նաեւ նախորդ տարուան իրականացած հաշիւները եւ զանոնք Վարչական ժողովոյ միջոցաւ ենթարկել Տնտեսական Խորհրդոյ քննութեան ու վաւերացման:

12. — Պատկառելի Վարչական ժողովը հանրութեան ուղղեալ զեկոյցով մը որբանոցներու միացման շուրջ հարկ եղած լուսարանութիւնները տալով կը հրաւիրէ զայն ըստ առաջնոյն շարունակելու իր բարոյական ու նիւթական օժանդակութիւնը որբախնամ գործին, առանց որոյ միացումը ռեւէ օգուտ պիտի չկրնայ ապահովել միացեալ որբանոցին: Խնամակալութիւնն ալ

իր կարգին եւ պարբերաբար կոչեր հրատարակելով կը ջանայ վառ պահել ժողովրդին սրտին մէջ այս մարդասիրական ոգին:

Խնամակալութիւնը տարեշրջանէն առաջ իր կազմը կը լրացնէ իրաւագէտ անդամ վահան Խիւտալէրտեանով, որ 23 Օգոստոսի Բ. նիստէն սկսեալ կը բերէ իր գործօն ծառայութիւնը:

Միացեալ որբանոցին 1938—1939ի պիւտնէին պատրաստութիւնը կը յանձնուի զանձապետ Մ. Իւթիւհեանի, որ այդ աշխատութիւնը լրացընելով կը բերէ Խնամակալութեան 6 Սեպտ.ի նիստին՝ անոր հաւանութեան ենթակելու համար: Յետոյ վարչական ժողովին կողմէ եւս վաւերացուելէ ետք մանրամասնօրէն կ'արծանագրուի ատենագրութեան մէջ հետեւեալ կերպով. —



Վ. ԽԻՒՏԱՎԻՐՏԵԱՆ

ատենագրութեան մէջ հետեւեալ կերպով. —

ՊԻՒՏՃԷ ԳՍՐԱԿԵՕՁԵԱՆ-ԽՆԱՄԱՏԱՐԱԿԱՆ ԱԶԳ. ՈՐԲԱՆՈՅԻ

1 9 3 8 - 1 9 3 9 Տ Ա Ր Ո Ւ Ա Ն

Ա. Հասոյթի Բաժին

	Թ.Լ.
Գարակեօզեան Որբանոցի կալուածական գու.ս հասոյթը	7402
Գարակեօզեան Որբանոցին եղած նիւթեղէն ու դրամական նուէրներ, Մեարիքի նպաստ, Էւլն., ինչպէս նաև որբերէ կամ իրենց պաշտպաններէ զանձուած բռշակները	1950
Սկիւսարի Խնամասարական որբանոցէն վախապրելի 37 որբերէն բռշակաւորներու ամսականները	800
Սկիւսարի Խնամասարական որբանոցէն սարեկան նիւթեղէն եւ դրամական նուէրներ (ըստ 1937-8ի իրականացման)	725
Հին եւ նոր որբերու բռշակներու նախաստուած յաւելումէն	23
	<hr/>
ԳՈՒՄՍՐ	11000
Հասրահումն: Խանին բիւ. 1 յարկին պարտպին համար զեղչ	500
	<hr/>
	10500

Բ. Ծախքի Բաժին

Թ.Լ.

Տնօրեն Յ. Սարայսարեան	480
Թուրքերենի ուսուցիչ Ե. Կարգի (3 դասարան միացեալ)	1188
Տիկ. Ա. Պաղասարեան	114
Բ. և Գ. դասարաններու մնայուն ուսուցչին	180
Համարակալ Օննիկ Ոսկանեան	132
Մասակարար Կարապետ Պինպաշեան	240
Մառանապետ Ս. Յովհաննեսեան	240
Կօշակար վարպետ Յովակիմ Ասենեան	240
Խոհարար Յովսէփ Կիրակոսեան	168
Մաքրութեան պաշտօնեայ Յակոբ Գարան	162
Գիշերապան Լեւոն	96
Գոնապան Սաղարիկ	72
Հանդերձապան Տիկին Վարսենիկ Ղուկասեան	129
Աման լուսցող Պեարբիս Ասլանեան	90
Օգնական հանդերձապանուհի Տիկին Լուիզ	108
Պարեն, նպարեղեն, միս, բանջարեղեն	3300
Հաց	1100
Նորոգութիւն	150
Վառելանիւր, քարածուխ	800
Ելեկտրականութիւն	80
Փոխադրութիւն-երթեւեկ	80
Թեթօսի ջուր	190
Գրեցական պիսոյք	121
Լուսցի, մաքրութիւն, օհառ.	300
Հանդերձեղեն-կօշիկ	600
Դեղ	30
Հեռ.աձայն	30
Տուրք եւ դրոս	50

ԳՈՒՄԱՐ

10500

Նախորդ 1937—1938 տարեշրջանի մատակարարական գուժմարը կը յանգէր 8958 Լ.ի, 44 որբով եւ 16 պաշտօնեաներով: Ազգ. Պատրիարքարանի 1 Սեպտեմբեր 1938 թուակիր եւ 1093 համար պաշտօնագրով կը հաղորդուի փակումը ինամատարութեան կեդրոնի գրասենեակին եւ անոր գործառնութիւնները ատենի մը համար կը փոխադրուին որբանոցի շէնքին մէջ: Իսկ Սկիւտարի որբանոցին 37 որբերուն Շիշլի տեղափոխութիւնը կը կատարուի 19 Հոկտեմբերին եւ այս կերպով

Գարակէօզեան հաստատութեան սաներուն թիւը կը բարձրանայ 96ի:

Այս միջոցին Խնամակալութեան օրակարգին վրայ կու գայ տնօրէնին եւ որբանոցի մատակարարին ընտանիքով շէնքին մէջ բնակութեան խնդիրը: Կ'արձանագրուի այս առթիւ Վ. Խիւտավէրտեանի հետեւեալ տեսակէտը. «Տնօրէնին եւ մատակարարին ընտանիքներուն գոյութիւնը հաստատութեան մէջ անպատեհութիւններու դուռ կը բանայ:»

Որբանոցին դրամական ու հաշուական գործերուն նորընտիր գանձապետ Մ. Իւթիւնեանին փոխանցումը տեղի կ'ունենանայ 4 Հոկտեմբեր 1938ին:

Խնամակալութիւնը մեծ դժուարութիւններով ջանադիր կ'ըլլայ կանոնաւորելու որբանոցին կալուածական ու մատակարարական գործառնութիւնները: Հաստատութեան սեփական «Խտիվալ» պանդոկի շէնքը, անոր յարակից երկու տուններն ու «Փոստահանէ» խանը հրդեհի դէմ կ'ապահովագրուին 1939էն սկսեալ:

Վ. Խիւտավէրտեան 31 Մայիս 1939ին կը հրաժարի անդամակցութենէ «Նախկին յոռի մատակարարութեան եւ անոր դերակատարներու գործունէութեան վերջ տուող վճռական կարգադրութեան» ներհակ փոփոխութիւն մը նշմարելով ժողովի որոշումներուն մէջ:»

Նոյնպէս 19 Յունիս 1939ին իր հրաժարականը կը ներկայացնէ ՏօրՊ. Բ. Տինանեան «որովհետեւ որբանոցի տնօրէնին որբերուն հետ միասին ճաշելու մասին ժողովին կողմէ նախապէս տրուած եւ ատենագրութեան մէջ արձանագրուած որոշումը չէ գործադրուած:»

Գոհացում տրուելու խոստումով Տօրթ. Տինանեան ատեն մը եւս կը շարունակէ իր անդամակցութիւնը եւ որբերու առողջական հսկողութիւնը, սակայն ի վերջոյ կը հարկադրուի վերջնականապէս հրաժարիլ՝ նոյն պատճառով:

17 Սեպտեմբեր 1939ին Խնամակալութեան կազմէն կը հեռանայ նաեւ Գէորգ Թորգոմեան եւ ժողովին ատենապետութեան կը կոչուի Տօրթ. Ա. Ն. Մէզպուրեան: Ատեն մը յետոյ Լեւոն Աուրէնեան եւս կը հրաժարի ու Խնամակալութիւնը չորս անդամով կը շարունակէ իր գործունէութիւնը:

Որբանոցին 1939—1940 տարեշրջանի պիւտճէն կը պատրաստուի 12000 ոսկի նախատեսութեամբ: Շուրջ 1500 ոսկիի յաւելումը կը յատկացուի որբերուն զբոստեղէններու շինութեան եւ այլ բացառիկ ծախսերու:

24 Դեկտեմբեր 1939ին Կրթական Տնօրէնութիւնը պաշտօնազրոյց մը կը յանձնարարէ որպէսզի որբերուն ընդունելութեան գործը տեղի ունենայ Կրթական Գործաւարութեան կողմէ վաւերացուած կանոնադրութեան համաձայն: Խնամակալութիւնը անհրաժեշտ կը դատէ հայ վարժարաններու ընդհանուր կանոնադրին 145րդ յօդուածին համաձայն սեփական կանոնադրութիւն մը պատրաստել ու ներկայացնել Կրթական Տնօրէնութեան:

Խնամակալութիւնը տնօրէն Յ. Սարայտարեանի հետ համախորհուրդ, 1940ին կը վաւերացնէ ուսուցչական ու ներքին պաշտօնէութան կազմը՝ հետեւեալ կերպով.—

Թո՛րքիչնի ուսուցչուհիներ՝ Իճլալ Սամբէլի եւ Լայիքա Գարապէյ: Մնայուն ուսուցչուհիներ Տիկ. Անժէլ Պաղտատլեան եւ Յակոբ Գարակէօզօղլու: Իսկ նրաժշտութեան այցելու ուսուցիչ՝ Բբօֆ. Վ. Միսէնտիսեան: Յաջորդաբար ուսուցչական մարմին կը միանան նաեւ Արշալոյս Պէկեան եւ Անժէլ Սարմըսազօղլու:

Իսկ ներքին պաշտօնէութիւնը կը ներկայացնէ հետեւեալը.— Կարապետ Պինպաշեան (հաւաքիչ եւ կալուածական մատակարար), Օննիկ Ոսկանեան (համարակալ), որուն կը յաջորդէ Արամ Գէորգեան, Սարգիս Յովհաննէսեան (մառնապետ), Մարիամ Անսուրօղլու (սեղանապետ), Եղիսաբէթ Զիլինկիրեան (հանդերձապահուհի), Ալիքսան Զնտան (գիշերապահ), Յակոբ Գարան (տնտես), Սաղաթիէլ Կիւրէղեան (դռնապան), յետոյ կը յաջորդէ Յարութիւն Պարսամեան, Տիգրան Ա. Սարգիսեան (խոհարար), որուն կը յաջորդէ Իմաստիկ Գույումեան, Միշկինազ Անտոնեան (կարուհի՝ եւ աշխատաւորներ՝ Վարդանոյշ Կէօզ ու Հայկուհի Գույումեան:

Գարանայ Գարակէօզեան Արբանոց

1940 Ապրիլ 28ին, խառն նիստի մը մէջ, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Խնամատարական Վարչ. Ժողովէն Տօթ. Մելիքօֆ, Լեւոն Սուրէնեան, Պիմէն Զարդարեան եւ Արմենակ Զպո գեան, իսկ Գարակէօզեան Խնամատարական միացեալ որբանոցի խնամակալութենէն Տօթ. Ա. Մեզպուրեան, Մկրտիչ Իւթիւհեան եւ Եղուարդ Գարակէօզեան, յետ խորհրդակցութեան կը ջշուի «Խնամատարական» բացատրութիւնը եւ կ'որոշուի դարձեալ որբանոցը կոչել «Գարակէօզեան» անունով:

16 Սեպտեմբեր 1940ին Ա. Խաչի մեռելոցին օրը, աւանդական սովորութեան համաձայն, որբանոցին բոլոր սաները՝ առաջ-

1939 — 1940

Գրիգոր Գրիգորեան	Նսգարեք Մակարեան
Հայկազուն Էլիեկեան	Պօղոս-Նուպար Չիլիկիյրեան
Յարութիւն Պեկեան	Պօղոս Չարչարեան
Ֆրանսուա Բայրեան	

1940 — 1941

Արշալիր Տերեան	Հանքարձոււ Ռասնեան
Գեորգ Տերեան	Մանաս Էօզրիրիւն
Գրիգոր Էօզրասրեւան	Պարոյր Ռենճեան
Երուանդ-Եղիա Մանուէրեան	Վահան Խաչիկեան
Երուանդ Պեկեան	Վարդան Ուզար
Օննիկ Թիւշպեկեան	

1941 — 1942

Արեւեանի Թարխազյու	Սարգիս Պեսիկեան
Ժիրայր Չպուգանեան	Սեւիան Ասլանեան
Նսգարեք-Թորոս Աեւերձիպաշեան	Տիգրան Իսրանպուշեան

1942 — 1943

Կարապետ Շիւշիրօյլու	Միրսիչ-Արսև Էրօեան
Հանքարձոււ Գասպարեան	Յարութիւն Տեհեան
Հանքարձոււ	Պերէ Ճանսան
Հայկ Նալբանդ	Սուքիաս Գուտրու
Մարտիրոս Թորան	Սեւիան Տեվլեքեան

1943 — 1944

Արթին Թօզգօրարան	Նուպար Թանըշքի
Գեորգ Միխայել	Պերձ Գլըձըր
Նորասունի Պահեօրյու	Վարդան Մեչիֆեան

1944—1947 տարեշրջաններուն կարելի չըլլար ե. կարգը կազմել: Սաներուն թիւը անբաւական ըլլալով, Խնամակալութեան կարգադրութեամբ կը զրկուին Պէզազեան եւ Բանկալթիի Մխիթարեան վարժարանները:

* * *

Յ. Սարայտարեան ամէնէն երկարատեւ տեսչական պաշտօնը կը վարէ որբանոցին, շուրջ 17 տարի: Հաստատութեան մէջ իր ցերեկեայ կամ գիշերօթիկ մնալու պարագան կարգ մը անհասկացողութեանց ծնունդ տալով՝ 5 Մայիս 1945ին կը հրաժարի եւ անոր տեղ 1945—1946 դըպրոցական տարեշրջանին սկիզբը տնօրէնութեան պաշտօնին կը կոչուի Կարպիս Ճիլահեան: Աւսուցչական մարմնին մէջ կ'առնուին որպէս մնայուն դաստիարակուհի Օր. Արմենուհի Զալբգեան եւ Օր. Պերնուհի Կիւլպէնկեան (յետոյ Տիկ. Ճիլահեան): Նախորդ տարեշրջանէն մարմնամարզի ուսուցիչ նշանակուած էր Պ. Արթուր Գալբազեան, որ Ա. Նիկողոսեանի տեսչութեան շրջանին ալ ատեն մը օգտակար պաշտօնավարութիւն ունեցած էր:




Մ. Օ. Հ. Ն. Ն.

Խնամակալութիւնը, որուն անդամակցութեան կը կոչուին նաև Մարկարիոս Օհանեան եւ Վահան Խիտավէրտեան, բացառիկ զոհողութեամբ մը որբանոցի սաներուն թիւը 89էն 120ի կը բարձրացնէ: Ասոնցմէ 71ը բոլորովին ձրի կ'ընդունուին, իսկ 49ը միայն 5էն մինչև 20 ոսկի ամսական կը վճարեն: Նախապատուութիւն կը տրուի ամէնէն յետին թշուառներուն եւ անպաշտպաններուն:

Որբանոցին տարեկան պիւտճէն կը բարձրանայ 60,000 ոսկիի, որուն հազիւ կէսը կը գոցեն կալուածական հասոյթները, պատի օրացոյցներէ գոյացած գումարը եւ պատահական նուիրատուութիւններ: Մնացեալը կը հայթայթուի բացառիկ ձեռնարկներով եւ արգիւնաւոր ջանքերով: Տիկնանց Օժանդակ Մարմինին, որուն գործունէութեան կ'արժէ առանձնապէս անդրադառնալ:

1945—1946 տարեշրջանին սկիզբները որբանոց կ'այցելէ Կրթական Տնօրէնութեան շրջանային քննիչը եւ աչքէ անցնելով հաստատութեան զանազան բաժինները (ննջարան, դասարան, հանդերձարան, հաշարան, եւլն.) տիրող մաքրութեան ու կա



4. Ճիլանների ստրկեւրեան շրջանի ուսուցչական մարմինը շրջապատած որսանդիկն սաներով

կէօզեանի հողակոյտին վրայ մարմարիտնէ խաչ մը զետեղուած է յետոյ Խնամակալութեան կողմէ: Ըստ կտակագրի Խնամակալութեան պատուակալ անդամ կը նշանակուի Սարգիս Գարակէօզեան:

Խնամակալութեան 23 Յունուար 1946ի նիստի որոշման համաձայն, հաստատութեան հիմնադիրի պաշտօնին կը կոչուի ատենապետ Տօթ. Ա. Ն. Մեզպուրեան:

Այս միջոցին տեղի կ'ունենայ Որբանոցի կալուածներէ Խտիվեալ Բալասի նորոգութիւնը՝ հսկողութեամբ Խնամակալութեան նարտարագէտ անդամ Սարգիս Բէքմէզեանի: Մարկարիոս Օհանեան իր նիւթական զոհողութեամբ շինել կու տայ որբանոցի խոհանոցին ու լուացարանին քարէ սեղանները եւ կը նորոգէ գոմի դռները, ապակիները ու կը լրացնէ ուրիշ անհրաժեշտ պակասներ: Այս ձեռնտուութեան եւ իր անձնուէր աշխատութեան համար շնորհակալութիւն կը յայտնէ իրեն Խնամակալութիւնը:

Հաստատութեան պարտէզը մշակելու գործը կը յանձնուի կարող պարտիզպանի մը, որուն կ'օգնեն նաեւ երբեմն վերի կարգերու սաները:

1946—47 տարեշրջանին յաջորդաբար որբանոցի ուսուցչական կազմին մէջ կ'առնուին Պետրոս Ապահեան, Գեղամ Սեւան եւ Ներսէս Ասլանեան՝ Գարակէօզեանի նախկին սան:

Տարակարծութեանց տեղի չտալու համար, Խնամակալութեան եւ տնօրէն Կ. Ճիլահեանի միջեւ փոխ-յարաբերութիւնները կը ճշդուին հետեւեալ կերպով.—

Ա) Տնօրէնը համարատու է Խնամակալութեան՝ որբանոցի իր ամբողջ գործառնութիւններուն համար եւ պարտաւոր է ենթարկուիլ անոր բոլոր որոշումներուն:

Բ) Թէ՛ ներքին պաշտօնեաներու եւ թէ՛ ուսուցչական անուանումները, փոփոխութիւններն ու պաշտօնանկութիւնները տեղի պիտի ունենան Խնամակալութեան գիտակցութեամբ եւ որոշումով:

Գ) Տնօրէնութիւնը առանց Խնամակալութեան գիտակցութեան եւ որոշման, չի կրնար թոշակի յաւելումներ կատարել:

Դ) Որբանոցի շէնքին եւ յարակից մասերուն մէջ արգիլուած է անձնական կենդանի պահել:

Ե) Որբանոցի սաներու ընդունելութիւններն ու արձանագրութիւնները պէտք է կատարուին միմիայն Խնամակալութեան որոշման համաձայն:

Խնամակալութիւնը, որբանոցին շէնքին մէջ պաշտօնեանե-

րու ընտանեկան պարագաներուն բնակութեան հարցը նկատողութեան առաւ եւ երկար քննութիւններէ վերջ, իր 19 Յունուար 1947ի նիստին, անյարմար եւ անպատեհ համարեց թոյլատու գտնուիլ անոնց, եւ որոշեց հաղորդել իրենց որպէսզի հետանան անպայման հաստատութենէն եւ այլուր բնակին:

Որբանոցի ուսուցիչներէն Պ. Ապահեանի առժամեայ հեռանալովը անոր տեղ տարեշրջանի ընթացքին պաշտօնի կը կոչուին ժիրայր Մանուկեան եւ ժիրայր Սերոբեան: Առժամաբար կը պաշտօնավարէ նաեւ Տիկ. Օնպաշեան:

1947 Մայիս 5ին տեղի կ'ունենայ մեծանուն ուսուցչապետ Ռեթէոս Պէրպէրեանի մահուան 40 ամեակի հոգեհանգստեան պատարագը, որուն ներկայ կը գտնուին Խնամակալութեան կողմէ Վ. Խիւտավէրտեան, տնօրէնը եւ սաներու խումբ մը:

Այս շրջանին հետեւեալ կարեւոր նուիրատուութիւնները կ'աբժանագրուին:

1.— Տօթ. Ա. Քէրիկեան Շիշլիի մէջ կէս արարթըման մը կտակած ըլլալով Գարակէօզեան որբանոցին, Վ. Խիւտավէրտեանի ջանքերով թափուն առնուեցաւ եւ հաղորդուեցաւ Էլզաբի տնօրէնութեան:

2.— Փաստաբան Խաչիկ Գաֆէճեան, բարեսիրական ու կրթական հաստատութիւններու կարգին, ի կենդանութեան՝ Որբանոցին նուիրեց 2500 ոսկի: Խնամակալութեան կողմէ շնորհակալութեան գիր մը զրկուեցաւ բարերարին, յանուն հաստատութեան սաներուն:

3.— Պէյօղլու, Սանթրալ արարթըմանի բաժնետէրերէն հանգուցեալ Թազուր Գարակէօզեանի աղջիկը Տիկ. Էլզա Իսբէնեան շէնքին մէկ քառորդ բաժինը նուիրեց որբանոցին: Այս նուիրատուութեան մէջ մեծ դեր ունեցած էր Պ. Արամ Գարակէօզեան, որուն ինչպէս նաեւ նուիրատու Տիկնոջ շնորհակալութեան գիրեր զրկուեցան: Իսկ Մարկարիոս Օհանեանի ջանքերը դիւրացուցին սեփականութեան թուղթը ստանալու գործը:

4.— Ողբացեալ Համբարձում Բերովբէեանի կողմէ եւս ըստ կտակի, Ազգ. հաստատութեանց տրամադրուած գումարներու կարգին, 3750 ոսկիի բաժին մըն ալ ունեցաւ Գարակէօզեան Որբանոցը: Սոյն գումարին ստացման օրինական գործողութեանց ընթացքին Որբանոցը կը ներկայացնէր իրաւագէտ անդամ Վ. Խիւտավէրտեան:

3. ՏՕԲԹ. Ա. Ն. ՄԵԶՊՈՒՐԵԱՆԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԸ

1947 — 1948

Խ՛ումակալութիւնը իր 20 Յուլիս 1947ի նիստին կ'ընդունի տնօրէն Կ. Ճիլանեանի հրաժարականը:

Նոյն պաշտօնը ժամանակաւոր կերպով կ'ստանձնէ Տօբթ. Ա. Ն. Մեզպուրեան իրրիւ հիմնադիր, որ կը լրացնէր նոյն ատեն տնօրէնի պաշտօնական հանգամանքները: Նոր տնօրէնը, Խնամա-



Խնամակալութեան կազմը 1948ին. աջէն ձախ՝ Հ. Վարդանեան, Վ. Խիսավերեան, Տօբթ. Ա. Ն. Մեզպուրեան, Ա. Բենեդեկեան եւ Մ. Օսմանեան

կալութեան հետ համախորհուրդ քանի տարիներէ ի վեր կրճատուած նախակրթարանի Տրդ դասարանը կը վերարանայ, Կրթական Տնօրէնութեան հաւանութեամբ: Այս առիթով կրթական պաշտօնէութիւնը նոր փոփոխութիւններով կ'ունենար հետեւեալ կազմը. —

Տիկ. Անժէլ Պաղտատեան, .Երանուհի Այսէլ, Բրօք. Վ. Միւհէնտիսեան, Կարպիս Մուրատեան, Ներսէս Ասլանեան, Պետրոս Ապահեան, Հրայր Թորոսեան, Յակոբ Փէրտահեան եւ Գաբրիէլ Գաբրիէլեան:

KARAGÖZÜYAN

ERMENİ YATILI
İLK OKULU



İclal Samyeli



Muhsine Osmay



Melda Urcun

1947
ÖĞRETMENLER

1948
KADROSU



DR. A. N. MEZBURYAN
KURUCU VE MÜDÜR



Güzin Çöne



Anjel Bağdikian



Yeranuhi Aysel



Bedros Abacıyan



GARBIS
MURADYAN



Nerses Aslanyan



Vahram Muhendisyan



Hrayr Torosyan



Hâçop Perdahiyan



Arto Dincman



Kapriel Kapriclyan

1947 - 1948 SURETERYANLI SINIFLERİN İLK OKULUĞUNUN İFADİSİ

Թուրքերէնի ուսուցչուհիներ՝ Իճլալ Սամեէլի, Մուհսինէ Օսմայ, Մէլտա Ուրճուն եւ Կիւզին Չէօնէ:

Երիտասարդ ուսուցիչներէն ոմանք զինուորական ծառայութեան կոչուելով, յաջորդներ իսկոյն իբր օժանդակ առնուած են եւ դասախօսութիւնները խանգարում չեն ունեցած:

1947—48 տարեշրջանին որքանոցը կ'ունենայ 127 սան, հետեւեալ բաժանումով. Ա. կարգ 26 աշակերտ, Բ. կարգ 36, Գ. կարգ 28, Դ. կարգ 17 եւ Ե. կարգ 20 աշակերտ:

Տօքթ. Ա. Ն. Մեզպուրեան անձնուիրաբար կը վարէ տեսչական պաշտօնը, ամբողջ տարի մը ստանձնելով նոյնպէս Ե. կարգի ֆրանսերէն լեզուի դասաւանդութիւնը:

Ամէն առաւօտ ան կանուխէն կու գայ Որբանոց իր պարտականութեան զլուխը, կը հետեւի դասաւանդութեանց անթերի կատարումին, կը վերահսկէ կարգապահութեան եւ կ'ընէ անհրաժեշտ տնօրինութիւնները:

Կրթական Տնօրէնութիւնը մասնաւոր հրամանագրով մը կը պահանջէ որպէսզի հաստատութիւնն ունենայ իր վաւերացուած բժիշկը: Օրինական հարկ եղած ձեւակերպութիւնները կը կատարուին եւ իբր օրինական բժիշկ կը վաւերացուի պաշտօնը Տօքթ. Ա. Ն. Մնգպուրեանի, որ արդէն իսկ տարիներէ ի վեր կ'ընէր բժշկական այդ սպասարկութիւնը անձնուիրաբար:

1947—1948 տարեշրջանին Որբանոցը կու տայ 20 ընթացաւարտներ հետեւեալ կերպով.—

1947 — 1948

Արամայիս Էրկիւն	Հերման Մանֆիօզյու
Արթուր Պիւլիւֆ Գարակոզ	Մանուկ Մելիֆեան
Արմենակ Պոյաձեան	Նուպար Պոլյան
Ալեկսիս Գուլումձեան	Պերճ Զարուկ
Գառնիկ Ինձեան	Պերճ Փափագեան
Գրիգոր Գարուսեան	Պեթի Գարագուշեան
Գրիգոր Էրվան	Պողոս Ճիհանկիւշ
Լեւոն Կազարոյ	Վարուժան Սիւսկեան
Կարապետ Տէրեհեան	Սարգիս Սարըշեղ
Համբարձում Աղամեան	Օհանեսու Գուլումձեան

Տօքթ. Ա. Ն. Մեզպուրեանի տնօրէնութեան շրջանով կը լրանայ Գարակէօզեան Որբանոցի 35 ամեակը: Իրեն կը յաջորդէ 1 Սեպտ. 1948ին բազմաժամանակ ուսուցիչ Մատթէոս Թորոսեան:

ՈՒՇԱԳՐԱԻ ԶԱՐԺՈՒՄՆԵՐ ՈՐԲԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ

1. ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄՆԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Գարակէօզեան Որբանոցի Խնամակալութեան Օժանդակ Տիկնանց Մարմինը՝ նախածեռնութեամբ Տիկ. Հայկանոյշ Մառքի, կը կազմուի 10 Դեկտեմբեր 1943ին հետեւեալ կերպով.—

- Տիկ. Հերանոյշ Պ. Յակոբեան (Ասեկնայեան)
- » Արշալոյս Պապեան (Ասեկնայեան)
- » Մրբունի Վարդանեան (Գանձայեան)
- » Վեգոր Մըսրը (Հաշուակալ)
- » Արուսեակ Յակոբեան
- » Էլիզ Խորասանեան
- Օր. Ալիս Մեզպուրեան
- » Ալիս Սայապուրեան

Իսկ պատուակալ անդամուհի կ'ընտրուի Տիկ. Հայկանոյշ Մառք:

Օժանդակ մարմինը իսկոյն գործի կը ձեռնարկէ: Նոր Տարուան առթիւ բարեսէր ազգայիններու ղրկուած կոչերով եւ իր անձնական դիմումներով ձեռք բերած հասոյթը կը յատկացնէ որբերու անհրաժեշտ կարիքներուն:

28 Յունուար 1944ին Օժանդակը խառն նիստի մը կը հրաւիրուի Խնամակալութեան կողմէ եւ կը ճշդուին իր իրաւասութեան ու գործունէութեան սահմանն ու շրջանակը՝ նախագծեալ ծրագրով մը:

Օժանդակ անդամուհիները հերթական այցելութիւններով մօտէն կ'ուսումնասիրեն որբանոցին ներքին վիճակը, կը հետաքրքրուին խոհանոցով, մառանով, հերմակեղէններով, մաքրութեամբ եւ որբերուն հազուստ-կապուստով: Հանդերձատան գոյբերուն ցուցակագրութեամբ կ'զբաղին:

Խնամակալութեան ատենապետ Տօթ. Ա. Մեզպուրեանի առաջարկով Նոր Կիրակին կը հռչակուի «Գարակէօզեան Որբանոցի Օր» եւ կը կազմակերպուին հանդիսութիւններ եւ ընդունելութիւններ:

Օժանդակի ցտենագրութեանց մէջ առաջին տարուան գործունէութեան մէկ ամփոփումը կը գտնենք հետեւեալ կերպով.—

«Հիմնովին մաքրուեցան որբերուն անկողինները, բուրդերն ու վերմակները: 45 մէթր կերպաս գնուեցաւ եւ շինուեցաւ 19 նոր անկողին: Ասոնց վրայ աւելցան 21 անկողիններ եւս: Բա-



ՏԻԿԱՆՅ ՕՃԱՆԳԱԿԻՆ ԿԱԶՄԸ

Չախլն աչ (նստած) Տիկիներ Ա. Պապեան, Հ. Պ. Յակոբեան, Ա. Յակոբեան
 Ա. Թանրա (կեցած) Տիկիներ Ն. Ալլանվէրի, Ա. Սայտապեան, Է. Խորասանեան, Պ. Իսիկներ, Օր. Ա. Մեզպուրեան

ւականաչափ կտաւ հայթայթուելով 100 սաւան եւ 98 կտոր հերմակեղէն կարելի եղաւ կարել: Այս գումարները յետոյ յանգեցան 316ի: Գնուեցաւ նաեւ 100 որբերու տափատ շինելու կերպաս:»

1945 Նոյեմբեր 21ին Օժանդակ կազմին պատուակալ անդամ կ'ընտրուի Մարկարիոս Օհանեան, Տիկիներու մատուցած թանկագին օժանդակութեան եւ աջակցութեան համար: Իսկ անդամակցութեան կը կոչուի Տիկ. Անահիտ Թահթա:

1945ի վերջերը տեղի կ'ունենայ անակնկալ մահը Տիկ. Վ. Մարլըի, որուն տեղ զանձապետութեան պաշտօնը կը վարէ Տիկ. Արբուհի Վարդանեան:

Օժանդակ մարմնին 1946 տարուան հաշուեցուցակը ցոյց կուտայ որ իր հասոյթները յանգած են կարեւոր գումարի մը:

1945—46 տարուան ընթացքին Օժանդակ մարմինին կողմէ հայթայթուած են հետեւեալ անհրաժեշտ կարիքները.—

106 բրդեղէն համազգեստ, նոյնքան գլխարկ եւ նշանազարդ:

108 տափատ, զոր կարել տալ յանձն առած է բարեսէր անձնաւորութիւն մը:

106 բուրդ սուեքըր հիւսուած Տիկնանց կազմին եւ ուրիշ բարեսէր տէկիններու կողմէ:

500 մէթր տրիչ, ուրկէ շինուած են ներքին ճարմակեղէն եւ 240 շապիկ:

516 մեթր ամերիկեան կտաւ, ուրկէ շինուած են սաւան, ներքնաշապիկ, վարագոյր եւ դարակի ծածկոց:

Ասոնց մեծ մասը կարուած է Տիկնանց կազմին կողմէ, որ բոլոր ձմրան ընթացքին ամէն հինգշաբթի, առաւօտէն մինչեւ իրիկուն եկած է որբանոց լրացնելու համար իր գործը: Առիթ մը եղած է ասիկա զինքը շարունակ յարարերութեան մէջ պահելու հաստատութեան հետ:


Պատրաստուած են նաև 20 երկվեցեակ երեսի սրվիլչ, 320 գոյգ գուլպայ:

Օժանդակ մարմինին դիմումին վրայ Պ. Վ. Կեսարի նուիրած 1000 ռուկի գումարով բացուած է մեքնական ջրարաշխութեամբ օժտուած հօր մը: Կաղանդի առթիւ գումար մը յատկացուած է ուսուցչութեան եւ պաշտօնէութեան իրր նուէր: Հայթայթուած են քրեակական պիտոյք, երկու բրդեղէն զգեստ պաշտօնեաներու, 2 քուլում տափատ, 10 կոիզէթ գոգնոց, 2 սեղանի ծածկոց, երեք երկվեցեակ ջուրի գաւաթ, ինչպէս նաև դանակ, պատառաքաղ, եւլն.: Նոյնպէս՝ ընդունելութեան սրահի վարագոյր, տղոց սեփուքածի նիւթեր, 15 թօն հանքածուխ եւ ոչխարներու համար կեր:

Իսկ 1946—47 տարեշրջանին Տիկնանց եւ Օրիորդաց Օժանդակ մարմինը, ինչպէս ի յայտ կուգայ իր տեղեկագրէն, գնած է 1000 մէթր ամերիքան, ուրկէ շինուած են 150 սաւան, 125 անկողնի տակի ծածկոց եւ ներքին ճարմակեղէն: Կարուած են 110 նոր անկողիններ (60ը բամպակ, իսկ 50ը բուրդ) եւ 250 շապիկ: Գընուած են 40 բուրդէ պարսնիե, 14 հատ բուրդէ ֆագսֆ, 12 երկվեցեակ գուլպայ եւ սեղանի ծածկոցներ: Նոյնպէս շինուած են 115 տափատ (60 մէթր կերպասէ): Նորոգել տրուած են 5 կարի մեքենաներ: Իր դիմումներուն շնորհիւ ետիզուլէի կաշիի գործարանատէրերէն հայթայթուած է որբերու կօշիկներուն համար անհրաժեշտ կաշին:

1947ին Օժանդակ մարմնին կ'անդամակցի նաեւ Տիկ. Նուարդ Ալլահվէրտի:

Շուրջ հինգ տարուան գործունէութեան շրջանէ մը վերջ, Գարակէօզեան Որբանոցի Տիկնանց Օժանդակը 9 Յունուար 1948ին «բոլորած ըլլալով իր գործունէութեան հինգերորդ տարեշրջանը, անդամուհիներու մեծամասնութեան փափաքով կը ներկայացնէ իր հրատարականը պատուարժան ինամակալութեան», որ 11 Յունուարի իր նիստին կ'ընդունի զայն, իր ատենագրութեանց մէջ արձանագրելով Տիկնանց Մարմնի հնգամեայ օգտակար ու գնահատելի ծառայութիւնը:



Որբանոցին նուիրուած ոչխարներու հօշո՛րհն հովիւին
և սաներու հետ

2. ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔԸ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆԻ ՄԷՋ

Գարակէօզեան որբանոցը 1919ին կը բուռնէ մարզական փայլուն շրջան մը: Հաստատութեան տնօրէն Ա. Նիկողոսեան, որ մարզանքի ջերմ սիրահար մըն էր, անձամբ կը ղեկավարէ որբանոցին մարմնակրթական ճիւղը:

Ա.տենօք որբանոցին սրահներուն պատերուն վրայ զետեղուած էին հրահանգիչ վերտառութիւններ, որոնցմէ լուրաբան-չիւրը մարմնակրթական ու բարոյական պատուէրներ էին որբերուն ձօնուած:

Ահաւասիկ անոնցմէ քանի մը նմոյշներ.

«Ծուռ քանակէն ուղիղ գիծ չկըլեր,
«Ծուռ քանակէն ուղիղ մարդ չկըլեր»:

«Առողջ մեխք, առողջ մտւեցող մեք,
«Մեկը ամեհեմք, ամեհիչ մեկին համար», եւ այլն:

Գարակէօզեանցիները երկար ատեն իրենց տոհմային դաստիարակութեան հետ կ'ստանան նաեւ ֆիզիքական կրթութիւն եւ որբանոցին տնօրէնները յաջորդաբար իրարու կը փոխանցեն հաստատութեան մարմնակրթական գործը:

Ա. Նիկողոսեանէն յետոյ նոյն պաշտօնը կ'ստաննէ Յ. Սարաջտարեան եւ երկար ատեն կ'աշխատի վառ պահել մարզական ոգին Գարակէօզեան որբանոցին մէջ:


Որբանոցը կեդրոն եղած է մարմնակրթական շարժման եւ Պէյօղլուի հայ երիտասարդները, ինչպէս նաեւ կեդրոնական լիսէի աշակերտութիւնը ամէն առթիւ օգտուած են Գարակէօզեան որբանոցի մարզադաշտէն եւ ընդարձակ սրահներէն:

1920ին Ա. Նիկողոսեան մարզանքի ծանօթ ուսուցիչ Արթօ Գալփաքեանին կը յանձնէ վարժարանին մարմնակրթանքի դասախօսութիւնը: Գալփաքեան, որ այդ թուականին մարզանքի համար շաբաթը երկու անգամ որբանոց կ'այցելէր, սիրով կ'ընդունի այս առաջարկը եւ տարի մը անձնուիրաբար կը մայրէ որբերը եւ խումբեր կը կազմակերպէ ու յետոյ կը հրաժարի:

Գարակէօզեան որբանոցը ունէր բմբշամարտութեան, ֆուլպօլի, աթլէթիզմի եւ կուիամարտի զամառն ճիւղեր:



Նախկին մարզիկներու խումբ մը (1921/ն): Զսխ կողմը՝ մարզիչ
Ս. Գալիսթեան, իսկ աջ կողմը ուսուցիչ Յաւակ Կեղիսեան



Սաներուն Տ Կոմիտէի մարզականի մը միտակ առաջ

Պարտէզին մէկ անկիւնը զետեղուած էր մարզանքի զործիր մը «պառ իրքս» որուն վրայ չափահաս տղաքը կը կատարէին ճկունութեան մարզանքներ: Ըմբշամարտի եւ կռիւմարտի վարժութիւնները տեղի կ'ունենային որբանոցին պատշգամբ:

1944—1945ի դպրոցական տարեշրջանին գանձապետ Հ. Վարդանեանի թելադրութեամբ ինամակալութիւնը կ'որոշէ Գարակէօզեան որբանոցին մարմնամարզի ուսուցիչ նշանակել դարձեալ Ա. Գալիաքեանը, որ տարւոյն վերջաւորութեան, Մայիս 12ին, հարիւրէ աւելի սաներու մասնակցութեամբ կը սարքէ մարզական զուարթ հանդէս մը ծայնասփիւռի եւ նուազի ընկերակցութեամբ ու տեղի կ'ունենան մանկական բազմաթի խաղեր ի ներկայութեան ինամակալներու եւ հրաւիրակներու: Արգիւնքի մասին մամուլը գովասանքով կ'արտայայտուի: Ժամանակ հետեւեալ տողերով կը պանծացնէր Գարակէօզեան որբանոցի մարմնակրթական շարժումը.

«Երէկ առիթը ունեցանք շատ մօտէն տեսնելու կայտառ մանչուկներ, որոնք մարզահանդէս մը սարքած էին իրենց վարժարանին պարտէզին մէջ:

«Աստուած իմ ինչն՞ր չըրին անոնք, ի՞նչ մարզանքներ, ի՞նչ արշաւներ, ի՞նչ բուրգեր, եւ ի՞նչ հնարամիտ խաղնր:

«Չարահնիները իրենց մատ մը հասակով անսպառ ծափ խլեցին եւ շքանշաններու արժանացան:

«Անոնց պարզած սրտագրաւ տեսարանը եւ ստեղծած տաք մթնոլորտը հաւասարապէս հրաշսլի էին:

Երեսայ կոչուելու չափ դեռատի կուն տուկըր մանչուկներէ սկսեալ մինչեւ 13—14 տարեկան կայտառ պատանիներ, բոլորն ալ իրարու հետ եղբայրացած՝ իրարու հետ մէկ սիրտ մէկ հոգի:


«Գարակէօզեան սաներուն այս մարզահանդէսը տեսնելով կատարեալ համոզում գոյացուցինք թէ բոլոր անոնք որ նիւթապէս կ'օժանդակին այս հաստատութեան շատ տեղին բարեգործութիւն մըն է զոր կը կատարեն»:

Գարակէօզեանի դաշտէն եւ մաքուր մթնոլորտէն օգտուած են մասնաւորաբար Կեդրոնականցիները: 11 Յունիս 1928ին տնօրէն Պ. Ատրուսիի շրջանին Կեդրոնական լիսէն իր անդրանիկ ողիմպիական մրցումը կը սարքէ Գարակէօզեան որբանոցի դաշտին վրայ:

Գարակէօզեանի ինամակալութիւնը միշտ բարեացակամ գտնուած է եւ դիւրութիւններ ընծայած՝ Կեդրոնականցիներու

վաճարին զոհացում տալու համար, հանդէսի պահուն իր բո-
լոր գոյքերը տրամադրելով անոնց:

Մրազիր մը մշակուած է եւ Խնամակալներէն ունի մտա-



Զայնասիւնի ընկերակցութեամբ որքանոցիւն սաները
մարտնակրասկան շարժումներ կը կատարեն:

Ղիր են բանջարանոցը ջնջել եւ մարզադաշտը աւելի ընդարձա-
կել ու վերածել արդիական սթատիումի:

Խնդիր մը որ թէպէտ կենսական է, սակայն մօժ գումարի
եւ ծախքի կը կարօտի, յառաջիկային ո եւ է կերպով եթէ իրա-
կանանայ այս կարեւոր ծրագիրը Իսթանպուլահայ երիտասար-
դութիւնը, բոլոր քոյր վարժարանները եւ մարմնակրթական
միութիւնները պիտի կարենան օգտուիլ անկէ առանց բացա-
ռութեան եւ իրենց ֆութպօլի մրցումները, ողիմպիական խա-
ղերը կամ մարզահանդէսները սարքել Գարակէօզեանի սթա-
տիումը:

3. ԳԵՂԱՐՈՂԻԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Գարակէօզեանի սաներուն առաւելագոյն առիթը ընծայուած է միշտ, բացի կրթական ծրագրին մաս կազմող երգի, եւ երաժշտութեան դասերէն, մասնակցելու նաեւ Որբանոցի շրջափակին մէջ յանախակի տնօրէն ու նեցող դպրոցական հանդիսութեանց, կազմելով ուրոյն երգչախումբեր, թատերախումբեր, որոնք անոնց գրական ու գեղարուեստական ճաշակը նրբացուցած են եւ ի յայտ բերած խոստմնալից ընդունակութիւններ:

Այս ուղղութեամբ գնահատելի ծառայութիւններ մատուցած են Բրօթ. Վ. Միւհէնտիսեան եւ Զարեհ Մխիթարեան, առաջինը որպէս երկարամեայ անձնուէր դասախօս երաժշտական գիտելիք՝ երոյ, իսկ երկրորդը՝ իւր մարզիչ ու խմբավար:

Գաղափար մը կազմելու համար այս մասին, հոս տեղ կուտանք այդ բազմաթիւ հանդիսութիւններէն երկուքին խնամով պատրաստուած յստագրերուն, որոնցմէ առաջինը կը զուգարդիպի Ս. Նիկողոսեանի տնօրէնութեան շրջանին, իսկ երկրորդը՝ հաստատութեան 3 ճրգ տարեշրջանի կիսուն, երբ տնօրէնութիւնը ստանձնած էր Տօթ. Ա. Ն. Մեզպուրեան:


Ա.

Յայտագիր 15րդ տարեշրջանի դպրոցական հանդէսի

(13—7—1928)

1.— Քայլերգ: 2.— Տեղեկագիր Ա. դասարանի: 3.— Խմբերգ՝ Արագեազ, Մեր դրանք, Խաւար պսակեր: 4.— Արտասանութիւն՝ Բ. դասարանէն՝ Տ. Տիմինեան՝ Küçük Yaramaz, Օ. Թագւորեան՝ Կոյր սղան, Ե. Պետիկեան՝ Vezir ile Babası, Կ. Նիկողոսեան, Տ. Թիւթիւնճեան, Պ. Թօթեան՝ Oldu Bitti.

5.— Տեղեկագիր Բ. դասարանի (Պրն. Ա. Պաղտատեան): 6.— Խմբերգ՝ Կուժն առայ, Գնս, գնս, Իմ չիւնարի կարս: 7.— Արտասանութիւն՝ Գ. դասարանէ՝ Մ. Տապաղեան՝ Saat, Օ. Զանտիլեան՝ Աստիսս մանուկը, Ա. Գրիգորեան՝ Bayrak, Մ. Սաֆրազեան՝ Յարուսէէ:



Բարսիկոզեան Սանճու Երգչախումբը
Մեջնոր ճասձ և խճապար՝ Չարեհ Միկիսարեան

- 8.— Տեղեկագիր Գ. դասարանի (Պր. Յար. Սարայտարեան),
 9.— Խմբերգ՝ Անճրեւ եկաւ, Ձիզ դու քաջիր, Ո՛հ ի՛նչ քաջը բան
 10.— Արտասանութիւն Գ. դասարանէ. Ա. Թօզնեան՝ Demircinin
 ögüdü. Ն. Տէմիրնեան՝ Թիքեւնիկը եւ Մեղուկ, Ն. Դերձակեան՝
 Ey genç çiftçi, 11.— Ներկայացում շրջանաւարտներու, Յկ.
 Պէլլէրեան՝ Ուղերձ: 12.— Տնօրէնին խօսքը շրջանաւարտներուն:
 13.— Տնօրէնին փակման խօսքը: 14.— Հայր Մեր:
 15.— Մեներգ՝ Օր. Գոհ. Գարիպեան I. Pace (La forza di
 destins - Verdi). II. Faust (C'era un ré un ré dithulé - Gounod).
 16.— Դաշնակ՝ Պ. Արթօ Պենտոն Sonat do majeur (Scarlatti)
 17.— Մեներգ՝ Օր. Գոհ. Տիրատուրեան I. Ave Maria (Mas-
 cagni), II. Ochi di Fata (Denza).
 18.— Դաշնակ՝ Պ. Արթօ Պենտոն Danse Espagnole (Granados)
 19.— Մեներգ՝ Օր. Ա. Նիկողոսեան I. Non e ver (Tito Mat-
 tei). II. Il Travatore (Strida di vampa. Verdi).

Բ.

Անուանում ասիւնաններու եւ վիճակացոյցներու բաւիում

(1947)

Անկախութեան քայլերգ (Աշակերտութիւն), Ո՛վ մեծասքանչ
 դու լեզու (Ներսէս Մեզպուրեան) աշակերտութիւն:

- 1.— Կաղանդի շէքեաթը՝ Կ. Ն. Մ. (Յակոբ Պերճ Ագգար) Ա.
 դասարան: 2.— Պիր, իբի, իւչ յէ քօլայ (Դաւիթ Գարակիւլէր)
 Ա. դասարան: 3.— Անուանում Ա. դասարանի: 4.— Քննութենէն
 վերջ՝ Գ. եւ Ն. Դասարաններու կողմէ: 5.— Անուանում Բ. դա-
 սարանի: 6.— Նոր Տարի (Վարդեր Գրիգորեան) Բ. դասարան:
 7.— Մեր դպրոցը (Արտաթի Գրիգորեան) Բ. դասարան: 8.— Որբին
 Կաղանդէքը (Կարապետ Տերվիկեան) Ն. դասարան: 9.— Անուա-
 նում Գ. դասարանի: 10.— Որինգը (Գ. Պեչկոբաբեան) Լեւոն
 Միզէր՝ Գ. դասարան: 11.— Կաղանդին իրիկունը՝ Դարբիէլ
 Մառուկեան: 12.— Աւետեցէք ո՛վ զանգակները՝ Պօղոս Ճիհանկիւլ-
 եան: 13.— Ճանապարհ խաչի (Դանիէլ Վարուժան) Մանուկ Մե-
 լիբեան: 14.— Անուանում Դ. դասարանի: 15.— Ժառանգ մնա-
 ցած սնտուկը Ն. դասարանի կողմէ: 16.— Նոր տարին ու աղ-
 քատները (Աւուսն Ֆեհերեան) Բ. դասարան: 17.— Դրամին ա-
 ղօթքը (Ռ. Սեւակ) Կարապետ Տէրվիկեան՝ Ն. դասարան: 18.—

Անուանում է. դասարանի: 19.— Խօսք աշակերտութեան կողմէ: 20.— Տեղեկագիրը եւ փակման խօսք տնօրէնին կողմէ: 21.— Քայլերգ Գարակէօզեանի (Կարպիս Ե. Մուրաճեան) աշակերտութիւն:

ՎԵՑՈՒԿԷՍ ՊՈՐՏԻ ԺԱՌԱՆԳ ՄՆԱՑԱԾ ՍՆՏՈՒԿԸ
 Մէկ արարով կասակախօսող Գարեգին ՌԵՏՈՒՆԻԻ
 Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ջ Ե Ր

Լուսիա (Համբարձումի սիրողին) Ոսկեան Գալազուշեան
 Համբարձում (Ապուշ դեղագործ մը) Պերճ Փափազեան
 Յակոբ } Լեւոն Կազարօլ
 Կարապետ } (Լուսիայի եղբայրները) Կարապետ Տէրվէնեան
 Պետրոս } Հմբ. Աղամեան
 Մանուէլ } Հերմոն Մանկեան
 Դուկաս (Վեցուկէս պորտէն ժառանգորդ) Գրիգոր Գարատէնիզ
 Նշան (Դրացի մը) Արմենակ Պօյանեան
 Տիտոս (Դրացի մը) Մանուկ Մելիքեան:
 Տեսարանն է ժառանգորդներու բնակարանը:



Պարտեզին մեկ անկիւնը՝ ուր կ'երեւին ձախեն Հ. Վարդանեան,
 Տօֆր. Ա. Մեզպուրեան, Վ. Խաւսալեան, Կ. Պիւսպաշեան
 Երկու սաներ եւ ոչխարներ



Գ Ա Ր Ա Կ Է Օ Զ Ե Ա Ն Ց Ի Ս Ա Ն Ե Ր Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ա Ս Պ Ա Ր Է Զ Ն Ե Ր ՈՒ Մ Է Զ

35 տարուան ընթացքին, հազարներու յանգած է թիւը այն ծնողազուրկ կամ անոր պատանիներուն, որոնք, իբր գիշերօթիկ սան, խնամք, ուսում ու կրթութիւն ստացած եւ Գարակէօզեան Որբանոցին մէջ: Ասոնցմէ 331 հոգի իրենց նախակրթութիւնը աւարտելով, հետեւած են զանազան ասպաւէզներու: Ոմանք իրենց ուսումը շարունակած են բարձրագոյն կրթարաններու մէջ: Շատեր նախընտրած են գործի ասպարէզը: Եղած են լուրջ ու գործունեայ պաշտօնեաներ, ինքնազուլիս արհեստաւորներ եւ առեւտրականներ՝ հոս թէ արտաւաճման:

Կարելի չէ թուումը քիչ մի առ մի այն բոլոր Գարակէօզեանցիներուն, որոնք, շրջանաւարտ թէ սան, կարեւոր դիրքեր գրաւած են հանրային կեանքի մէջ եւ ազգին համար պատուաբեր անհատներ եղած: Կը բաւականանք հոս յիշատակել անոնցմէ մէկ քանին:

Տ. Ղևոնդ Եպսկ. Չեպեկեան. — Աշխարհական անունն է Ժիրայր: Պատասխանելով մեր դիմումին, առանձին նամակով մը ան իր ուսանողական կեանքի յիշատակներէն յատկանշական դրուագ մը գրի առած է, սա տողերով.

«Մանկութենէս բռնն փափաք ունէի կուսակրօն եկեղեցականութեան: Այդ փափաքը չէր մարած Գարակէօզեան որբանո-



Տ. ՂԵՒՈՆԴ ԵՊՍ. ՉԷՊԷԿԵԱՆ

ցին մէջ: Տնօրէն Արամ Նիկողոսեան եւ ուսուցիչներ տեղեակ էին կրօնական զգացումներուս:

Զմբան ընթացքին ուսուցիչ Պ. Մարտիրոս Զարխուկեանի (այս Տ. Զգօն քհնյ.) առաջնորդութեամբ, այն կիրակիները, երբ եկեղեցի չէինք կրնար երթալ, դասարաններէն մէկուն մէջ սեղան մը կը կանգնէինք ու կը զարդարէինք Ա. Աստուածածնայ նկարով, խաչերով ու մոմերով: Պատարագ կը մատուցանէինք իբրեւ շուրջառ ունենալով վերմակի երեսներ ու զգեստի մասեր, մեր կողմէ պատրաստուած թագեր, սաղաւարտներ, եւլն.: Պատարագիչը միշտ ես էի:

Ուսուցիչներ եւ ուսանողներ լրջութեամբ ներկայ կ'ըլլային եկեղեցական արարողութեանց:

Մեծ Պահոց շրջանին, խումբ մը կրօնասէր փոքրիկներով ներկայացանք տնօրէնութեան եւ խնդրեցինք որ մեզի՝ բացառաբար, մէկ շաբթուան համար պահոց կերակուրներ պատրաստել տայ: Տնօրէնը սիրով ընդունեց մեր խնդրանքը. շաբաթ մը պահեցողութիւն կատարեցինք եւ հաղոյդուեցանք Ֆէրիքէօյի Ա. Վարդանանց եկեղեցիին մէջ, Տ. Զարմայր քհնյ. (այժմ Մ. Վրդ.) կէզիւրեանի ծնոամբ:»

Տ. Աւետիկ Եպիսկոպոս. Զէպէան այս առթիւ զրկած է նաև իր հետեւեալ ինքնակենսագրութիւնը.

«Ծնած եմ Առաքազար 1912ին: Նախնական կրթութիւնս ստացած եմ ծննդավայրիս ազգ. վարժարանին մէջ: 1920—25 աշակերտած եմ Գարակէօզեան ազգ. որբանոցին: Կ'օնի ուսուցիչս եղած է Տ. Դէրբգ Արքեպկ. Արսլանեան (այն ատեն Մ. Վրդ.): Իսկ ատեն մը ընդհ. ազգաց պատմութեան դասախօս ունեցած ենք Բրօք. Աբրահամ Տ. Յակոբեանը: Աշակերտած եմ նաև Վիեննական Մխիթարեան վարժարանին: Անդամակցած եմ Պէյօղլուի Դպրաց Դասուն:

1932ին ընդունուած եմ Անթիլիասի Դպրեվանքը եւ ուսումնական ծրագիրը աւարտելէ վերջ, 1935ին սարկաւազ ծնունդըրուած եմ վերատեսուչ Շահէ Սրբազանէ:

1937 Աբեղայ ծեռնադրուած եմ Կաթող. ընդհ. փոխանորդ Պետրոս Ա.է (այս Կաթողիկոս): 1938ին իրմէ վարդապետական գաւազանի իշխանութիւն ստացած եմ: Իսկ 1941ին լանջախաչ եւ մանիշակագոյն ծաղկեայ փիլոն ստացած եմ Կաթ. Տեղապահ Կարօեան Արք.է:

1944—46 Դպրեվանքի տեսուչ նշանակուած եմ եւ վեհ. Հայ-

րապետէն ծայրագոյն վարդապետութեան աստիճան ստացած: Մինչև Կիպրոսի Թեմական պաշտօնաւարութիւնս, Կաթողիկոսարանի եւ Պէյրութի մէջ վարած եւ ուսուցչութիւն, պատուակալ քարոզչութիւն (Ս. Բառասուն Մանկանց եկեղեցին) եւ Լուսարարապետութիւն:

Անդամակցած եւ վանական Տնօրէն ժողովներու: Վարած եւ Պէյրութի Կրօնական ժողովին ատենապետութիւնը՝ ու նաեւ անդամակցած՝ Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօնական ժողովին:

1946 Հոկտ.ին Կիպրոսի Թեմական ժողովի միաձայն որոշումով, նշանակուած եւ Կաթող. փոխանորդ Կիպրոսի լինմին:

1947 Փետր. 16ին Եպիսկոպոս ձեռնադրուած եւ Թեմական ժողովի վկայականով Շնորհ. Գարեգին Վեհափառէն:»

Արմենակ Նարոյեան.— Եղբորորդին է Նարոյեան Պատրիար-



ԱՐՄԵՆԱԿ ՆԱՐՈՅԵԱՆ



ԵՐՈՒԱՆԴ ԱՐՍԷՆԵԱՆ

քին: Որքանոցին ընթացքը աւարտելէ յետոյ իր ուսումը կատարելագործելու համար մեկնած է ու կերկայիս պետական կարեւոր պաշտօնատար մըն է Երևանի մէջ:

ՄուրաՍ Արօնսն.— Շոգենասային գործակալ: Մեծապէս սատարած է որբախնամ գործին: Իր բնածին ու շիմութեան ու նախածնունդութեան շնորհիւ օգտակար ծառայութիւններ ունեցած է մեր հանրային կեանքին մէջ:

Երուսնդ Արսլանեան.— Առաջնակարգ լուսանկարիչ եւ հիմնադիր ու տէր «Արթիսթիք» լուսանկարչատան: 1924ին Որբա-

նոցին ընթացքը աւարտելէ ետք յաջորդաբար աշխատած է Վա-
յէնպէրկի մօտ եւ «Լիւմիէռ» հաստատութեան մէջ: 1930ին
մտած է «Ռօթօ Սիւրէյա» ուր կատարելագործած է իր արուես-
տը գերման վարպետներու ձեռքի տակ: Յետոյ ընկերովի հիմ-
նած է «Սարայ» լուսանկարչատունը: Իր յաջողագոյն լուսա-
նկարներէն 30—40ը մաս կը կազմեն Գօտաք անգլ. ընկերու-
թեան ալպօմին: Ինչ ետրքի ցուցահանդէսին իր մէկ դիմանկարը
400 տոլարի պարգև մը շահած է:

Աճառեարոյժ Բիւզզանյ Շումշեան.— Որբանոցի նախկին սա-
ներէն: Պէզզզեան վարժարանի ընթացքը
աւարտելէ ետք հետեւած է Համալսարա-
նի ատամնարուժութեան նիւղին: Եղած է
նաեւ ուսուցիչ եւ հիմնադիր ու հրատա-
րակութեանց տնօրէն մէկէ աւելի օրա-
թերթերու եւ «Զարթօնք» ամսագրին:

Տֆր. Ժ. Յովնանեան Աբգարեան.— Շրջա-
նաւարտ ըլլալէ յետոյ յաճախած է Կեդ-
րոնական վարժարան, որուն ընթացքն
եւս յաջողութեամբ աւարտելով հետե-
ւած է բժշկական ասպարէզին: Վկայուած
է Իսթանպուլի բժշկ. համալսարանէն:



Բ. ՇՍՄՄԵԱՆ



ՏՕՐԹ. Ժ. Յ. ԱՂԳՅԱՆԵԱՆ



ՏՕՐԹ. Մ. ԱՂԳՅԱՆԵԱՆ

Տօֆր. Միկոս Աբգարեան.— Եղբայրը նախորդին: Գարակէօզ.



Եսառ ԷՆ՝ (ձախեն աջ) Խ. Ներսիսյան, Յ. Քելլան (ճախկյն սեռէն), Վ. Անրէտտան եւ Յ. Ճամկոտան
Ոսթի ԷՆ՝ (ձախեն) Ս. Կալայեան, Գ. Քոյան, Ա. Յելոյան, Տ. Իսկիլեան, Ռ. Անէմեան, Ե. Գասպարեան,
Ե. Տ. Ասրմունեան, Մ. Ճամկոտան եւ Կ. Ճամկոտան, առկնն ալ Բաշկազբեակ, 1948

եանէ ընթացաւարտ: Կեդրոնականի շրջանը լրացուցած, բժշկ
վկայուած Խոթանպուլի Բժշկ. Համալսարանէն 1948ին եղբորը
հետ:

Ներկայիս Ֆրանսայի մէջ կան հոյլ մը իսպիկին Գարակէօզ-



Հայրապէս Հայրապէսեան



Դաւիթ Պաշեան

եանցիներ, որոնք իսպիկին տնօրէն Յովնաննէս Թեյեանի (այժմ
ադամանդի վաճառական) եւ իրենց շրջանի ուսուցիչներուն հետ



Եղիա Ֆերիասեան



Նորայր Մարգարեան

խմբանկար մը քաշած են ու դրկած՝ սոյն Յուշամատենին
համար:

Այդ ուսուցիչներն են նախկին սան Յակոբ Ժամկոչեան (առևտրական), Խարսով Ներսեսեան (հայերէնի դասախօս) եւ Վազգէն Անդրեասեան (սկառուտական խմբագրատեղի եւ այժմ օգնական-յին հարտարագէտ, պետական պաշտօնեայ):

Իսկ սաներն են՝ Տիրուհի Իսկիկեան (Ֆրանս. պետական կարեւոր պաշտօնեայ), Ուշանիկ Անեւեան (ադամանդի վաճառական), Առաքել Յեւեան (կօշիկի գործարանատէր), Գրիգոր Թօլեան (սակարանի գործակալ), Ոսկիսն Գալստյանեան (նպարեղէնի առևտրական), Երզնէնի Գասպարեան (հանդերձեղէնի առևտրական), Մասիս Ժամկոչեան (նպարեղէնի առևտրական), Կիրակոս Ժամկոչեան (ինքնաշարժի գործարանի մը հնամեայ պաշտօնեայ) եւ Եղիշէ Տ. Սողոմոնեան (արուեստի ներկարար):

Գեռ նոր Բարիզի Գարակէօզեան սաները, Թէլեանի հետ, իբր նուէր դրկած են Larousse Encyclopédieի վերջին տպագրութիւնը եօթը հատոր, փառակազմ. հաստատութեան անհրաժեշտ եւ կարեւոր մէկ պակասը լրացնող, թանկագին նուիրատուութիւն մը որուն համար Որբանոցի Խնամակալութիւնը, ուսուցչութեան եւ աշակերտութեան կողմէ սրտագին շնորհակալութիւն կը յայտնէ:

* * *

Ներողութիւն կը խնդրուի նախկին սաներէ, կամքէ անկախ պատճառներով, եթէ կարելի չնկառ ըստ արժանւոյն զիրենք ներկայացնել կենսագրական յօթերով:

ԳԱՐԱԿԵՕՋԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Որրանոցի Խնամակալութիւնը 1948—1949 տարեշրջանին ապահովեց զործակցութիւնը նոր անդամներու, որով իր արդի կազմն է հետեւեալը. —

- Ասեճապետ Տիար Տօքր. Ա. Ե. Մեզպուրճեան
- Ասեճադպիր » Վ. Կեան Խլեսալերճեան
- Գ. Թանայետ » Հայկազ վարդապետեան
- Անդամք » Մարկարիոս Օհանեան
- » Սարգիս Բեմեղեան
- » Գրիգոր Սարափեան
- » Թազուր Անուկ
- » Կարպիս Անտոնեան

— Խնամակալութիւնը վերակազմաց նաեւ Տիկնանց Օժանդակ մարմինը հետեւեալ կերպով. —

- Տիկին Վեհանոյ Յ. Կեփրեկեան (Ասեճապետ)
- Տիկին Անժէլ Արափեան (Ասեճադպիր)
- Օր. Ալիս Մեզպուրճեան (Գանձապետ)
- Տիկին Արափի Անտոնեան (Հաշուակալ)
- Տիկին Ալին Բաֆեհեք (Անդամ)
- Օր. Անահիտ Արգարեան (Անդամ)
- Օր. Ժիւլիէն Պազիրկեանեան (Անդամ)
- Տիկին Նանս Սեփերեան (Անդամ)

Տարուան մը պաշտօնավարութենէ ետք Տիար Մ. Յ. Թորոսեան հրաժարեցաւ եւ անոր տեղ տնօրէնութեան պաշտօնին կոչուեցաւ զարծեալ Տիար Յարութիւն Սարայտարեան (Դալտըլը):

1948—49ի աշակերտութեան թիւն էր 132 (Ա. դասարան 34, Բ. 35, Գ. 25, Դ. 28 եւ Ե. 10):

Իսկ ուսուցչական կազմը՝ նոր փոփոխութիւններով հետեւեալը. — Թուրքերէնի ուսուցիչներ՝ Ինչալ Սամեէլի (Ա. Բ. Գ. կարգերու), Մուհսինէ Օսմայ (Դ.), Նիհատ Արտոր (Ե. կարգ), Բէհա Վանի (Ե.): Ներքին մնայուն ուսուցչուհիներ՝ Տիկ. Անժէլ Պաղտատիեան (Ա. կարգ), Տիկ. Երանուհի Օնպաշեան (Այսէլ)



Տիկնանց Օխանյակ Յանձնսխումբը

*Նստած՝ ձախեկ՝ Օր. Մեղպուրեան, Տիկ. Կեփրիկեան, Տիկ. Աննունեան
Ոսֆի վրայ՝ Օր. Պազիրկեանեան, Տիկ. Արամեան, Տիկ. Իսիկեան,
Տիկ. Աեֆերեան, Օր. Աբգարեան:*

*(Բ.), Օր. Շաքէ Եանըզեան (Գ.), Օր. Հոփիսիմէ Գանճուրա (Գ. եւ
Ե.): Այցելուներ՝ Բրոֆ. Միւհէնտըսեան, Արթո Գալբաքեան,
Յակոբ Մոմճեան, Ժիրայր Սերոբեան եւ Օր. Վերժուհի Մոմ-
ճեան:*

*Ուսուցչական մարմնին մէջ ամէնէն երկարամեայ պաշտո-
նավարութիւնը ունեցողն է Տիկին
Անժէլ Պաղտատեան, որ իբր փորձ
դաստիարակուհի անբունդներ հաս-
ցուցած է եւ այնքան զնահատելի
նուիրումով մը կը շարունակէ իր
ծառայութիւնը անհուն համբերա-
տարութեամբ եւ համեստութեամբ:*



*Խնամակալութիւնը, արուեստա-
կիցներ, ազգականներ եւ համակիր-
ներ կը խորհին տօնել իր ուսուց-
չական ասպարէզին յոբելեանը:*

*Որբանոցին մատակարարական,
վարչական, կալուածական եւ հաշ-
ուական մարզերու մէջ խնամակալ*

Տիկ. Անժէլ Պաղտատեան

Տիար Մարկարիոս Օհանեանի բացառիկ աշխատանքներն ու անծ'ուէր ծառայութիւնները գոհունակութեամբ պէտք է արծանագրել: Ինչպէս նաեւ իր միջոցներով կատարած անհրաժեշտ մեծածախս նորոգութիւնները:

Նոյնպէս եկող զացող Խնամակալութիւն'ներու անվերապահ գ'ահատանքին արժանացած է Պ. Կարպիս Պինպաշեան, իբր մատակարար եւ հաշուակալ շուրջ 30 տարիներու իր օչտաշատ գործունէութիւնով: Իսկ իբր այցելու, համարակալութիւնը կը վարէ Պ. Ալիքսան Տէր Բարթողեան:

Որբանոցին տարեկան հասոյթին նշանակելի մէկ գլուխը կը կազմէ «Պատի Օրացոյց»ի վաճառումէն զոյացած գումարը: Գեղարուեստական արտաբիւտով լոյս տեսնող այս հրատարակութիւնը մեծ ընդունելութիւն գտած է ժողովուրդին մէջ:

Կրթական Տնօրէնութիւնը՝ միայն թուրք ուսուցիչներու թուշակին իբր յաւելում, վերջին 3 տարուան ընթացքին 30 առ հարիւր յատկացում մը ըրած է: Իսթանպուլի կուսակալութիւնն եւս 1930էն ի վեր տարեկան 150-200 թըրքական ոսկիի նիւթական օժանդակութեամբ մը սատարած է որբանոցին: Իսկ Խնամակալութեան կողմէ կատարուած դիմումին վրայ, ուրիշ կրթական հաստատութիւններու կարգին, Կարմիր Մահիկն եւս անցեալ տարուընէ սկսեալ կը շարունակէ ձրիօրէն հաստատութեան պարբերաբար տրամադրել պարէն (շաբար, բրինձ, ձիթապտուղ, օճառ, սոխ, եւլն.):



Կարպիս Պինպաշեան

*
* *

Գարակէօզեանի սաները, ամէն տարի, Խաչվերացի Մեռելոցին առթիւ Շիշլիի Ազգ. Իերեզմանատունը երթալով, հաւա-



Գարակեօզեան Որբանոցի Պատի Օրացոյցներէն զեղեցիկ նմոյշ մը

քորար կը մասնակցին բարերար Տիգրան Գարակեօզեանի շիրիմին վրայ գերեզմանօրհնէնքին եւ հոգեհանգստեան պաշտամունքին, որուն ներկայ կը գտնուին Խնամակալութիւնը, տնօրէնը, ուսուցչական կազմը, պաշտօնէութիւն, հաստատութեան բարեկամներն ու համակիրներ: Այդ օրը կարելի է կոչել հաստատութեան սաներուն երախտագիտական հարկի մատուցման օր, ուր Հոգեհանգիստէն ետք այդ յուզիչ արարողութեան ներկայ գտնուողները հաւաքաբար որբանոց կ'այցելեն եւ այնտեղ եւս յարգանքի ու մեծարանքի արտայայտութիւններ կ'ըլլան հիմնադիրին եւ Գարակեօզեան բարեհամբաւ գերդաստանի բոլոր ննջեցեալներու յիշատակին:

ՎԵՐՁԱՑՆԵԼՈՒ ԱՏԵՆ

Բարեգործութեան այս կորույր, որ 35 տարի է ի վեր կանգուն կը մնայ Շիւրիի բարձունքին վրայ, տարուէ տարի Իսթանպուլահայ եւ գաւառաբնակ ցիրուցան նոր սերունդին բախտագուրի մէկ մասը ի մի խմբով, գանձեմ խնամով, կրթող ու դաստիարակող եւ գուրգուրոս մօր մը պէս անոնց թեւ ու քախչ տուող կրթական շիպար հաստատութեան մը համբար կը վայելէ այսօր մեր իրականութեան մէջ:

Առաջին անգամն է որ անոր, այս «որբերու ապարանք»ին եւ իր անցեալին նուիրուած հրատարակութիւն մը լոյս կ'ընծայուի, ցոյց տալու համար հաստատութեան, թէ նախախնամական ի՞նչ մեծ դեր կատարած է ան, ի՞նչ նիգեռ ու զոհողութիւններ ի սպաս դրուած են անոր վերելքին եւ եկող գացող Խնամակալութիւններն ի՞նչ օրինակելի անձնութիւններ ծառայած են ու ջանադիր գտնուած, որպէսզի բարեյիշատակ Տիգրան Գարակէօզեանի եւ իր բարեհամբար գերդաստանին այս նուիրական աւանդը անվար պահպանուի ու մնայ միշտ իր բարձրութեան վրայ:

Յասկապէս «Յուշամատեն» անունը տրուեցաւ պատմական այս երկասիրութեան, վասն զի անոր էջերուն վրայ ո՛չ միայն — զանազան շրջաններու մէջ — որբանոցին կեանքն ու ձեռք բերուած արդիւնք կը պատկերանան, այլեւ իրենց աչքասիրութեամբ ծանօթ Գարակէօզեան գերդաստանի հարազատներուն հանդէպ երախտագիտական զգացումներու արտայայտութեան պատկերներն մը կը ներկայանայ ու նաեւ քանկագին առիթ մը՝ որպէս զի սպառնական նօթերու անտիպ գանձարանէ մը լոյսին զան քրտահայ մտաւորական ընտանիքին նուիրական դեմքերու ինկնագիր յուշերը, իրենց մտէն ու արտէն արտաբերուած:

Կրթական եւ հանրամտեր այս հաստատութիւնը՝ իր 35 ամեակը արդէն բոլորած, այսօր անձնուէր սը գուրգուրոս ձեռքերու մէջ կը տարուակէ ապակաւարան ծառայել նորահաս սերունդին, լուսաւոր վերելքով մը դիմելով դեպի իր յիսնամեայ հանգրուանը:

Թ. Ա. Չ. Ա. Տ. Ա. Ն.



Յուշամատենը պատրաստող
Թ. Ազատեան



ՀԱՆ Հիմնարար գիտ. գրադ.



FL0030392

[18m.]

ЦЕНА

№
0533

Дружбу